Ինժեներաերկրաբանական հետազոտություններով վերին 30մ-ոց շերտի ընդհանուր բնութագիրը որոշելիս կարևոր դեր է պատկանում տարբեր տիպի շերտախմբերին: Ապարան համայնքի տարածքում դրանք բազմազան են: Լշենք առավել կարևորները՝ տալով դրանց կառուցվածքը և նրանց վրա սպասվելիք առավելագույն հորիզոնական արագացումների մեծությունը.

Ի-5₁, Ի-5₂, շերտախմբերը կազմված են 15 մետրից ավելի հզորությամբ ժայռային ապարներից (գրանոդիրոտ, պորֆիրիտ, բազալտ), իսկ Ի-5₃ նաև 1.5-2.5 մետր հզորությամբ մանրախմբից: Սրանք ըստ սեյսմիկ հատկությունների դասվում են առաջին կարգի գրունտների շարքը, որոնք նվազեցնում են ելակետային 0,30g արագացումը 0,8 գործակցով (ՀՀՇՆ-ՈՒ-6.02-2006.թ.): Հետևաբար, այս գրունտների վրա սպասվելիք առավելագույն հորիզոնական արագացումը կկազմի 0,24 g:

Ի-5₄, Ի-5₅, Ի-5₆, Ի-5₇, Ի-5₈, Ի-5₉, Ի-5₁₀, Ի-5₁₁, Ի-5₁₂, Ի-5₁₃, Ի-5₁₄, Ի-5₁₅, Ի-5₁₆, Ի-5₁₇, Ի-5₁₈-ից մինչև Ի-5₂₄ շերտախմբերում վերին 30 մետրանոց մասում գերակշռում են երրորդ կարգի գրունտները (հրաբխային ավազ, կավ, ավազ), որոնք 1,2 անգամ մեծացնում են ելակետային սեյսմիկ վտանգը՝ դարձնելով այն 0,36g:

Ի-5₁ և Ի-5₂ շերտախմբերը կազմված են հիմնականում ժայռային ապարներից, որոնք ըստ սեյսմիկ հատկության առաջին կարգի են: Սրանք նվազեցնում են ելակետային 0,30g արագացումը 0,8 գործակցով՝ դարձնելով վտանգի մակարդակը 0,24g: Այս տարածքները ունեն 15°-ից թեք ռելիեֆ, որը ըստ սեյսմակայուն

շինարարության գործող նորմերի ավելացում և վտանգը 1,2 անգամ, դարձնելով այն 0,29g: Այս տարածքներում շինարարության ժամանակ պահանջվում է սեյսմակայուն շինարարության նորմերի 5.4.3 կետի պահանջի իրականացում:

III-A₁, III-A₂, III-A₃ շերտահմքերը հիմնականում գտնվում են գետահովիտներում, ծորակներում, ժամանակավոր ջրհոսքերի տակ: Ապարները երկրորդ կարգի են, որոնք չեն փոխում 0,30g ելակետային արագացումը: Սակայն այս տարածքներում շինարարության ժամանակ պետք է կիրառվեն գործող նորմերի 5.4.1 կետի պահանջները:

III-A₆, III-A₂₃ շերտահմքերը կազմված են 10 մետրից ավելի հզորությամբ երրորդ կարգի գրունտներից, որոնք նստած են 10 մետրից ավելի հզորությամբ առաջին կարգի ժայռային գրունտների վրա: Ուստի սրանք վրա 0,30g ելակետային արագացումը չի փոխվում: Սակայն այս տարածքները իրենցից ներկայացնում են գետահովիտ, ծորակներ, որտեղ շինարարության իրականացնելիս պետք է կիրառվեն նորմերի 5.4.1 կետի պահանջները:

Ինչպես երևում է վերը շարադրվածից, Ապարն համայնից տարածքում, վերին 30մ երկրաբանական կտրվածքում հիմնականում գերակշռում են ըստ սեյսմիկ հատկությունների, առաջին և երրորդ կարգի գրունտները: Սակայն Ապարնում որոշ տարածում ունեն 15%-ից մեծ թեքությամբ լանջերը, որոնք դասվում են շինարարության համար անբարենպաստ տարածքների շարքին և ըստ գործող ՀՀ ՇՆ-ՈՒ-6.02-2006 նորմերի ավելացնում են սեյսմիկ վտանգի մակարդակը 1,2 անգամ: Մյուս, շինարարության համար անբարենպաստ հրապարակները, դրանք գետահովիտներ են, ծորակներ և ժամանակավոր ջրահոսքերի գոտիները: Անբարենպաստ տարածքներում շինարարություն իրականացնելիս պետք է կիրառվեն գործող նորմերի 5.4.1 և 5.4.3 կետերի պահանջները:

Աղյուսակ 2. Հիմնական գրունտների և շերտերի սեյսմիկ հատկությունները և դրանցից կախված սեյսմիկ վտանգի մակարդակի փոփոխության չափը

| | Տիպիկ գրունտային կտրվածքներ | Հգր. մ | V _s մ/վրկ | V _s մ/վրկ | P գր/սմ ² | V _s (միջ) մ/վրկ | V _s (միջ) մ/վրկ | P(միջ) գր/սմ ² | V _s P (ակուստ. կոշտ) | ΔI բալ. աճը | I ₀ ելակ. բա | I ₀ հաշվ. բալը | հաշվ. գործ K | հաշվ. արագ. gr | |
|----|--|-------------------|----------------------|----------------------|----------------------|----------------------------|----------------------------|---------------------------|---------------------------------|-------------|-------------------------|---------------------------|--------------|----------------|------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | |
| 1 | I-B ₂ Բազալտներ | b Q | 30 | 3200 | 1900 | 2,7 | 3200 | 1900 | 2,7 | 8640 | -0,8 | 8,5 | 7,7 | 1,0 | 0,22 |
| 2 | I-B ₅ 1) Խճային գրունտ | dp-Q ₁ | 3 | 1000 | 550 | 2.1 | 2700 | 1600 | 2.65 | 7155 | -0.6 | 8.5 | 7.9 | 1.0 | 0.22 |
| | 2) Բազալտներ | bQ | 27 | 3200 | 1900 | 2.7 | | | | | | | | | |
| 3 | I-B ₅ Դորֆիրիտներ | mPg ₂ | >15 | 2200 | 1300 | 2.7 | 2200 | 1300 | 2.7 | 5940 | -0.5 | 8.5 | 8 | 1.0 | 0.23 |
| 4 | 1) Կավային գրունտ | dp-Q ₂ | 2 | 600 | 350 | 1.9 | | | | | | | | | |
| | I-B ₆ 2) Բազալտներ | | 28 | 3200 | 1900 | 2.7 | 2480 | 1460 | 2.65 | 6570 | -0.6 | 8.5 | 7.9 | 1.0 | 0.22 |
| | | bQ | | | | | | | | | | | | | |
| 5. | I-B ₇ Հալաքարակալճային գրունտ | a-pQ | >11 | | | | | | | | | | | | |
| | | | | 1350 | 800 | 2.2 | 1350 | 800 | 2.2 | 2970 | 0 | 8.5 | 8.5 | 1.0 | 0.28 |
| 6 | I-B ₁₆ 1) Կավային գրունտ | dp-Q ₂ | 10 | 600 | 350 | 1.9 | | | | | | | | | |
| | 2) Հալաքար-կոպճային գրունտ | a-pQ | 10 | 1350 | 800 | 2.2 | 1200 | 700 | 2.18 | 2616 | 0.1 | 8.5 | 8.6 | 1.0 | 0.30 |

3.3. Հորիզոնական արագացումների որոշումը սեյսմահետախուզական տվյալներով (ակուստիկ կոշտությունների մեթոդ)

Այս մեթոդը համարվում է գլխավոր: Այդ պատճառով հաշվետվության մեջ մեծ տեղ է հատկացվել թե՛ դաշտային աշխատանքներին, և թե՛ արագացումների հաշվարկներին:

Դաշտային սեյսմահետախուզական աշխատանքների մեթոդիկան ու տեխնիկան

Ակուստիկ կոշտությունների մեթոդով արագացման փոփոխության գնահատման նպատակով առանձին կետերում կատարվել է սեյսմիկ գոնդալորում բեկված ալիքների մեթոդով (ԲԱՄ): Աշխատանքները կատարվել են «Տալգար» սեյսմահետախուզական կայանի օգնությամբ: Չափումների համար ընտրվել են հետևյալ պարամետրերը՝ պրոֆիլի երկարությունը՝ 90մ, սեյսմաընդունելիների միջև հեռավորությունը՝ 3մ: Յուրաքանչյուր կետում իրականացված է 30 տեղակայանք՝ հողոգրաֆի 90մ երկարություն ապահովելու համար, որը թույլ է տվել ուսումնասիրել կտրվածքը 30մ խորությամբ: Ալիքների հարուցումը իրականացվել է մուրճի հարվածի միջոցով:

Դաշտային նյութերի մեկնաբանումը

Դաշտային նյութերի մեկնաբանումը կատարվել է ըստ սեյսմաընդունելիների ու հարվածի կետերի միջև եղած հայտնի հեռավորության և ալիքների անցման չափված ժամանակի հոդոգրաֆների կառուցման ճանապարհով: Բեկված ալիքների հոդոգրաֆների մեկնաբանման արդյունք են հանդիսանում բեկող սահմանների տեղադրման խորության և ձևի, ինչպես նաև այդ սահմանների երկարությամբ ալիքների տարածման սահմանային արագությունների որոշումը:

Սահմանային արագությունները որոշվել են տարբերության հոդոգրաֆի եղանակով՝ ըստ $V_r = 2V_p a z$ առընչության, որտեղ V_r -ն արագությունն է՝ հաշվված տարբերության հոդոգրաֆի եղանակով:

Ակուստիկ կոշտությունների մեթոդով ուժգնության փոփոխության որոշումը

Բալականության և արագացումների փոփոխությունը, կախված գրունտային պայմաններից, հիմնականում որոշվում է գրունտային շերտի հզորությամբ և նրա ապարների ֆիզիկամեխանիկական ու առաձգական հատկություններով:

Կառուցների հիմնատակ հանդիպացող ապարների առաձգական հատկություններն էականորեն որոշում են կառուցների վարքը սեյսմիկական տատանումների դեպքում: Դրա համար կառուցների սեյսմակայունության վրա գրունտների ազդեցության ճշգրիտ հաշվառման համար անհրաժեշտ է գնահատել կառուցների հիմնատակը կազմող ապարների հատկությունները:

Ալիքների չափված արագությունների ու միջավայրի ապարների խտության մեծության միջև գոյություն ունեցող կապը թույլ է տալիս ստանալ երկրաշարժի ուժգնության փոփոխությունը հետևյալ անալիտիկ արտահայտությամբ.

$$\Delta I_1 = 1,67 [I_0(v_0 \rho_0) - I_0(v_n \rho_n)]$$

որտեղ V_p -ն միջավայրի ակուստիկ կոշտությունն է (խտության և երկայնական կամ լայնական ալիքների տարածման արագության արտադրյալ)

Այս բանաձևը տալիս է բալականության աճը $V_n P_n$ պարամետրերով բնութագրվող գրունտի վրա՝ $V_n P_n$ ակուստիկ կոշտությամբ էտայոնային գրունտի համեմատությամբ: Ըստ այս բանաձևի որոշվում է բալականության աճը ոչ քրահաճեցված տեղամասերում: Ինչպես արդեն նշել ենք որպես էտայոնային գրունտ ընտրվել էր I-B₅ շերտը, որը կազմված է 11մ-ից ավելի հզորությամբ ճալաքար-կոպճային կավի ապարներից, որոնք խտությունը կազմում է 2,2 տ/մ³: Դաշտային չափումներով ալիքների արագություններն են՝ $V_p = 1350$ մ/վրկ, $V_s = 800$ մ/վրկ: Այս գրունտը ըստ սեյսմիկ հատկությունների դասվում է երկրորդ կարգի գրունտների շարքը, որը ելակետային հորիզոնական արագացումը ըստ ՀՀ սեյսմակայուն շինարարության նորմերի (0.30g), չի փոխում: Հաշվարկները արդյունքները բերված են աղյուսակ 3-ում:

Հաշվարկման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ գրունտներից կախված սեյսմիկական ինտենսիվության աճի արժեքները բավորով, Ապարն համայնի տարածքում փոփոխվում են - 0,8 + + 0,5 սահմաններում:

Երկայնական ալիքների տարածման միջին արագությունների ընդհանրացված արժեքները կտրվածքի վերին մասում գրունտների հիմնական տարատեսակների համար, հետազոտված բոլոր տեղամասերում բերված են աղյուսակ 3-ում, որտեղ տրվում են նաև բալականության աճի հաշվարկի արդյունքները՝ գրունտների ակուստիկ կոշտությունների համեմատության նպատակով: Համակարգային ծրագրով նախ որոշվել է հորիզոնական արագացման փոփոխության K գործակիցը, ապա նաև արագացման մեծությունը, ելակետային 0.30g արագացման հաշվառումով (աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Սեյսմիկ գոնդալորման տվյալներով կետերում արագությունների արժեքները և սպասվելիք առավելագույն հորիզոնական արագացման արժեքները ըստ հաշվարկների

| ՍԶ կետ | I-ին շերտի ար- նը | II շերտի ար- նը | I-ին շերտի խտ- նը | II-ին շերտի խտ- նը | I-ին շերտի խտ- նը | II շերտի խտ- նը | միջ. ար- նը | միջ. խտ- նը | խտնե. փոփ- նը | խտնե- նը | հաշվ. ինտ- նը | հաշվ. գործ | հաշվ. արագաց |
|--------|-------------------|-----------------|-------------------|--------------------|-------------------|-----------------|-------------|-------------|---------------|----------|---------------|------------|--------------|
| N | V1 | V2 | r1 | r2 | h1 | h2 | Vcr | Rcr | ΔI | I0 | IR | K | Δgr |
| 1 | 1000 | 3200 | 2.1 | 2.7 | 2.5 | 27.5 | 2704 | 2.65 | -0.6 | 8.5 | 7.9 | 1.61 | 0.22 |
| 2 | 600 | 3200 | 1.9 | 2.7 | 2 | 28 | 2483 | 2.65 | -0.6 | 8.5 | 7.9 | 1.61 | 0.22 |
| 3 | 1000 | 3200 | 2.1 | 2.7 | 4 | 26 | 2474 | 2.62 | -0.6 | 8.5 | 7.9 | 1.61 | 0.23 |
| 4 | 3200 | 100 | 2.7 | 1 | 30 | 0 | 3200 | 2.70 | -0.8 | 8.5 | 7.7 | 1.64 | 0.22 |
| 5 | 1300 | 100 | 2.2 | 1 | 30 | 0 | 1300 | 2.20 | 0.0 | 8.5 | 8.5 | 1.49 | 0.28 |
| 6 | 600 | 2200 | 1.9 | 2.7 | 11 | 19 | 1112 | 2.41 | 0.1 | 8.5 | 8.6 | 1.47 | 0.30 |
| 7 | 600 | 2200 | 1.9 | 2.7 | 8 | 22 | 1286 | 2.49 | -0.1 | 8.5 | 8.4 | 1.51 | 0.26 |
| 8 | 600 | 1300 | 1.9 | 2.2 | 2 | 28 | 1206 | 2.18 | 0.1 | 8.5 | 8.6 | 1.47 | 0.30 |
| 9 | 1300 | 100 | 1.2 | 1 | 30 | 0 | 1300 | 1.20 | 0.5 | 8.5 | 9.0 | 1.39 | 0.39 |
| 10 | 700 | 2200 | 1.6 | 2.7 | 14 | 16 | 1027 | 2.11 | 0.2 | 8.5 | 8.7 | 1.45 | 0.32 |
| 11 | 700 | 2200 | 1.6 | 2.7 | 17 | 13 | 994 | 2.08 | 0.3 | 8.5 | 8.8 | 1.44 | 0.34 |
| 12 | 3200 | 100 | 2.7 | 1 | 30 | 0 | 3200 | 2.70 | -0.8 | 8.5 | 7.7 | 1.64 | 0.16 |
| 13 | 800 | 3200 | 2 | 2.7 | 16 | 16 | 1200 | 2.51 | 0.0 | 8.5 | 8.5 | 1.49 | 0.28 |
| 14 | 600 | 1350 | 1.9 | 2.2 | 6 | 24 | 1080 | 2.14 | 0.2 | 8.5 | 8.7 | 1.45 | 0.32 |
| 15 | 800 | 3200 | 2 | 2.7 | 3.5 | 26.5 | 2370 | 2.62 | -0.5 | 8.5 | 8.0 | 1.58 | 0.20 |
| 16 | 3200 | 100 | 2.7 | 1 | 30 | 0 | 3200 | 2.70 | -0.8 | 8.5 | 7.7 | 1.64 | 0.22 |
| 17 | 2200 | 100 | 2.7 | 1 | 30 | 0 | 2200 | 2.70 | -0.5 | 8.5 | 8.0 | 1.58 | 0.20 |
| 18 | 3200 | 100 | 2.7 | 1 | 30 | 0 | 3200 | 2.70 | -0.8 | 8.5 | 7.7 | 1.64 | 0.16 |
| 19 | 600 | 1350 | 1.9 | 2.2 | 5 | 25 | 1117 | 2.15 | 0.2 | 8.5 | 8.7 | 1.45 | 0.32 |
| 20 | 600 | 3200 | 1.9 | 2.7 | 5 | 25 | 1858 | 2.57 | -0.2 | 8.5 | 8.2 | 1.54 | 0.23 |
| 21 | 1300 | 100 | 2.2 | 1 | 30 | 0 | 1300 | 2.20 | 0.0 | 8.5 | 8.5 | 1.49 | 0.28 |
| 22 | 600 | 2200 | 1.9 | 2.7 | 4 | 26 | 1623 | 2.59 | -0.3 | 8.5 | 8.2 | 1.54 | 0.23 |

| | | | | | | | | | | | | | |
|----|------|------|-----|-----|-----|------|------|------|------|-----|-----|------|------|
| 23 | 600 | 2200 | 1.9 | 2.7 | 6 | 24 | 1435 | 2.54 | -0.1 | 8.5 | 8.4 | 1.51 | 0.26 |
| 24 | 600 | 2200 | 1.9 | 2.7 | 3 | 27 | 1737 | 2.62 | -0.3 | 8.5 | 8.2 | 1.54 | 0.23 |
| 25 | 600 | 2200 | 1.9 | 2.7 | 4 | 26 | 1623 | 2.59 | -0.3 | 8.5 | 8.2 | 1.54 | 0.23 |
| 26 | 500 | 2200 | 1.8 | 2.7 | 16 | 14 | 782 | 2.22 | 0.4 | 8.5 | 8.9 | 1.41 | 0.37 |
| 27 | 500 | 2200 | 1.8 | 2.7 | 15 | 15 | 815 | 2.25 | 0.3 | 8.5 | 8.8 | 1.43 | 0.35 |
| 28 | 500 | 2200 | 1.8 | 2.7 | 14 | 15 | 862 | 2.19 | 0.3 | 8.5 | 8.8 | 1.43 | 0.35 |
| 29 | 500 | 1350 | 1.8 | 2.2 | 14 | 16 | 753 | 2.01 | 0.5 | 8.5 | 9.0 | 1.39 | 0.40 |
| 30 | 600 | 1300 | 1.9 | 2.2 | 2.5 | 27.5 | 1185 | 2.18 | 0.1 | 8.5 | 8.6 | 1.47 | 0.30 |
| 31 | 800 | 3200 | 2 | 2.7 | 15 | 15 | 1280 | 2.35 | 0.0 | 8.5 | 8.5 | 1.49 | 0.28 |
| 32 | 800 | 3200 | 2 | 2.7 | 14 | 16 | 1333 | 2.37 | 0.0 | 8.5 | 8.5 | 1.49 | 0.28 |
| 33 | 700 | 2200 | 1.6 | 2.7 | 17 | 13 | 994 | 2.08 | 0.3 | 8.5 | 8.8 | 1.43 | 0.34 |
| 34 | 3200 | 100 | 2.7 | 1 | 30 | 0 | 3200 | 2.70 | -0.8 | 8.5 | 7.7 | 1.64 | 0.22 |
| 35 | 900 | 1350 | 1.9 | 2.2 | 16 | 14 | 1066 | 2.04 | 0.2 | 8.5 | 8.7 | 1.45 | 0.32 |
| 36 | 800 | 3200 | 2 | 2.7 | 9 | 21 | 1684 | 2.49 | -0.3 | 8.5 | 8.2 | 1.54 | 0.23 |
| 37 | 800 | 3200 | 2 | 2.7 | 16 | 14 | 1231 | 2.33 | 0.0 | 8.5 | 8.5 | 1.49 | 0.28 |
| 38 | 600 | 1300 | 1.9 | 2.2 | 2 | 28 | 1206 | 2.18 | 0.1 | 8.5 | 8.6 | 1.47 | 0.30 |
| 39 | 1300 | 100 | 2.2 | 1 | 30 | 0 | 1300 | 2.20 | 0.0 | 8.5 | 8.5 | 1.49 | 0.28 |
| 40 | 1300 | 100 | 2.2 | 1 | 30 | 0 | 1300 | 2.20 | 0.0 | 8.5 | 8.5 | 1.49 | 0.28 |
| 41 | 700 | 3200 | 1.8 | 2.7 | 15 | 15 | 1149 | 2.25 | 0.1 | 8.5 | 8.6 | 1.47 | 0.30 |
| 42 | 600 | 1350 | 1.9 | 2.2 | 6 | 24 | 1080 | 2.14 | 0.2 | 8.5 | 8.7 | 1.45 | 0.32 |
| 43 | 800 | 3200 | 2 | 2.7 | 8 | 22 | 1778 | 2.51 | -0.3 | 8.5 | 8.2 | 1.54 | 0.23 |
| 44 | 3200 | 100 | 2.7 | 1 | 30 | 0 | 3200 | 2.70 | -0.8 | 8.5 | 7.7 | 1.64 | 0.22 |
| 45 | 3200 | 100 | 2.7 | 1 | 30 | 0 | 3200 | 2.70 | -0.8 | 8.5 | 7.7 | 1.64 | 0.22 |
| 46 | 600 | 1350 | 1.9 | 2.2 | 4 | 26 | 1157 | 2.16 | 0.1 | 8.5 | 8.6 | 1.47 | 0.30 |
| 47 | 600 | 1350 | 1.9 | 2.2 | 5 | 25 | 1117 | 2.15 | 0.2 | 8.5 | 8.7 | 1.45 | 0.32 |
| 48 | 600 | 1350 | 1.9 | 2.2 | 4.5 | 25.5 | 1137 | 2.16 | 0.1 | 8.5 | 8.6 | 1.47 | 0.30 |
| 49 | 1300 | 100 | 2.2 | 1 | 30 | 0 | 1300 | 2.20 | 0.0 | 8.5 | 8.5 | 1.49 | 0.28 |
| 50 | 600 | 3200 | 1.9 | 2.2 | 3 | 27 | 2233 | 2.17 | -0.4 | 8.5 | 8.1 | 1.66 | 0.17 |
| 51 | 600 | 1350 | 1.9 | 2.2 | 6 | 24.5 | 1066 | 2.18 | 0.2 | 8.5 | 8.7 | 1.45 | 0.32 |
| 52 | 600 | 1350 | 1.9 | 2.2 | 5 | 25 | 1117 | 2.15 | 0.2 | 8.5 | 8.7 | 1.45 | 0.32 |
| 53 | 3200 | 100 | 2.7 | 1 | 30 | 0 | 3200 | 2.70 | -0.8 | 8.5 | 7.7 | 1.64 | 0.22 |
| 54 | 600 | 1350 | 1.9 | 2.2 | 6 | 24 | 1080 | 2.14 | 0.2 | 8.5 | 8.7 | 1.45 | 0.32 |
| 55 | 600 | 3200 | 1.9 | 2.2 | 4 | 26 | 2028 | 2.59 | -0.4 | 8.5 | 8.1 | 1.66 | 0.23 |
| 56 | 800 | 3200 | 2 | 2.7 | 3 | 27 | 2462 | 2.63 | -0.6 | 8.5 | 7.9 | 1.59 | 0.19 |
| 57 | 600 | 3200 | 1.9 | 2.2 | 5 | 25 | 1858 | 2.57 | -0.3 | 8.5 | 8.2 | 1.54 | 0.23 |
| 58 | 600 | 3200 | 1.9 | 2.2 | 6 | 24 | 1714 | 2.54 | -0.3 | 8.5 | 8.2 | 1.54 | 0.23 |
| 59 | 600 | 3200 | 1.9 | 2.2 | 7 | 23 | 1591 | 2.51 | -0.2 | 8.5 | 8.3 | 1.53 | 0.24 |
| 60 | 900 | 3200 | 2.1 | 2.7 | 2 | 28 | 2734 | 2.66 | -0.6 | 8.5 | 7.9 | 1.59 | 0.19 |
| 61 | 3200 | 100 | 2.7 | 1 | 30 | 0 | 3200 | 2.70 | -0.8 | 8.5 | 7.7 | 1.64 | 0.22 |

3.4. Ապավելիք առավելագույն հորիզոնական արագացումների գոտիների սահմանների և վտանգի մակարդակի որոշումը:

Քաղաքի տարածքի սպավելիք ՍՄԸ քարտեզի հիմնական պարամետրերը՝ սեյսմիկ գոտիների սահմանները և սեյսմիկ վտանգի մակարդակը արտահայտված գրունտների առավելագույն հորիզոնական արագացումների արժեքներով, որոշվել են տվյալների համալիրի հիման վրա՝ երկու փուլով: Առաջին հորոշվել են սեյսմիկ գոտիների սահմանները, որի համար օգտագործվել են փաստացի և հաշվարկային նյութերի երկու խմբեր՝ մինչև 30մ խորությամբ երկրաբանական կտրվածքում գոտիների լիթոլոգիական ու ֆիզիկամեխանիկական հատկությունների եական փոփոխությունները և գրունտների ակուստիկ կոշտությունների կտրուկ փոփոխությունները նույն կտրվածքում և կետերում:

Պետք է նշել, որ այս երկու ճանապարհներով որոշված սեյսմիկ գոտիների սահմանների միջև եական տարբերություններ չկան, դրանք հիմնականում համընկնում են: Կարծիք կա, որ սեյսմիկ գոտիների սահմանները պետք է որոշել միայն ակուստիկ կոշտությունների միջոցով, դա մտապահարկաբան լույսն է ինչ ստացված արագացումների իզոգոների միջոցով: Սա բերում է անճշտությունների, քանի որ երկրի մակերեսի ակտիվ երկրաբանական պրոցեսները կարող են եականորեն չազդել արագացումների արժեքի վրա, բայց այդ տարածքները դասվեն շինարարության համար անբարենպաստների շարքին: Ուստի, սահմանների որոշումը համալիր մոնտեժմամբ՝ գերադասելի է:

Գործող ՀՀ շինարարական նորմերով, լանջերի 15°-ից մեծ թեքության ազդեցությունը սեյսմիկ ուժեղության փոփոխության վրա, քանակական տեսակետից, արդեն սահմանված է, որը ավելացնում է եականտալի արագացումը 1,2 անգամ: Շինարարության տեսակետից անբարենպաստ տարածքների թվին, բացի թեք լանջերից, դասվել են ևս սեյսմիկ տարածքներն ու ձորակները, գետերի հունները:

ՍՄԸ-ի աշխատանքների իրականացման երկրորդ փուլում որոշվել է յուրաքանչյուր գոտում սպավելիք հորիզոնական արագացման և բավականության արժեքները: Շեշտում ենք նաև բավականությունը, քանի որ որոշ դեպքերում այն լրացուցիչ միջոց է արագացման արժեքը որոշելու համար: Բավականությունից արագացման մակարդակը որոշվել է նաև հայտնի եմպիրիկ կախվածությունը՝

$$A = 0.0008 \times 2^I,$$

որտեղ A-ն արագացումն է, իսկ I-ն բավականությունը:

Սեյսմահետազոտական տվյալներով տարբեր գրունտներում ու շերտավաճակներում ստացված ալիքների արագությունները, գրունտների խտության, նրանց տեղադրման խորությունների, հզորության և այլ տվյալների հաշվարկում կազմված են աղյուսակ 2-ը և աղյուսակ 3-ը: Համակարգչային ծրագրով սկզբում հաշվարկվել է K գործակիցը ըստ շերտում ալիքների արագությունների, գրունտների խտության, նրանց տեղադրման խորությունների կամ հզորության, ապա նաև արագացման մեծությունը: Աղյուսակ 3-ը հիմք է ծառայել յուրաքանչյուր սեյսմիկ գոտիում կետում հորիզոնական արագացումների արժեքների որոշման համար: Այս արժեքները դրվել են քաղաքի տարածքների սեյսմիկ գոտիներում սպավելիք առավելագույն հորիզոնական արագացումների մակարդակի որոշման հիմքում:

3.5 Գրունտի տատանումների գերակշռող պարբերությունների որոշումը բարձր հաճախության միկրոսեյսմիկ գրանցման միջոցով

Ապարան համայնքի տարածքի սեյսմիկ միկրոշոջանացման համար կատարվել են բարձր հաճախային միկրոսեյսմիկ ֆոնի հետազոտման աշխատանքներ՝ տարբեր գրունտային պայմաններով տեղամասերի հաճախային առանձնահատկությունների բացահայտման նպատակով: Կարճ պարբերություն ունեցող միկրոսեյսմիկ չափվել են ժամանակի 0,01-1,2 վրկ. տիրույթում: Տարբեր տեղամասերում դիտարկվել են ամպլիտուդի փոփոխություններ որոշակի տիրույթում՝ տարբեր պարբերությունների դեպքում նվազագույն և առավելագույն արժեքներով:

Միկրոտատանումների գրանցման կետերը ընտրվել են ելնելով Իժմեներաներկրաբանական պայմաններից, յուրաքանչյուր տիպի գրունտի վրա կատարվել է առնվազն երեք չափում (նրանց տեղադրումը բերված է գրաֆիկական հավելված # 1-ում):

Բարձր հաճախային միկրոտատանումների գրանցումը կատարվել է հետևյալ կերպ: Յուրաքանչյուր կետում սեյսմատվիչները տեղադրվել են 20 սմ խորության վրա՝ խանգարումների ազդեցությունից խուսափելու նպատակով: Գրանցումները կատարվել են 2 րոպե տևողությամբ օրական երեք անգամ, ժամը 10⁰⁰-ին, 18⁰⁰ և 22⁰⁰-ին: Միկրոտատանումների գրանցումները իրականացնելու համար օգտագործվել է սեյսմագրաֆի ռեժիմում աշխատող հատուկ կայան՝ կիրառելով CM-3 տիպի ուղղահայաց սեյսմագրաֆ, ՄՊՈՒ ուժեղացուցիչ և H-327.4 տիպի ինքնագրանցող սարք: Օգտագործվել է 50000 առավելագույն խոշորացման բևուռագրերը՝ 0,1-1,2 վրկ պարբերությունների տիրույթում: Կանալի չափաբերումը իրականացվել է գեներատորային մեթոդով: Գրանցման գծի հաստությունը կազմել է 0,5մմ, իսկ թռիչքի ձգման արագությունը՝ 1-50 սմ/վրկ:

Գրունտների բնական միկրոտատանումների գրանցումների մշակումը, որոնց տևողությունը կազմում է 2 րոպե, կատարվել է 30 վայրկյանանոց միջակայքում պարբերությունների և ամպլիտուդների համատարած չափման միջոցով: Գերակշռող պարբերությունների առանձնացման համար կառուցվել են n(Ti) կրկնելիության գրաֆիկները (ներկայացված են հավելվածի վերջում): Որոշվել են առավել հաճախ հանդիպող պարբերությունները n(Ti) գրաֆիկները վերափոխվել են n(Ti)% գրաֆիկների, որտեղ n* = (Ti/Δt) 100%, Δt - գրանցման տևողությունը: Պարբերությունը համարվում է գերակշռող, եթե n* ≥ 15: Գրանցումների վերլուծության հիման վրա ստացվել են գրունտների տատանման գերակշռող պարբերությունները:

Քանի որ Ապարանի տարածքում վերին 30մ հզորության շերտը հիմնականում անհամասեռ է՝ կազմված է տարբեր կարգի գրունտներից, ապա, ըստ ՀՀՇՆ-ՈՒ-6.02-2006 5.3.3 կետի, գրունտի հաշվարկային գերակշռող պարբերությունը որոշելիս միկրոսեյսմիկ գրանցումների հիման վրա ստացված տվյալները բազմապատկվել են 1,3 գործակցով:

Ստացված արդյունքները ամփոփ տեսքով բերված են աղյուսակ # 4-ում:

Աղյուսակ 4. Միկրոտատանումների գերակշռող պարբերությունների արժեքները՝ կախված գրունտային պայմաններից (Ապարանի համայնք)

| Շերտի իժմեներաներկրաբանական բնութագիրը | Չափված կետերի քանակը | րանցում ների թիվը մեկ կետում | երակշռող պարբերությունը՝ վրկ | երակշռող պարբերությունների միջին արժեքները՝ վրկ |
|--|----------------------|------------------------------|-------------------------------------|---|
| Խիճ, մանրախիճ, բազալտ | 3 | 2 | 0,16-0,26 0,24-0,29 0,2-0,24 | 0,16-0,29 |
| Կավ, ավազներ | 3 | 2 | 0,5-0,54 0,4-0,6 0,45-0,62 | 0,4-0,62 |
| Ճալաքարային գրունտ | 3 | 2 | 0,26-0,32 0,34-0,42 0,38-0,44 | 0,26-0,44 |
| Հրաբխային ավազ | 3 | 2 | 0,47-0,55 0,55-0,68 0,5-0,65 | 0,47-0,68 |
| Բազալտ | 3 | 2 | 0,26-0,28 0,26 0,26 | 0,26-0,28 |
| Կավ, ավազ, ճալաքարային գրունտ | 3 | 2 | 0,28-0,3 0,3-0,32 0,23-0,26 | 0,23-0,32 |

| | | | | |
|--------|---|---|------------------------------------|-----------|
| Բազայն | 3 | 2 | 0,16-0,22 0,22-0,24 0,2-0,26 | 0,16-0,26 |
|--------|---|---|------------------------------------|-----------|

3.6. Ապարան համայնքի տարածքի սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզը

Ապարան համայնքի տարածքի ՄՄՇ 1:5000 մասշտաբի քարտեզը ըստ սեյսմիկ վտանգի մակարդակի փոփոխության ու գոտիների դիֆերենցիալության ունի բարդ կառուցվածք: Սա պայմանավորված է սեյսմիկ տեսակետից բավականին բարդ գոտիտային, երկրաբանական պայմաններով ու 150-ից մեծ թեքություններով:

Ընդհանրապես համայնքի տարածքում առանձնացված են 6 տիպի սեյսմիկ գոտիներ 0,25-0,35g հորիզոնական արագացմամբ: Երեք գոտին բարենպաստ են շինարարության համար, իսկ երեքը՝ ոչ (գրաֆիկական հավելված 2): Ըստ վտանգի մակարդակի Ապարան համայնքի տարածքում գերակշռում են 0,30-0,35g սպասվելիք արագացմամբ գոտիները: Փոքր տոկոս են կազմում շինարարության համար անբարենպաստ տարածքները, որոնք հիմնականում պայմանավորված են 150-ց մեծ թեքությամբ լանջերի (որտեղ հնարավոր են նաև քարաթափեր) և գետահունների ու ձորակների առկայությամբ: Այս հրապարակներում շինարարություն իրականացնելիս պետք է կիրառվի գործող նորմերի 5.4.1 և 5.4.3 կետերի պահանջները:

Ընդհանրապես Ապարան համայնքի տարածքը սեյսմիկ տեսակետից մեծամասամբ նպաստավոր է շինարարության համար: Ավելորդ չէ, որ մեկ անգամ ևս նշենք, որ կազմված սեյսմիկ միկրոշրջանացման 1: 5000 մասշտաբի քարտեզը հիմք է ծառայելու քաղաքի գլխավոր հատակագիծը կազմելու համար: Ցանկացած առանձին օբյեկտի նախագծման համար շինարարության հրապարակի տարածքում պետք է կատարվեն մանրակրկիտ Ինժեներաերկրաբանական և սեյսմիկ հետազոտություններ:

4. Վերջաբան

Ապարան համայնքի տարածքի սեյսմիկ միկրոշրջանացման 1:5000 մասշտաբի քարտեզը կազմվել է Ինժեներաերկրաբանական, սեյսմաբանական նոր դաշտային դիտարկումների ու արխիվային փաստացի նյութերի և այլ տվյալների հիման վրա, համալիր մոտեցումով: Քարտեզը կազմելիս առանձնապես մեծ տեղ է հատկացվել սեյսմիկ վտանգի մակարդակի փոփոխման որոշման ակուստիկ կոշտությունների մեթոդին, որպես գլխավոր մեթոդի: Սակայն քաղաքի տարածքին բնորոշ է այնպիսի երկրաբանական կառուցվածք, որ վտանգի մակարդակը որոշելիս հաշվի է առնվել նաև լանջերի 15°-ից մեծ թեքությունը, գետահունների ու ձորակների առկայությունը: Առանձնացված սեյսմիկ գոտիներում վտանգի մակարդակը գնահատված է 0,25- 0,35g: Յուրաքանչյուր գոտու համար տրված է նաև գոտիների տատանման գերակշռող պարբերությունները:

Շինարարության համար անբարենպաստ տարածքները պայմանավորված են 15°-ից մեծ թեքության լանջերի և որոշ չափով գետահունների ու ձորակների առկայությամբ: Այդ տարածքներում շինությունների նախագծման ժամանակ պահանջվում է ՀՀ սեյսմակայուն շինարարության նախագծային նորմերի 5.4.1 և 5.4.3 կետերի պահանջների կիրառում: Այդ տարածքները մեծ մակերես չեն կազմում:


Կազմված ՄՄՇ-ի նոր քարտեզը ըստ գործող նորմերի կարող է հավաստի հիմք ծառայել Ապարան համայնքի գլխավոր հատակագծի մշակման համար: Այն չի կարելի օգտագործել առանձին օբյեկտի նախագծման նպատակով: Այս դեպքում պահանջվում են լրացուցիչ մանրամասն Ինժեներաերկրաբանական և երկրաֆիզիկական հետազոտություններ:

5. Օգտագործված գրականություն

- ՀՀ սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր II-6. 02- 2006, Երևան, 2006թ.
- Ինժեներական հետազոտություններ շինարարության համար, Հիմնական դրույթներ ՀՀՇՆ 1-2,01-99. Պաշտոնական հրատարակություն, Երևան, 2000թ:
- Հաշվետվություն «Ապարան համայնքի գլխավոր հատակագծի նախագծի մշակում: Գիրք 1, Ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ (Ե. Ենգիբարյան)» ՀԳՇՆ ինստիտուտի ֆոնդեր, Երևան, 2006թ.
- Рекомендация по сейсмическому микрорайонированию при инженерных изысканиях для строительства. Госстрой СССР, М., 1985г.
- Сейсмическое микрорайонирование. Нормы производства работ в РА/проект. НССЗ РА Ереван, 2003г.

ԳՐՈՒՆՆԵՐԻ ԶՈՓՎԱՆ ՏՏՏԱՆՄԱՆ ԳԵՐԱԿԵՈՂ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՖԻԿԱՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ


n*%



T վրկ

n*%


Նկ.1 Գերակշռող պարբերությունների գրաֆիկ. կետ # 1



T վրկ

n*%


Նկ. 2 Գերակշռող պարբերությունների գրաֆիկ. կետ # 2



T վրկ

n*%


Նկ. 3 Գերակշռող պարբերությունների գրաֆիկ. կետ # 3



T վրկ

n*%


Նկ. 4 Գերակշռող պարբերությունների գրաֆիկ. կետ # 4



T վրկ

n*%


Նկ. 5 Գերակշռող պարբերությունների գրաֆիկ. կետ # 5



T վրկ

n*%

Նկ. 6 Գերակշռող պարբերությունների գրաֆիկ. կետ # 6



T վրկ

Նկ. 7 Գերակշռող պարբերությունների գրաֆիկ. կետ # 7

I-2.6 ՀՀ Ապարան համայնքի վարչական սահմանների ճշգրտում

Ապարան քաղաքային համայնքի առկա սահմանների ճշտման համար հիմք են հանդիսացել կադաստրային քարտեզագրման և «Հոչին մոնիտորինգ» ՊՈԱԿ-ի սահմանային քարտեզագրման նյութերը:

I-2.7 Ժողովրդագրական տվյալներ

Վերջին 20 տարվա վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես հանրապետության մեջ, այնպես էլ Ապարան քաղաքում բազմանդամ ընտանիքների թիվը պակասում է և հակառակը՝ սակավաթիվ անդամներով ընտանիքների քանակն ավելանում է:

Ըստ 1985թ. տվյալների Ապարանում բնակվել է 6500 մարդ, ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքների ներկայացվում է ներքոհիշյալ աղյուսակը:

Մշտական բնակչության թվաքանակը տարեկան

| Թ. Ապարան | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|-----------|------|------|------|------|------|------|
| | 6.6 | 6.6 | 6.6 | 6.6 | 6.6 | 6.6 |

Ըստ 1959-1985թթ. ցուցանիշների քաղաքը պետք է զարգանա հետևյալ տեմպերով

| Թ. Ապարան | 1959 | 1970 | 1979 | 1985 |
|-----------|------|------|------|------|
| | 3.6 | 3.7 | 6.0 | 6.5 |

Ներկայումս քաղաքի բնակչության թվաքանակը կազմում է 6600 մարդ:

I-3 Ժամանակակից կառուցապատման իրավիճակի վերլուծություն

I-3.1 Բնակելի կառուցապատում

Ապարան համայնքի տարածքում ձևավորված խոշոր արդյունաբերական օբյեկտների առկայությունը, լանդշաֆտի առանձնահատկությունը, այլմանավորել են կառուցապատման առկա իրավիճակը: Քաղաքի կենտրոնից դեպի հյուսիս ձգվող Բաղրամյան փողոցը և առանձին հատվածներ կառուցապատված են 3-5 հարկանի բազմաբնակարան շենքերով: Ապարանը հիմնականում կառուցապատված է 1-2 հարկանի բնակելի տներով: Անհատական կառուցապատման նոր թաղամասը, որը ձգված է դեպի հյուսիսային լանջը, վերջին տարիների ընթացքում սեփականաշնորհման և հողաբաժանումների հետևանքով կառուցապատումը մնացել է կիսատ և անավարտ: Արևելյան թաղամասը, որը փռված է Գայի փողոցի վերջամասում, երկրաշարժի տարիներին տաքիկ բարերարների կողմից մասնակի կառուցապատվել է փայտյա տնակներով, հողամասերի կեսից ավելին սեփականաշնորհված են՝ առանց կառույցի: Քաղաքի կենտրոնական հատվածում գտնվող սբ. Խաչ բազիլիկան շրջապատված է անկազմակերպ և տարերայնորեն կառուցապատված տներով: Քաղաքում բազմաբնակարան շենքերը 26-են: Անհատական բնակելի տները 1230-են, որի մոտ 20%-ը կիսակառույց: Բնակավայրի հողերը ըստ նշանակության բաժանվում են 5 տիպի, ընդ որում բնակելի կառուցապատումը զվարճեցում է 245.0հա, այդ թվում տնամերձ հողերը՝ 2430հա:

I-3.2 Հասարակական կառուցապատում

Ապարան քաղաքը հանդիսանում է համայնքի վարչատնտեսական և հասարակական կենտրոն: Այստեղ գտնվում են քաղաքապետարանը, բակը, փոստը, «Արմենթեյ» ծառայության գրասենյակը, դատարան, ԼԳԲ, հրշեջ ծառայություն, կապի հանգույց, պահակային ծառայություն: Ապարանում են գտնվում նաև ամենօրյա շահագործվող, ընթացիկ և հազվադեպ շահագործվող օբյեկտներ: Ներքևում բերված են կենցաղ սպասարկման և մշակութային հիմնարկ-ծեղնարկությունների ներկա իրավիճակի տվյալները՝

1. Ուսումնադաստիարակչական հաստատություններ՝

Թ.Եղիազարյանի անվան N1 դպրոց, N2 միջին դպրոց, N3 միջնակարգ դպրոց, որոնցում ուսանում են 540 տղաներ և 720 աղջիկներ, մարզադպրոց, ավտոդպրոց, ռազմական ուսումնարան: Մասնկապարտեզի շենքերից մեկը ծառայում է որպես կահույքի մշակման արտադրամաս, մասնկապարտեզներ տեղակայված են քաղաքապետարանի և պահակային ծառայության շենքերում, հաճախում են ≈68 երեխաներ, 4 խմբով: Չի գործում նախկին պիոներ տունը, որը գտնվում է Գայի փողոցի սկզբամասում՝ դեպի արևմուտք:

2. Մշակութա-ուսավորչական օբյեկտներ` Արվեստի դպրոց 129 աշակերտներով, մշակույթի օջախ 6 գործող խմբեր, որոնց թվում 75 երեխա. գրադարան. գրքերի քանակը` 69854, ընթերցողների թիվը կազմում է 1211 մարդ, որից 900-ը` երեխաներ են: Կինոթատրոնի շենքը վթարային է:
3. Առողջապահության հաստատություններ`
- 9.Նժդեհի փողոցի հյուսիսարևելյան կողմում է գտնվում քաղաքային հիվանդանոցը` 110 մահճակալով, պոլիկլինիկան` օրեկան 90 այցելուներով, տարածքում է տեղադրված նաև ինֆեկցիոն բաժանմունքի և ծննդատան շենքը, փողոցին կից շտապ օգնություն և ատամնաբուժարանի փայտյա տակները: Դեղատուն, որի պահեստային մասերը չեն գործում և գտնվում են դեղատանից բավականին հեռու, նախագծում նախատեսվում է դեղատանը կից պահեստային մաս: Քաղաքն ունի սանեպիդկայան:
4. Կոմունալ կենցաղային հաստատություններ`
- Բաղնիք (գտնվում է Մաշտոցի փողոցի վրա, չի աշխատում), կենցաղ սպասարկման օբյեկտներ (մասամբ չգործող), կենցաղի տուն, հյուրանոց (չգործող):
- 5.Ունևորի և հասարակական սննդի ցանցը ներկայացված է հետևյալ օբյեկտներով`
 - ա) առևտրի օբյեկտներ (տնտեսական և կենցաղային ապրանքներ) 53 հատ
 - բ) հասարակական սննդի օբյեկտներ (ռեստորաններ, ճաշարան, սրճարան) 6 հատ
 - գ) հանրախանութ-232.6մ²: առևտրի մակերեսով, մասամբ չգործող
7. Սպորտի և ֆիզիկական պատրաստության մարզադպրոց, հաճախում են 116 աշակերտներ: Շենքը ֆունկցիոնալ տեսակետից չի բավարարում ներկայիս սպորտային պահանջներին: Ձմեռային սպորտաձևերի կազմակերպման համար չկան համապատասխան պայմաններ:

1-3.3 Արդյունաբերական կառուցապատում

Արդյունաբերության ճյուղերի տարածքների ճիշտ ընտրումն ու կազմակերպումը, համարվում է հասարակական աշխատանքի արդյունավետության բարձրացման պահեստային կարևոր երակետերից մեկը:

1985թ-ին Ապարանի բնակավայրի տարադրության գերիշխող ճյուղը եղել է մեքենաշինությունը, որը ներկայացված էր «Էրեբունի» միավորման գործարանով: 1986թ. հունվարի 1-ի որոշմամբ աշխատել են 7 արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց արտադրանքի ընդհանուր ծավալը կազմել է 11.39մլն.ո., իսկ աշխատողների թիվը` 1774 մարդ: Հեռանկարում բնակչության աճին զուգահեռ պետք է ավելանար նաև աշխատատեղերի քանակը: 1995թ. պետականի հաշվարկների համաձայն Ապարանում պետք է տեղավորվեր հաստոցաշինական արտադրության գործարան` 250 աշխատատեղով, 20 տարվա հեռանկարում` 900 աշխատատեղ:

Նախկին խորհրդային Միության փլուզումից հետո արտադրական բոլոր ձեռնարկությունները սեփականաշնորհվել են և մեծամասամբ չեն գործում: Ինչպես հանրապետության մյուս քաղաքներում, այնպես էլ Ապարանում, մի շարք արդյունաբերական ձեռնարկություններից այսօր գործում են ընդամենը 5-ը, 110 աշխատողների թվով, ընդ որում կարողության օգտագործումը կազմում է ընդամենը 6%, տարեկան արտադրանքի ծավալը` 96782.0մլն: Բացի մի քանի արդյունաբերական ձեռնարկություններից գործում են նաև առանձին հասարակական հիմնարկ ձեռնարկություններ, ՄՊԸ-ներ, ԲԲԸ և ՓԲԸ կազմակերպություններ:

Ապարանի գործող ձեռնարկություններից է «Ապարանի պանրի գործարան» ՓԲԸ-ն, որը, սակայն, ըստ կադաստրի քարտեզագրման տվյալների գտնվում է Մուլքի գյուղի տարածքում:

Ներկայումս գործող ձեռնարկություններից են` «Նիգ» ԲԲԸ-ն, «Արագածի բերրիություն» ԲԲԸ, «Մուշ» ՄՊԸ, «Վահե-Մանե» ՄՊԸ, «Սննա» պանրի և ջրի արտադրամաս: Կան նաև մի շարք անհատ ձեռներեցներ: Արտադրական ձեռնարկությունները հիմնականում գործում են մասնակիրներ: Չեն աշխատում մի շարք արտադրական ձեռնարկություններ, ինչպիսիք են` «Արև» գործարանը, «Ռեզինի» գործարանը և այլն:

Հարուստ է եղել հատկապես Ապարանի գյուղատնտեսական արտադրությունը, գործել են գոմերը, որոնք ներկայումս կիսաքանդ և բարձիթողի վիճակում են:

Նախագծում նախատեսվում է արտադրական գոտու զարգացում, անթափոն, էկոլոգիապես մաքուր արտադրությունների տեղադրում` համապատասխան ասնիտարապաշտպանիչ գոտիներով:

1-4. Զանապարհատրանսպորտային ենթակառուցվածքներ

Տրանսպորտը քաղաքի, բնակավայրի այն կարևորագույն ենթակառուցվածքներից է, որի շուրջ ձևավորվում և զարգանում է բնակավայրը: Ապարան քաղաքի կենտրոնական մասով անցնում է Ապարան Սպիտակ միջպետական նշանակության Մ3 մայրուղին: Նրանից սկիզբ են առնում դեպի հարևան գյուղերը տանող տեղական նշանակության ճանապարհները. Լուսապոլ, Մուլքի, Չքնաղ, Սարալանջ, Լիզավան, Միրաք: Նույն ճանապարհի հյուսիսային մասից է սկիզբ առնում դեպի Արթիկ գնացող հանրապետական նշանակության ճանապարհը: Տեղական ճանապարհների ցանցը անբավարար է:

Նախկին գլխավոր հատակագծում նախատեսված է ավտոմայրուղու քաղաքով անցնող հատվածի փոխարեն կառուցել շրջանցող մայրուղի:Ներկայումս Ապարանում առկա են հետևյալ տրանսպորտային ցուցանիշները` գյուղ մեքենաներ, որից`

| | |
|------------------------|----------|
| կոմբայն | - |
| թրթուրավոր տրակտոր | -2 հատ |
| անվաճար տրակտոր | -5 հատ |
| խոտհնձիչ | -1 հատ |
| կցագործիքներ | -15 հատ |
| բեռնատար ավտոմեքենա | -82 հատ |
| ավտոբուսներ | -12 հատ |
| միկրոավտոբուսներ | -10 հատ |
| մարդատար ավտոմեքենաներ | -610 հատ |

1-5. Լանդշաֆտի դասակարգումը և գնահատումը

Քաղաքի տարածքն ընդգրկված է լեռնային բնական լանդշաֆտային գոտում: Գոտու տարածքը հիմնականում անհարթ է: Ակտիվ է արտահայտված հիդրոլոգիական գործընթացը: Հարուստ են ջրային աղբյուրները: Գոտու հողատարածությունները կայունորեն օգտագործվում են, մասամբ ծածկված են նաև կերախոտերի ցանցերով: Հաշվի առնելով համայնքի լանդշաֆտային գոտու լեռնայնությունը` հետագա դասակարգման տաքսոնոմիկ միավոր է ընտրվել լանդշաֆտների քաղաքաշինական օգտագործման հիմնական ձևերը`

1. Կառուցապատված լանդշաֆտներ
2. Կառուցապատման ենթակա լանդշաֆտներ
3. Գյուղատնտեսական նշանակության հողահանդակներ
4. Անտառտնտեսության հողեր
5. Անօգտագործելի հողատարածքներ

Կառուցապատված և կառուցապատման ենթակա լանդշաֆտների օգտագործման ռեժիմը նախատեսում է`

- կառուցապատման կանոնակարգում` բնակչության և կառուցապատման համապատասխան խտությունների կիրառումով,
- հարմարավետ կապերի ստեղծում,
- ճարտարագիտական նախապատրաստման միջոցառումների կիրառում (ուղղաձիգ հատակագծում, մակերևութային ջրերի հեռացում),
- տարբեր օբյեկտների և ենթակառուցվածքների ասիմետրիկ գոտիների պահպանման պահանջների կիրառում:
- Գյուղատնտեսական նշանակության հողահանդակների օգտագործման ռեժիմը նախատեսում է միջոցառումների լայն համալիր կիրառում, որն ընդգրկում է`

Ազդեցիկական միջոցառումներ

- ցանցաշրջանառության կիրառում,
- ցածր արտադրողականության վարելահողերի բարելավում (քարերի հավաքում),
- խորը հերկ երեք տարին մեկ անգամ,
- պարարտանյութերի օգտագործման չափաբաժինների պահեստավորում, պահեստների կառուցում` ըստ սանպահպանման նորմերի պահանջների,
- վնասատուների դեմ պայքարի կենսաբանական մեթոդների կիրառում:

Մարզագետիների հողաբարելավման միջոցառումներ

- արոտների բարելավում, ջրարբիացում,
- անասունների արածեցման, քանակների և ժամկետների որոշում,
- հեռազևա արոտներում ճանապարհային ցանցի կարգավորում,
- մոլախոտերի, վնասակար և թունավոր բուսատեսակների ոչնչացում:

Ջրատեխնիկական միջոցառումներ

- լեռնային առուների կառուցում,
- ձյունապահ վահանների տեղադրում,

Անտառտնտեսության հողերում նախատեսվում է`

- անտառածածկ տարածքների պահպանում, ծառերի տնկում,
- գոյություն ունեցող անտառների բիրնիտեղի բարելավում:

1-6. Տարածքի ճարտարագիտական պաշտպանության միջոցառումները

Ապարան քաղաքի տարածքն, ըստ ճարտարագիտական պաշտպանության միջոցառումների կարելի է բաժանել 3 տեղամասի: **Առաջին տեղամասն** ընդգրկում է քաղաքի հիմնական մասը` հարթավայրային, որը կազմում է հետագոտվող ընդհանուր տարածքի 70%-ը և իրենից ներկայացնում է կառուցապատման համար բարենպաստ տարածք: Այստեղ ընդգրկված են Քասախ գետի աջ և ձախ կողմում ընկած տարածքները և կազմում են 10⁶ թեքություն ունեցող տեղանքի հատվածներ: Համառայն ուսումնասիրությունների այս տարածքը կառուցապատելու համար անհրաժեշտ է ուղղաձիգ հատակագծում և մակերեսային ջրերի հեռացում: **Երկրորդ տեղամասը** ընդգրկում է քաղաքի արևելյան և հյուսիսարևելյան մասերը, որոնք կազմում են հետագոտվող տարածքի 20%-ը: Այստեղ չկան մեծ թեքություններ, բայց 6մ-ի վրա կան ստորգետնյա ջրեր, այստեղ կան որոշ հատվածներ, որտեղ Քասախ գետի ջրերը բարձր մակարդակ ունեն և

առավելագույն ելքի ժամանակ նկատվում է ջրածածկում: Դրանք են նպաստում քաղաքի արևելյան եզրով անցնող հեղեղատարի վարարմանը, որը ջրածածկ է անում ափամերձ տները, կառուցվածքները և քանդակ է կամուրջները: Այս շրջանի տարածքը կառուցապատելու համար անհրաժեշտ է կատարել ոչ բարդ ինժեներական նախապատրաստում՝ ուղղաձիգ հատակագծում, մակերեսային ջրերի հեռացում: Վերը նշված որոշ հատվածներում ստորգետնյա ջրերի իջեցում, գետափնյա հենապատի կառուցում՝ թույլ չտալով տարածքի որոշ հատվածների ջրածածկում:

Երրորդ տեղամաս դա կառուցապատման համար անբարենպաստ տարածք է, որը կազմում է ընդհանուր տարածքի 10%-ը և ընդգրկում է Քասախ գետի հունը, հյուսիսից՝ հարավ, հարավ-արևմուտքից և հարավից դեպի Քասախ գետը թափվող հեղեղատարները:

Քաղաքի տարածքով զարևանային հորը անձրևների և ձյան հալոցների ժամանակ անցնում են հեղեղային մեծ հոսքեր, իսկ մնացած ժամանակ առկա են փոքր ելքեր:

Այսպիսով նշված ուսումնասիրությունների երրորդ տեղամասը կառուցապատման համար պիտանի չէ:

Հակահեղեղային միջոցառումներ

Տեղատարափ անձրևների ժամանակ ձևավորվող հեղեղային հոսքերը թափվում են կենտրոնով անցնող Քասախ գետը, որն անցնելով քաղաքի կենտրոնական տարածքով, լուրջ վնասներ կարող է պատճառել քաղաքին: Քաղաքի հյուսիս արևելյան մասով անցնում են և երկու հեղեղային ձորակներ, որոնք հորը անձրևների ժամանակ իրենց հետ բերում են ջրաբերուկներ:

Գլխավոր հեղեղատարը, որն անցնում է քաղաքի կենտրոնով, բետոնապատված է, բայց հունը լցված է աղբով: Նախատեսվում է մաքրել հունը և կարգավորել ափամերձ տարածքները: Մյուս երկու հեղեղատարները բետոնապատված չեն: Նախատեսվում է բետոնապատել ափերը և կարգավորել կամուրջները:

Քանի որ հեղեղային հոսքերն իրենց հետ բերում են ջրաբերուկներ, նախատեսվում է հեղեղատարների սկզբնամասերում կառուցել ջրաբերուկների բռնիչ կառույցներ՝ բետոնյա պատնեշներ 2-2.5մ բարձրությամբ: Ապարանի հարավ արևմտյան և հարավային կողմով անցնող հեղեղատարները սկիզբ են առնում Արագած լեռան արևելյան լանջերից: Այս կողմում կան ևս մի քանի հեղեղատարներ, որոնցից մեկը հատում է Աշտարակ-Մալիտակ մայրուղին և «Լիգ» գործարանի կողքով բարձրանում է դեպի Արագածի լանջերը: Նախատեսվում է կարգավորել հեղեղատարների հունները, բետոնապատել եզրերը և իրականացնել պաշտպանիչ միջոցառումներ:

Ստորգետնյա ջրերի մակարդակի իջեցում

Համաձայն ուսումնասիրությունների արդյունքների, քաղաքի տարածքի այն հատվածը, որը վերջին նախագծով նախատեսված է սպորտային համալիրի զարգացման տարածք՝ ստորգետնյա ջրերի մակարդակը բարձր է, որը տատանվում է 0-3մ խորության վրա: Տարածքի մի մասը ճահճացած է: Վերջին տարիներին այդ տարածքում անցկացրել են ինքնահոս դրենաժ դեպի Քասախ գետը: Նախատեսվում է շարունակել դրենաժների անցկացումը և գետի այդ հատվածում կառուցել բետոնե հենապատ:

1-7. Տարածքի գնահատականն ուսումնասիրության պայմաններին

Ըստ հատակագծային պայմանների տարածքը գնահատվել է ջրամատակարարման, ջրահեռացման, էներգամատակարարման պայմաններով և բնապահպանական գործոններով:

Տարածքի ջրամատակարարման պայմանները բարենպաստ են: Ջրամատակարարման աղբյուր է հանդիսանում 40 աղբյուրների և Եգևակի աղբյուրի տարածքներից դուրս եկող աղբյուրների ջրերը 50/վրկ դեբիտով:

Բնակչության և արդյունաբերության խմելու ջրի հեռանկարային պահանջը բավարարելու համար՝ երկրորդ ջրագիծը բերվել է Զախիձորի աղբյուրներից 150մ խորակով՝ 4.5կմ հեռավորությունից, վարկանում 10-12լ ջուր:

Որպես տեխնիկական ջուր կարելի է օգտագործել Քասախ գետի ջրերը:

Քաղաքի էներգետիկ բազան ունի սահմանափակ ռեզերվային հզորություններ, որոնք կարող են օգտագործվել նոր շինարարության տեղադրման ժամանակ: Բնակավայրի զագամատակարարումն իրականացվում է միջին ճնշման գազատարից: Հեռանկարային զարգացման համար անհրաժեշտ է զագաֆիկացում կոր թաղամասերում:

Բնակավայրի տարածքով անցնում են բարձր լարման էլեկտրագծեր, որոնք պետք է տեղափոխվեն քաղաքի զարգացման տարածքից դեպի հարավ արևմուտք:

Բնապահպանական տեսակետից, Ապարանի տարածքն ունի մի շարք սահմանափակ գործոններ՝

ա) Օդի աղտոտվածության բարձր պոտենցիալ ունեցող գոտում գտնվելը (սանիտարական վտանգավորություն ունեցող արդյունաբերական օբյեկտների տեղադրումը): Ներկա դրությամբ այդ կարգի օբյեկտները չեն աշխատում: Օդի աղտոտվածության աղբյուր են հանդիսանում «Լիգ» գործարանը, Պանի գործարանը, Զերմային ցանցի կոմբինատը, և այլն:

բ) Կենտրոնային ջրերի, հիմնականում Քասախ գետի, աղտոտվածության աղբյուր են հանդիսանում Ապարան քաղաքի կոյուղու, ավտոտրանսպորտային ձեռնարկության, Պանի գործարանների հոսքային կեղտաջրերը, որոնք առանց մաքրման թափվում են Քասախ գետը:

Օդի և ջրային ավազանի վիճակը կարելի է համարել սահմանափակ բարենպաստ, քանի որ առաջնահերթ միջոցառումներով կարելի է կանգնեցնել աղտոտվածության գործընթացը:

Ապարանի արդյունաբերական օբյեկտները և տնտկենցաղային կեղտաջրերը նախատեսվել է մաքրել Մուլցի գյուղից արևելք ընկած մաքրման կայանի տարածքում: Նույն մաքրման կայանի տարածքում պետք է մաքրվել նաև հարևան Լուսազյուղ, Մարալանց գյուղերի կեղտաջրերը:

Բայց վերջին տարիների գործընթացներից հետո, մաքրման կայանի շինությունները թայանվել և վերածվել են ավերակների: Նախատեսվում է վերականգնել մաքրման կայանը, բայց արդյունաբերական օբյեկտների կեղտաջրերը, մինչև մաքրման կայան լցնելը, պետք է ենթակվեն առաջնային մաքրման:

գ) Ապարան քաղաքի տարածքի արևմտյան հատվածի հողածածկույթը խիտ աղբային է: Այս տարածքները ներկայացված են խիտ կտրված թեք լանջերով, զուրկ են հողային ծածկույթից, հողմահարված բազալտների հզոր շերտեր են: Հողային ծածկույթի անբարենպաստ պայմանները թեղարում են մի շարք միջոցառումների անհասկալ կատարում՝ եղած հողային ծածկույթի բուսականության համար: Անհրաժեշտ է մակերեսային հոսքերի հեռացում և կանխավորում, համեմատաբար բարենպաստ հողային ծածկույթի (վարելահողեր, խոտհարքներ) ոչ գյուղատնտեսական նպատակներով օգտագործման աղբյուրները, թեք լանջերի դարավանդը /տերասավորումը/, անտառների որովակական կազմի բարելավումը, անտառտնտեսության ենթակա տարածքներում անտառատնկումների ավելացումը:

1-8 Հարազատության ենթակառուցվածքներ

1-8.1 Ջրամատակարարում

Ներկայումս Ապարան քաղաքն ունի կենտրոնացված ջրամատակարարում, որոնք աշխատում են պոմպակայանի օգնությամբ: Ջրամատակարարման աղբյուր են «40 աղբյուր» («ժամի աղբյուր»), որի ջրերը հավաքվում են ուղարկվում են դեպի Երևան (700/վրկ) և «Եգևակի աղբյուր», որտեղ 50-60/վրկ ջուր է հոսում և նույնպես պոմպակայանով մղվում է դեպի ՕԳԶ-ները: «40 աղբյուր»-ից («ժամի աղբյուր») մղվող ջուրը լցվում է Ապարանի հյուսիսային լանջին տեղադրված 2000մ³ ՕԳԶ, իսկ Եգևակի աղբյուրից ջուրը մղվում է Ապարանի հարավ արևմտյան կողմում գտնվող ՕԳԶ-ները: Այստեղ կա 2x600մ³ ջրամբարներ և մեկ 2000մ³ ջրամբար կիսակառուց վիճակում: Այդ 2000մ³ տարողությամբ ՕԳԶ-ն գտնվում է Լիգ գործարանի արևմտյան կողմում, որն այժմ չի օգտագործվում: Վերջին տարիներին Ապարան քաղաքի ջրապահանջը բարելավելու նպատակով Զախիձորի աղբյուրների տարածքից 150-200մ տրամագծի խորովակով ջուր է նախատեսվել բերել դեպի հյուսիսային ՕԳԶ: Խողովակները քայքայվել են, բայց ջուրը չեն միացրել: Ջրագիծը երկարությունը 4.5կմ է: Հնարավոր է որոշ աղբյուրներից ջուր հավաքելով ստանալ 12/վրկ ջուր, որը անհափն կթեթևացնի պոմպակայանների աշխատանքը:

Հիմնականում քաղաքը բաժանված է երկու գոտու՝ հյուսիսային և հարավային: Հյուսիսային գոտու ջրամատակարարումն իրականացվում է հյուսիսային ՕԳԶ-ից, որի աղբյուրն է «40 աղբյուրը» («ժամի աղբյուր»), իսկ հարավային գոտու ջրամատակարարումը հարավային ՕԳԶ-ից, որի աղբյուրն է Եգևակի աղբյուրը: 1997թ-ին 250մ երկարությամբ ջրագիծ է կառուցվել և «Եգևակի աղբյուր»-ից ինքնահոս ձևով սպասարկվում է կենտրոն թաղամասը: Ամբողջ ներքին ցանցի երկարությունը մոտ 47կմ է, որի մեծ մասը վթարային է, փոփոխություն ենթակա:

«Եգևակի աղբյուր»-ից 300մ տրամագծով ջրագիծ է գնում դեպի «Լիգ» գործարանի ՕԳԶ: Ջրագիծը չի գործում: Հյուսիսարևելյան կողմի թաղամասերը ջուր չունեն, Այվագովկու փողոցը 20-25 տարի է ջուր չունի:

1-8.2 Կոյուղի

Ապարան քաղաքը կոյուղացված է ընդամենը 9կմ: Հիմնական կոյուղագիծն անցնում է Բաղրամյան և Գ.Լճիեհի փողոցներով և քաղաքի կենտրոնի տարածքում իրար միանալով՝ լցվում է Քասախ գետը: Հյուսիսային թաղամասերը կոյուղագիծ չունեն: Կոյուղին լցվում է հեղեղատարով դեպի կենտրոն և Քասախ գետ: «Բելառուսական թաղամասը» ընդհանրապես կոյուղի չունի, Պարյուր Սևակի թաղամասի կոյուղագիծն ընդամենը 360մ է. կեղտաջրերը փողոցով գալիս չեն հեղեղատարը: Կոյուղի չունի նաև Մահուբի Գևորգ փողոցը և ամբողջ հարավային թաղամասը:

1980-ական թվականներին մինչև ՍՍՀՄ փլուզումը Մուլցի գյուղից հյուսիս-արևելք ընկած հատվածում կառուցվել է մաքրման կայան, որը պետք է սպասարկեր Ապարան, Մուլցի, Լուսազյուղ, Մարալանց բնակավայրերին: Այժմ այն գտնվում է ավերակ վիճակում և թայանված է: Ապարանից դեպի մաքրման կայան մոտ 1.5կմ է, որտեղ և 500մ տրամագծով գլխավոր կոլեկտոր է կառուցվել, որը որոշ տեղերում խցանված է, որոշ տեղերում ջարդված, իսկ որոշ հատվածներ իսպառ վերացվել են: Նախատեսվում է վերականգնել մաքրման կայանն առաջնահերթ ծրագրերով:

1-8.3 Ոռոգում

Ապարան քաղաքի և նրա գյուղատնտեսական հողերի ոռոգման համար հիմնականում օգտագործվում է Միրաք գյուղի կողմից եկող, Ապարանի հյուսիս-արևմտյան մասով անցնող ոռոգման ջրագիծը, որը հասնում է մինչև Լուսազյուղի սահմանը: Նույն ջրագիծ մի ճյուղը քաղաքի հյուսիս-արևմտյան անկյունից քաղաքի արևմտյան եզրով անցնում է դեպի հարավ և հասնում է մինչև «Լիգ» գործարանի տարածքը, այնուհետև հասնելով Երևան-Մալիտակ մայրուղին և անցնում է քաղաքի հարավարևելյան թաղամասերը: Ընդհանրապես Ապարան համայնքում ոռոգվում է 217հա տարածք, որից 127հա-ը քաղաքի տարածքի տնամերձեր են, 90հա-ը՝ վարելահողեր, որից 69հա-ը՝ սեփականության է, իսկ 21հա-ը՝ համայնքի սեփականություն:

Բնակավայրի տարածքում ցանցը մասնակի իրականացված է փակ խողովակաշարով: Փողոցների եզրերին թողնվել են հորեր, որտեղից բնակիչները և ճանապարհի եզրով առուն են արքբելով, ջուրը հասցնում են իրենց հողատիրերը:

Լուսազյուղի կողմից՝ դեպի Ապարանի հյուսիսարևելյան կողմով անցնող ոռոգման գիծն ինքնահոսով լցվում է բաց առուն և դրանով ոռոգում է արևելյան կողմի թաղամասերը: Նախատեսվում է ոռոգման ցանցի ընդլայնում թաղամասերում:

1-8.4 Ջերմամատակարարում և գազամատակարարում

1-8.4.1 Ջերմամատակարարում

Ապարան քաղաքում կան 12 հատ մեծ և փոքր կաթսայատներ, որոնցից աշխատում են յոթը: Այդ կաթսայատները սպասարկում են հիմնականում Բաղրամյան փողոցի N6, N8, N10, N19, N23, N25 բազմաբնակարան շենքերը, N2 և N3 դպրոցները, հիվանդանոցային համալիրը: Բաղրամյան փողոցի վրա կան բազմաբնակարան շենքեր, որոնք կաթսայատները չեն աշխատում և յուրաքանչյուր բնակարան յուրաքանչյուր ձևով ձևով լուծել է ջեռոցման հարցերը: Չեն աշխատում նաև արդյունաբերական օբյեկտների կաթսայատները: Նախագծման փուլում է գտնվում N1 դպրոցի կաթսայատները: հասարակական և առևտրի օբյեկտները տաքացվում են էլեկտրական ջեռուցիչներով: Անհատական տների մեծ մասը ջեռուցվում են գազի վառարաններով:

1-8.4.2 Գազամատակարարում

Ապարան քաղաքի գազամատակարարումն իրականացվում է միջին ճնշման 325մ տրամագծով գազատարով, որն անցնում է քաղաքի հյուսիս-արևմտյան տարածքով, ճյուղավորվում է այդ մասում և 150մ տրամագծով գազատարով սնում է Լուսազյուղը, իսկ հիմնական գազամուղը 325մ տրամագծով անցնում է արևմտյան մասով, ապա անասնաբուսական համալիրի եզրին ճյուղավորվելով՝ 219մ տրամագծի խողովակով մտնում է Ապարան քաղաքի տարածք: «Եգևակի աղբյուրի» մոտ տեղադրված է գլխավոր գազի կարգավորման կայանը: Գազամուղն իջելով հարավ՝ «Լիգ» գործարանի մոտով, մի ճյուղը հատում է

մայրուղին և զազ է մատակարարում «Մուլցի» համայնքին, իսկ հիմնական զազատարը մայրուղուն զուգահեռ գնում է դեպի Աշտարակ: Աշտարակ գնացող զազամուղը կտրած և փակված է:

Քաղաքի զազամատակարարումն իրականացվում է երեք զազաբաշխիչ կայաններով և 3 զազաբաշխիչ պահարաններով: Քաղաքը հիմնականում զազաֆիկացված է (մոտավորապես 70%): Գազաֆիկացված չեն Բելառուսական թաղամասի ներքևի մասերը, Գրիգոր Լուսավորչի փողոցը, «Գոգո» աղբյուրի տարածքը և հարավ արևելյան թաղամասը: Գազաֆիկացված չէ նաև Առաջադասի և Հարությունյան փողոցներին կից թաղամասերը: Քաղաքի մեջ փողոցների զազամատակարարումն իրականացվում է 100-150մ տրամագծի վերջնական խողովակներով: Նախատեսվում է շարունակել զազաֆիկացումը: Նոր կառուցվող թաղամասերում նախատեսվում է զազի կարգավորիչ կետեր, որոնք կսնվեն Ապարանի միջին ճնշման զազատարից:

1-8.5 Էլեկտրամատակարարում

Ներկայումս Ապարան քաղաքի էլեկտրամատակարարման սնման միակ աղբյուր է հանդիսանում Սպիտակից եկող 110/35/6-10կվ լարման 2 գծերը («Արագած» 1, 2) և 35/6/-10կվ «Հալավար» գիծը, որոնք, անցնելով Ապարանի արևմտյան կողմով, մտնում են քաղաքի AO/04-19 Էլ. ենթակայան: Անցնելով քաղաքից հարավ դեպի Աշտարակի կողմը 110-ը գծերը կոչվում են «Ապարան» 1, 2, իսկ 35-ը՝ «Հարթավան» 1, 2: Բարձր լարման 110կվ և 35կվ գծերն անցնում են քաղաքի արևմտյան թաղամասերի վրայով: Առաջնահերթ խնդիր է այդ գծերի դուրս բերումը քաղաքի սահմաններից՝ համաձայն գործող քաղաքաշինական նորմերի և սահմանների: Քաղաքի տարածքում գոյություն ունեն 28 ցանցային ենթակայաններ, որոնք միջոցով էլ պահպանվում է արդյունաբերական օբյեկտների, բազմաբնակարան շենքերի, հասարակական և առևտրի օբյեկտների, անհատական բնակելի կառուցապատումների էլեկտրամատակարարումը: Նոր թաղամասերի կառուցապատման դեպքում նախատեսվում են նոր ցանցային ենթակայաններ:

1-8.6 Կապի ցանցեր

1. Հեռախոսավորում-համայնքը հեռախոսավորված է: Ներկա դրությամբ գոյություն ունեցող հեռախոսակայանը հնարավորություն ունի ևս 1000 համար տրամադրելու: Գլխավոր հատակագծով նախատեսվում է նոր թաղամասերի կառուցապատում և գոյություն ունեցող թաղամասերում բնակելի ֆոնի խտացում, որի պատճառով կավելանա բաժանորդների քանակը: Նախատեսվում է գործող անալոգային ԱՀԿ-ի վերակառուցում:

- Բջջային հեռախոսակապն աշխատում է անխափան:
- Հեռուստատեսություն - գործում է մի քանի կայան:
- Ռադիոֆիկացում-քաղաքային ռադիոյի ցանցը վերացված է:

1-9 Շրջակա միջավայրի պահպանություն

1-9.1. Ապարան քաղաքի շրջակա միջավայրի պահպանության համալիր ուղղագիծ

Բ Ո Վ Ա Լ Դ Ն Կ ՈՒ Յ Ց ՈՒ Ն

- 1. Աշխատանքի նպատակը և խնդիրները
 - 2. Տարածքի բնակլիմայական բնութագիրը
 - 3. Տարածքի ընդհանուր էկոլոգիական բնութագիրը
 - 4. Տնտեսության ներկա իրավիճակի բնութագիրը և զարգացման հեռանկարները
 - 5. Մթնոլորտային օդի պահպանություն
 - 5.1 Մթնոլորտային մոտեցումներ
 - 5.2 Մթնոլորտի աղտոտվածության ներկա իրավիճակը
 - 5.3 Մթնոլորտի աղտոտման աղբյուրները
 - 5.4 Տարածքի համալիր գնահատականը
 - 6. Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանություն
 - 6.1 Մթնոլորտային հիմնավորում
 - 6.2 Քաղաքի ջրամատակարարման և կոյուղու ներկա իրավիճակը
 - 6.3 Ջրային միջավայրն աղտոտող ձեռնարկությունների բնութագիրը
 - 6.4 Տարածքի բնութագիրը մակերևութային և ստորգետնյա ջրերի իրավիճակով
 - 6.5 Քաղաքի ջրապահպան միջոցառումների հիգիենիկ և էֆեկտիվության գնահատականը.
 - 7. Թափոնների կառավարում
 - 8. Հողերի պահպանություն
 - 9. Աղմուկի մակարդակի գնահատում.
 - 10. Էլեկտրամագնիսական ճառագայթում
 - 11. Կանաչապատման համակարգը
 - 12. Բնակչության կենսակերպի պայմանների բժշկաաշխարհագրական վերլուծություն
 - 13. Արագածոտնի մարզի Ապարանի ենթատարածքի պատմամշակութային արժեքը և դրանց զարգացման առաջարկվող ուղղությունները
- Օգտագործված գրականության ցանկ

1. Աշխատանքի նպատակը և խնդիրները

Ապարան քաղաքի գլխավոր հատակագծի «Շրջակա միջավայրի պահպանումը» բաժինը իրենից ներկայացնում է փաստաթուղթ, որտեղ արտացոլված են բնական պաշարների (օդ, ջուր, հող, բուսականություն, հանքեր) ինտենսիվ և արդյունավետ օգտագործման վերաբերյալ նախագծային, պրակտիկ գործունեության արդյունքները՝ ստորտեսության ճիշտ կազմակերպման, ինժեներական ենթակառուցվածքների, կաթսայատների ճիշտ տեղադրման, անթափոն տեխնոլոգիաների և մացրման սարքավորումների կիրառմամբ, կենսոլորտի և արդյունաբերական թափոնների առավելագույն օգտագործման և վնասգործման ճանապարհով:

Աշխատանքի հիմնական նպատակն է՝ մշակել շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ միջոցառումների հիմնավորված ցանկ, նախապես որոշելով կապիտալ ներդրումների նախնական արժեքները, հիմնավորել դրանցից առաջնահերթ միջոցառումները:

Որպես մշակման որոշիչ հայեցակարգ, ընդունված է պլանավորված կապիտալ ներդրումների սահմանացնել առաջնահերթ միջոցառումները, որոնց իրականացումը հնարավորություն կտա կարծ ժամանակում, չնայած նոր արդյունաբերական օբյեկտների շինարարությանը, թույլ չտալ ներկա իրավիճակի վատթարացում և առավելագույն իջեցնել շրջակա միջավայրի աղտոտվածությունը:

Աշխատանքը կատարված է (1,2) մթնոլորտային ցուցմունքների հիման վրա, գործող նորմերի, պետական ստանդարտների, բնապահպանական օրենքների հիման վրա:

2. Տարածքի բնակլիմայական բնութագիրը

Ապարան քաղաքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում՝ Արագած լեռան հարավային փեշերին՝ Երևան-Սպիտակ ավտոմայրուղու վրա, Երևան քաղաքից

57կմ հեռավորության վրա:

Ապարանն ընկած է ծովի մակրևույթից 1880-2000մ բարձրության վրա:

Կլիմայական պայմաններ

Ապարան քաղաքը գտնվում է ՀՀ ցուրտ կլիմայական գոտում, որին բնորոշ է տաք երկարատև ամառ և ցուրտ ձմեռը:

Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 600-750մմ, ձյունածածկ օրերի թիվը՝ 125 օր:

Միջին առավելագույն ջերմաստիճանը՝ +10,4°C:

Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -41°C:

Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ +32°C:

Ամենացուրտ միայն հունվարն է, միջին բազմամյա ջերմաստիճանը՝ -9,6°C:

Տևական ոչ ցուրտունջ օրերի թիվը կազմում է 120-150 օր:

Քամու միջին արագությունը տատանվում է 2,5մ/վրկ-ի սահմաններում: Քամու գերակշռող ուղղությունը՝ հյուսիսարևմտյան:

Երկրաբանական պայմաններ

Ապարան քաղաքը և նրա հարակից տարածքները ներկայացված են հիմնականում անդեզիտա-բազալտային և տուֆային ապարներով: Ապարանի զոգավորության երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական հասակի հրաբխային ապարները (անդեզիտներ, անդեզիտադիտներ): Տարածքում հիմնականում տարածված են ավազներ, իրենց բազմաթիվ տարատեսակներով:

Հիդրոերկրաբանական պայմաններ

Ա) Մակերևութային ջրեր

Ապարանի շրջանը հիդրոերկրաբանական տեսակետից գտնվում է Քասախ գետի միջին հոսանքում: Ստորգետնյա ջրերը պատկանում են լճալեռնային գոյակցություններին և ճաքոցված անդեզիտաբազալտներին: Ստորերկրյա ջրերի սնուցումն իրականանում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի, ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջավայրի ջրերի հոսքի միջոցով:

Ապարան քաղաքի շրջանում հիմնական մակերևութային ջրերի աղբյուր է հանդիսանում Քասախ գետը, որը հոսում է քաղաքի կենտրոնական մասով:

Քասախ գետը

Ապարանի շրջանը հիդրոերկրաբանական տեսակետից գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում: Ստորգետնյա ջրերը պատկանում են լճալեռնային գոյացություններին և ճաքոցված անդեզիտաբազալտներին: Ստորերկրյա ջրերի սնուցումն իրականանում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջավայրի ջրերի հոսքի միջոցով:

Բ) Գրունտային ջրեր

Քաղաքի տարածքում հանդիպում են նաև գրունտային ջրեր: Նրանք պատկանում են այլուվիալ-դելյուվիալ, պրոյուվիալ նստվածքներին և սնվում են մակերևութային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Նրանք քաղաքի տարածքում հանդիպում են 1,5-6մ խորության վրա տեղ-տեղ մինչև 5-5,5մ:

Գրունտային ջրերը առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ-մայիս ամիսներին, իսկ նվազագույնը՝ օգոստոս-նոյեմբեր ամիսներին:

Կենսաբազմազանություն

Ապարան քաղաքի և դրա մերձավոր տարածքների կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆորոստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Ապարանը գտնվում է Իրանական բուսաբանաաշխարհագրական ֆորոստական շրջանում: Հյուսիս-արևմուտքից այդ շրջանը բաժանվում է Հայկական լեռնաշխարհի ֆորոստական շրջանից՝ Արևելքից Իրանական շրջանը կտրվել անջատվում է Հայկական լեռնաշխարհի Գեղամա և Չանգեզուրի լեռնաշրջանների ջրբաժաններով: Այնուհետ, սահմանը անցնում է Բարգուշատի և Չանգեզուրի լեռնաշրջաններով: Հարավից և արևմուտքից Իրանական շրջանը դուրս է գալիս Հայաստանի սահմաններից դուրս և մեծ տարածքներ զբաղեցնում Հյուսիսային Պարսկաստանում, Նախիջևանում և

Թուրքիայում:

Եթե բուսական աշխարհը սերտ կապված է բնակչության, մորֆոլոգիայի, աշխարհագրական և այլ պայմանների հետ, որոնք հստակեցնում են և կանոնավոր կերպով տարանջատում տարբեր տիպի ֆլորաների սահմանները, ապա համաձայն Ա. Դալի կենդանաբանական աշխարհի տարածման սահմանները ավելի անորոշ են ու արդու, ավելի լայն և դժվար են սահմանազատվում շնորհիվ իրենց շարժունակության և ապրելակերպի առանձնահատկությունների (բնակչություն, նստակյաց կամ չվող կենսակերպ, արտազոնալ բնակատեղիի առատություն):

Ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչների հիմնական մասը բնորոշ է միջին բարձրության լեռնային, չափավոր չորային կլիմայով տափաստանային լանդշաֆտային գոտային:

Բուսական աշխարհ

Բուսական աշխարհը ներկայացված է Շիրական և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային գոտային տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկա և հատիկա-տարազգի ներկայացուցիչները: Համաձայն Նախկինում կատարված հետազոտությունների, այստեղ անդեզիտա-բազալտային և տուֆալավային մայր ապարների վրա տարածված տարավայրերում տիպիկ և սովորական սևահողերով տափաստանային տարածքներում կարելի է հանդիպել մոտ 150 բուսատեսակ: Դրանցից որպես դոմինանտ կամ բնորոշ տեսակներ կարելի է նշել Festuca sulcata(Շյուրախոտ), Artemisia austriaca Jack (Բարձրավայրային), Koeleria nitidula Vel (Կեյերիա), Thymus-ի տեսակներ (Ուրց), Aegilops cylindrical Host (Այծակ), Scabiosa virgata Gross (Քոսոսկ), Achillea micrantha M.B. (Հագարատերևուկ) և այլն:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, անտառահատում, ոռոգում և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային գոտային տեսակների ինչպես կազմը, այդպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը: Մասնագետների կարծիքով այսօր պահպանության կարիք ունի ֆլորայի տեսակների մոտ 50 տոկոսը:

Ստորև աղյուսակում բերված են Ապարան քաղաքի մերձակալ տարածքներում պահպանության կարիք ունեցող բուսատեսակները: Հարկ է նշել, որ աղյուսակը կազմված է Հայաստանի ԽՍՀ բուսականության Կարմիր Գրքի հիման վրա: Աղյուսակում բերված է նաև յուրաքանչյուր տեսակի պահպանության կարգավիճակը ըստ Կարմիր Գրքում կատարված դասակարգման (1- անհետացման վտանգի տակ գտնվող, 2-հազվագյուտ):

Պահպանության կարիք ունեցող ֆլորայի տեսակները

| Հ/հ | Բուսատեսակների անվանումը | | Պահպանության կարգավիճակ |
|-----|--------------------------|-----------------------|-------------------------|
| | Լատիներեն | Հայերեն | |
| 1 | Centaurea Takhtajanii | Տերեփուկ Թախտաջյանի | 1 |
| 2 | Hieracium pannosum | Ճառակախոտ փրչոտ | 1 |
| 3 | Cephalaria Tchihatchevii | Ձիվան Չիխաչևի | 2 |
| 4 | Astragalus Massalskyi | Գագ Մասալսկու | 2 |
| 5 | Aloea Sophial | Տուղտավարդ Սոֆիայի | 1 |
| 6 | Rheum Ribez L. | Խավթիղի հազարաջանման | 1 |
| 7 | Juniperus excelsa | Գիլի պազմապտուղ | 3 |
| 8 | Oenanthe Sophiae | Գինեձաղիկ Սոֆիայի | 0 |
| 9 | Pseudovesicaria | Կեղծափուչիկ մատնային | |
| 10 | Sambucus Tigrani | Թանթրվենի Տիգրանի | 2 |
| 11 | Empetrum hermaphroditum | Ակնաթուփ երկտեռ | 2 |
| 12 | Oxitropis Karjagini | Գառնառվույտ Կարյագինի | 1 |
| 13 | Cephalanthera rumra | Եղբորոսի կարմիր | 2 |
| 14 | Dactylorhiza euxina | Դակտիլորիզի Էվքսինյան | 2 |

Կենդանական աշխարհ

Ապարան քաղաքի և դրա շրջակայքի համար դիտարկվում են միայն ողնաշարավոր կենդանիները, քանի որ Գլխավոր հատակագծով նախատեսված աշխատանքները Էսկան ոչ մի ազդեցություն չեն ունենա անողնաշարավոր կենդանիների վրա:

Նկարագրվող տարածքում տարածված են միջին բարձրության (մինչև 1600 մ ծովի մակերևույթից բարձր) լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Սակայն այստեղ հանդիպում են նաև արտազոնալ բնակավայրերին (կմառքային սարեր, քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ: Համաձայն հրապարակված տվյալների, այս լանդշաֆտային գոտային տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ (որոնցից 82-ը՝ հանդիպում են նաև արտազոնալ բնակատեղիներում), այդ թվում 28 (20) կաթնասուն, 67 (41)՝ թռչուն, 15 (8)՝ սողուն և 3 (3)՝ երկկենցաղ: Կաթնասուններն առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնք մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց տարածքների բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանոց տեսակներ:

Սկյա տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված Crocidura (Սպիտակատամիկ), Canis lupus (Գայլ), Vulpes vulpes (Աղվես), Cricetus auratus Nat (Գերմանամուկ), Murotus arvalis Pall. (Դաշտամուկ), Perdix perdix L.(Կաքավ), Grus grus L. (Կռունկ) և այլն:

Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վերացում, ոռոգում, ավտոճանապարհների և այլ գծային կառուցվածքների կառուցում, օգտակար հսկածների արդյունահանում և վերամշակում, որսագողություն և այլն) կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել: Կենդանական աշխարհի պահպանության նպատակով դրանց զգալի մասը վերցված է հատուկ պահպանության տակ և գրանցված է Հայաստանի Հանրապետության, Նախկին ԽՍՀՄ և Բևուսական Պահպանության Միջազգային Միության (ԲՊՄՄ) Կարմիր Գրքերում: Ստորև, աղյուսակում բերված են Կարմիր Գրքերում գրանցված կենդանիների տեսակները ըստ պահպանության կարգավիճակի (1- անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, 2-անհետացող, կրճատվող):

Պահպանության կարիք ունեցող ֆաունայի տեսակները

| Հ/հ | Կենդանիների անվանումը | | Գրանցման կարմիր գրքի անվանում | | |
|-----|-------------------------------|-----------------------|-------------------------------|------|------|
| | Լատիներեն | Հայերեն | ՀՀ | ԽՍՀՄ | ԲՊՄՄ |
| 1 | Vormela peregusna | Հարավուսական խայտաքիս | 2 | 2 | - |
| 2 | Circaetus golicus Gmelin | Եվրոպական օձակեր | 1 | 1 | - |
| 3 | Luscinia svecica occidentalis | Իրանական կապտափող | 2 | - | - |
| 4 | Lacerta oarva Boulenger | Փոքրասիական մողես | 1 | 1 | - |

Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումներին իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում և նոր տարածքներ գրեթե չեն ներառում: Սակայն շինարարության և բարեկարգման ընթացքում անհրաժեշտ է լինում հատել թփեր և ծառեր: Ծառաթփերի բուսականության վրա բացասական ազդեցության ի սկզբանե կանխարգելման և պահպանության նկատառումներից ելնելով նախագծման ընթացքում ջրատարների ուղեգծերն ընտրվել են այնպես, որ նրանք հնարավորին ջիջ չհասնի հատված ծառերի հետ:

Ծառերի հաշվեհիշիչը պահպանելու նպատակով նախագծում ընդունված է ծառերի հատումից անտառին հասցված վնասը հատուցել շրջանին բնորոշ ծառատեսակների (այնատերև) նոր տնկումներով: Ընդ որում ընդունվել է, որ մեկ ծառ տնկելու արժեքը կազմում է 1300 դրամ (կամ մոտ 2.8 ԱՄՆ դոլար):

Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բերի ոչնչացմամբ: Սակայն կենդանիներն այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կտուն են նոր բերի և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ջրատարների կառուցման ընթացքում պայթեցման և ամենախտենակի շինարարական աշխատանքները կիրականացվեն ձմարդման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ- մայիս) դուրս: Բացի այդ, պայթեցումների ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով դրանք կիրականացվեն փոքր հզորության լիցքերով:

Ընդհանուր առմամբ, համակարգերի վերակառուցման աշխատանքների ազդեցությունները կկրեն լուրջ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիների հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբն այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

3 Տարածքի ընդհանուր Էկոլոգիական բնութագիրը

Տարածքի ընդհանուր Էկոլոգիական բնութագրման նպատակը կայանում է տարածքի շրջակա միջավայրի բացահայտման, ինչպես նաև տարածքի ընդհանուր Էկոլոգիական պարամետրերի՝ ինժեներաէկոլոգիական բնութագրերի և ինդեքսների, որոշման մեջ:

Ինժեներաէկոլոգիական բնութագրերը

Տարածքի ժողովրդագրական ծավալը կամ շենքային ժողովրդագրական ծավալը, դա բնակչության առավելագույն թիվն է, որը կարող է տեղակայվել տվյալ տարածքի սահմաններում՝ պայմանով, որ պետք է բավարարվեն բնակչության ամենօրյա կարևոր պահանջները տեղանքի պաշարների հաշվին, առանց Էկոլոգիական հավասարակշռության խախտման:

Աղյուսակներական և քաղաքացիական շինարարության համար պիտանի տարածքների անկայության բնութագրող ժողովրդագրական ծավալը կազմում է.

$$D_i = \sum_{i=1}^n T_i \cdot 1000 / H, \text{ որտեղ.}$$

Ti - T-ի տարածքն է, որը ստացել է առավելագույն գնահատականը, հա:

Ti = 496,85 հա;

H - Հագար բնակչին անհրաժեշտ տարածքն է, կախված տարածքի արտադրական բազայի բնույթից:

H=30

D1=16561 մարդ

2. Տարածքի ժողովրդագրական ծավալը ըստ ջրային պաշարներով ապահովման որոշվում է.

D=D₁+D₂, որտեղ.

D - Տարածքի ընդհանուր ժողովրդագրական ծավալն է, ըստ ջրային պաշարների, մարդ:

D₂ - Մասնակի ժողովրդագրական ծավալն է, ըստ մակերևութային ջրերի, մարդ:

D₃ - Մասնակի ժողովրդագրական ծավալն է, ըստ խորքային ջրերի:

Ք

D₂ = P₁ × K

Pl

ΣP₁-մակերևութային հոսքի ջրային պաշարները (հազ. մ³/օր)-71,712

K-օգտագործման չափի գործակից-0,25

Pl-1 բնակչի նորմատիվային ջրապահովվածությունը (1000մ³/օր)

$$D_2 = \frac{71712 \cdot 0,25 \cdot 1000}{1000} = 17928$$

D₃ = Ք^{''} × Y_T · 1000 / P₀ մարդ, որտեղ

Tr-տարածքի մակերեսն է, կմ²-5,23

h- խմելու որակի ջրային պաշարները մ³/օր (կմ³)-125,5

P₀ = 40մ³/օր

D₃ = 16415 մարդ

D = 34343 մարդ

3. Ռեկրեացիոն պաշարների առումով տարածքի ժողովրդագրական ծավալը որոշվում է. D₃ = D₁ + D₃ բանաձևով, որտեղ`

D₁ = Tr · E · 0,5 · 1000/100 · H · M

Tr - Տարածքի մակերեսն է - 523հա

h - Տարածքի անտառապատվածությունը % -1:

H - 2 կմ²

M - 0,3

D₁ = 4358 մարդ

4. Ձրային ավազակի մոտ հանգստի կազմակերպման պայմաններով ժողովրդագրական ծավալը որոշվում է.

D₃ = 2 · B · C · 1000/0,5 · M մարդ, որտեղ.

B - Գետի հատվածն է, որտեղ կարելի է լողալ, կմ-3,0կմ

C - Գործակից, որը հաշվի է առնում լողափների կազմակերպման հնարավորությունը, տափաստանային գոտու համար C=0,5

0,5 - 1000 բնակչին անհրաժեշտ լողափների մոտավոր նորմատիվն է:

M₁ - Գործակից, որը հաշվի է առնում հանգստացողների տեղաբաշխումը անտառում և ջրի մոտ - M₁ = 0,4 - չոր կլիմա ունեցող շրջանի համար:

D₃ = 15000 մարդ; D₃ = 19358 մարդ

Այսպիսով, ստացված տվյալների համաձայն որպես ժողովրդագրական ծավալի վերջնական ցուցանիշ ընտրված է` նվազագույնը` ~16500 մարդ:

5. Տարածքի վերարտադրողական ունակությունը մթնոլորտային թթվածնի օգտագործմամբ որոշվում է.

Pk = Ք · C · T · K₁ տ, որտեղ.

Pk - Արգասավորությունն է ըստ թթվածնի, տ

C - Օրգանական նյութի տարեկան արտադրողականությունն է i-րդ բուսական խմբավորումից, տ/տարի-6տ/հա

K₁ - Անցման գործակից - 1,45

T - Կանաչապատ տարածքների մակերեսն է, հա T=291,44հա

կա=2535,5տ

6. Ձրային պաշարների վերարտադրողական ունակությունը որոշվում է.

P₆ = Ք · T₁ · I · K₂ մ³, որտեղ.

I = 10,1լ/մ³

K₂ = 0,5

T₁ = 523 հա

P₆ = 525 · 10,1 · 0,5 = 2641,15մ³

7. Տարածքի վերարտադրողական ունակությունը բուսականությունով որոշվում է.

P₇ = Σ C_i · T_i, որտեղ.

P₇ - Տարածքի վերարտադրողականությունն է ըստ բուսական մասսայի, տ

C_i - 1 հա բուսականությամբ տարածքի տարեկան վերարտադրողականությունն է, տ

T - Կանաչապատ տարածքն է, հա - 291,44 հա

կ₇ = 1748,64տ

8. Տարածքի դիմադրողականությունը ֆիզիկական բեռնվածությամբ:

Սա բնութագրում է այս կամ այն լանդշաֆտային դիմադրողականությունը ֆիզիկական անտրոպոգեն ազդեցություններին (ռեակրացիոն,

տրանսպորտային և ուրիշ ազդեցություններ):

Տարածքի հարաբերական դիմադրողականությունը ֆիզիկական ազդեցություններին որոշվում է.

$$Y_{\Phi} = \sum_{i=1}^n Y_i \cdot T_i / Y_1 \cdot T, \text{ որտեղ.}$$

δ₁ - Տարածքի դիմացկունության գործակիցն է, որը միշտ < 1:

δ_i - i -րդ տարածքի դիմացկունությունն է, մարդ/հա - 33:

T_i - i -րդ տեղամասի մակերեսն է, հա - 496,85:

δ₁ - Էտալոնային լանդշաֆտի դիմացկունությունն է ֆիզիկական ազդեցություններին, մարդ/հա - 200:

T - Տարածքի մակերեսն է, հա - 523

$$Y_{\Phi} = \frac{33 \cdot 496,85}{200 \cdot 523} = \frac{16500}{104600} = 0,16 < 1$$

4. Տարածքի տնտեսության ներկա իրավիճակի բնութագիրը և զարգացման հեռանկարները
Ապարան քաղաքի տարածքը կազմում է 523 հա: Բնակչությունը կազմում է ըստ տեղական իշխանությունների հաշվարկի 6,6 հազար մարդ:
Ապարան քաղաքում տեղակայված են 10-ից ավելի արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց մեջ մասնագիտացված ճյուղը գործազորությունն է և
նադիտեխնիկական: Քաղաքում կան սննդի, թեթև արդյունաբերության արտադրություններ, ինչպես նաև գյուղ մթերքների վերամշակման, հացաթխման
գործարան, Ապարանի ԲՈՒՄՏ ԲԲ տրանսպորտային ընկերությունը, «ՆԻԳ» ՓԲ ընկերությունը:

Նշված արտադրությունների մեծ մասը սեփականաշնորհված է:

Հեռանկարում նախատեսվում է արդյունաբերական ձեռնարկությունների առավել արդյունավետ շահագործում և վերազինում, նոր արդյունաբերական
ձեռնարկությունների շահագործում:

Ապարան քաղաքի շրջակա միջավայրի ներկա իրավիճակը

5. Մթնոլորտային օդի պահպանություն

5.1 Մթնոլորտային մոտեցումներ

Որպես որոշիչ հայեցակարգ ընդունված է` առաջնահերթ միջոցառումների առանձնացումը, որոնց իրականացումը թույլ չի տա օդային ավազակի

արտոտվածության մակարդակի բարձրացում: Օդային ավազակի արտոտվածության վիճակի գնահատականն ընդգրկում է հետևյալ Էտալները`

- առաջնային ձեռնարկությունների և վնասակար նյութերի դասակարգումը (ռանգավորումը) :

- մթնոլորտ համախառն արտանետումների որոշումը (զումարային և ինգրեդիենտներով) արդյունաբերության, էներգետիկայի, ավտոտրանսպորտի

արտանետումների տեսակարար կշիռն գնահատմամբ:

- ամբողջական աղբյուրների արտանետումներից մթնոլորտային օդի արտոտվածության մակարդակների որոշումը և ցրման արեալների որոշումը:

- մթնոլորտային օդի արտոտվածության գոտիների գնահատումը հիգիենիկ իրավիճակով

- քաղաքի տարածքի գնահատումը ըստ օդային ավազակի արտոտվածության իրավիճակի բարենպաստության աստիճանի:

Արդյունաբերական ձեռնարկությունների համախառն արտանետումների մասին տեղեկությունները վերցված են ՄԹԱ-ի նախագծերից և «2Ձկ-օդ»

տարեկան հաշվետվություններից: Ձեռնարկությունների և կոմունալ կաթսայատների արտանետումները որոշված են հաշվարկային եղանակով, կաթսաների

և վառելիքի քանակի հիման վրա:

Ավտոտրանսպորտի արտանետումները որոշված են քաղաքում հաշվառված ավտոմեքենաների քանակից և խմբերից էլեմով (քաղաքի

պետավտոտեսչության արտանդրած տվյալները):

Մթնոլորտային օդի արտոտվածության մակարդակները (առավելագույն մեծագետնային կոնցենտրացիաները) և տեխնոգեն ցրման արեալները որոշված են

հաշվարկային եղանակով, համակարգչով` «Ռադոլգա» ծրագրով:

Տարածքի գնահատականն օդային ավազակի իրավիճակով տրված է բազմաբնույթ անալիզի հիման վրա` մետեոպոտենցիալի, ուլտրամանուշակագույն

ճառագայթման, տեղումների, ռելիեֆի և սոցիալ-տնտեսական ցուցանիշների (բնակչության խտություն, արդյունաբերական պոտենցիալ, ավտոճանապարհների խտություն, ֆոնային աղտոտվածություն) հաշվառմամբ:

Տեխնոգեն ցրման ստացված արեալներն իրենց բնութագրերով ցույց է տրված 1:5000 մասշտաբի հատակագծի վրա:
Աշխատանքում բոլոր տվյալները բերված են 01.01.2005թ. դրությամբ:

5.2 Մթնոլորտի աղտոտվածության ներկա իրավիճակը

Մթնոլորտի աղտոտվածության մակարդակները ըստ ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի մոնիտորինգի կենտրոնի տվյալների բերված են աղյուսակ 1-ում (3, 4):

Աղյուսակ 1

Ապարան քաղաքի մթնոլորտում աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները

| դր/հ | Աղտոտող նյութերի կոդերը և անվանումները | ՄԹԿ-ն բնակելի գոտում, մգ/մ³ | Ֆոնային կոնցենտրացիաների արժեքները, մգ/մ³ |
|------|--|-----------------------------|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | 002-Փոշի | 0,5 | 0,2 |
| 2 | 701-Ծծմբի երկօքսիդ | 0,5 | 0,02 |
| 3 | 200-Ազոտի երկօքսիդ | 0,085 | 0,008 |
| 4 | 322-Ածխածնի օքսիդ | 5 | 0,4 |

Ինչպես երևում է 1 աղյուսակից Ապարան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակները գտնվում են բնակելի գոտու համար սահմանված նորմերում:

Քաղաքի ֆիզիկաաշխարհագրական և կլիմայական պայմանները խոչընդոտում են մթնոլորտում վնասակար նյութերի ցրմանը՝ ինչի հետ կապված տարածքը դասվում է մթնոլորտի աղտոտվածության բարձր պոտենցիալ ունեցող գոտիների շարքը:

5.3 Մթնոլորտի աղտոտման աղբյուրները

Ապարան քաղաքի մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուրները հանդիսանում են արդյունաբերական ձեռնարկությունները և ավտոտրանսպորտը: Արդյունաբերական ձեռնարկությունները այժմ գործում են իրենց հզորությունների 5-10%-ի չափով: Բացի դրանից քաղաքում գործում են մի շարք փոքր ձեռնարկություններ, որոնք քաղաքի աղտոտվածության մակարդակում որոշիչ ներդրում ունեցող աղբյուրներ չեն հանդիսանում:

Ձեռնարկությունների և վնասակար արտանետումների դասակարգումը ըստ վնասակարության ինդեքսի (5)

Դասակարգումը կատարված է՝

$$r = \frac{M}{\text{ՄԹԿմ.մ.}} \text{ բանաձևով՝ ինգրեդիենտների համար,}$$

$$r = \frac{M}{\text{ՄԹԿմիջին.օր.}} \text{ ձեռնարկությունների, որտեղ՝}$$

r- ինգրեդիենտների վնասակարության ինդեքս

r-բերված համախառն արտանետում:

M-վնասակար արտանետումների տարեկան քանակն է, տ/տարի

ՄԹԿմ-մաքսիմալ միանգամյա ՄԹԿ-ների արժեքներն են, մգ/մ³:

ՄԹԿ միջ. օր-միջին օրական ՄԹԿ-ները

Ձեռնարկությունների և վնասակար արտանետումների գերակայությունների ցանկը բերված են աղյուսակ 2 և 3-ում (6, 7, 8, 9):

Աղյուսակ 2

Ապարան քաղաքի գերակայող արդյունաբերական ձեռնարկությունների ցանկը

| դր/հ | Ձեռնարկությունների անվանումը | Համախառն արտանետումներ տ/տարի | Ձեռնարկության դասը | Սանիտարապաշտպանիչ գոտու չափը, մ |
|------|----------------------------------|-------------------------------|--------------------|---------------------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Կահույքի ֆաբրիկա | 2,9 | V | 50 |
| 2 | Բնակչության ջեռուցում | 13,6 | - | - |
| 3 | Ասֆալտ-բետոնի գործարան | 3,78 | - | - |
| 4 | «Ապարանի պանրի գործարան» ՓԲԸ | 1,65 | IV | 100 |
| 5 | Բետոնի արտադրություն | 1,7 | IV | 100 |
| 6 | «Նիգ» սարքաշինական գործարան | 0,43 | V | 50 |
| 7 | Ավտոտրանսպորտային ձեռնարկություն | 0,044 | V | 50 |
| 8 | Կարի ֆաբրիկա | 0,8 | V | 50 |
| 9 | «Աշոտ Մարգարյան» Ա/Ձ | 0,41 | V | 50 |
| 10 | Հացի գործարան | 0,33 | V | 50 |
| 11 | «Վահե-Մանե» ՍՊԸ | 0,21 | V | 50 |
| 12 | «Արագածի բերրիություն» ՓԲԸ | 0,2 | V | 50 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 25,55 | | |

Աղյուսակ 3

Ապարան քաղաքի մթնոլորտում գերակայող վնասակար արտանետումների ցանկը

| դր/հ | Անվանումը | Արտանետումների տարեկան քանակը, տ | Վտանգավորության դասը |
|------|--------------------------|----------------------------------|----------------------|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Ազոտի օքսիդներ | 2,71 | 2 |
| 2 | Բույթիլ սպիրտ | 2,1 | 3 |
| 3 | Ֆորմալդեհիդ | 0,6 | 2 |
| 4 | Ավազի փոշի | 6,06 | 3 |
| 5 | Ամիակ | 0,8 | 4 |
| 6 | Երկաթի օքսիդներ | 0,126 | 3 |
| 7 | Ածխածնի օքսիդ | 12,1 | 4 |
| 8 | Մանգանի օքսիդներ | 0,011 | 2 |
| 9 | Փայտափոշի | 0,523 | 3 |
| 10 | Ցեմենտի փոշի | 0,2 | 3 |
| 11 | Աբրագիլ և մետաղական փոշի | 0,314 | 3 |
| 12 | Ածխաջրածիններ | 0,035 | 4 |
| 13 | Ֆենոլ | 0,0001 | 2 |
| 14 | Ծծմբային անհիդրիդ | 0,0025 | 3 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 25,55 | |

Մթնոլորտի աղտոտման մեջ զգալի բաժինն ընկնում է ավտոտրանսպորտի վրա, որի արտանետումների քանակները ներկա իրավիճակում բերված են աղյուսակ 4-ում (10):

Աղյուսակ 4

Ավտոտրանսպորտից վնասակար արտանետումները մթնոլորտ

| Տրանսպորտի տեսակները | Աղտոտող նյութերը, տ/տարի | | | |
|----------------------|--------------------------|----------------|---------------|----------|
| | Ածխածնի օքսիդ | Ազոտի օքսիդներ | Ածխաջրածիններ | Ընդամենը |
| 1. Բեռնատար | 122,5 | 5,33 | 14,9 | 142,5 |
| 2. Ավտոբուսներ | 20,2 | 0,9 | 2,5 | 23,6 |

| | | | | |
|-------------|-------|------|------|-------|
| 3. Մարդատար | 20,4 | 1,2 | 2,8 | 24,4 |
| Ընդամենը | 162,9 | 7,43 | 20,2 | 190,5 |

Ներկայումս քաղաքի ջերմամատակարարումն իրականացվում է անհատական: Կոմունալ և արդյունաբերական կաթսայատները հիմնականում չեն գործում: Քաղաքը 80-90%-ով գազաֆիկացված է: Ներկա իրավիճակում Ապարան քաղաքում գործում են 7 կաթսայատներ՝ 2-ը դպրոցների համար, 1-ը հիվանդանոցի, 4-ը՝ 6 բնակելի շենքերի համար: Բնակչության մասնա մասն օգտվում է անհատական գազային վառարաններից:

Ապարան քաղաքի մթնոլորտն աղտոտող աղբյուրների բնութագիրն աղտոտման ծավալներով և տնտեսությանը հասցված տնտեսական վնասի գնահատականով բերված է աղյուսակ 5-ում (11):

Աղյուսակ 5

Մթնոլորտ արտանետումների տարեկան քանակները և հասցված տնտեսական վնասները

| Անվանումը | Արտանետումների քանակը, տ/տարի ներդրման % | Տնտեսությանը հասցված տնտեսական վնասը, հազ. դրամ/տարի |
|--------------------------------------|---|--|
| 1 | 2 | 3 |
| 1. Արդյունաբերական ձեռնարկություններ | 11,95 5,5 | 756,9 |
| 2. Ավտոտրանսպորտ | 190,5 88,2 | 819,5 |
| 3. Կաթսայատներ | 13,6 6,3 | 175,3 |
| Ընդամենը՝ | 216,05 100 | 1751,7 |

Ապարան քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններից ներկա իրավիճակում մթնոլորտ են արտանետվում տարեկան 11,95 տ վնասակար նյութեր: Առաջնային վնասակար նյութեր են հանդիսանում 14 ինգրիդիենտ՝ 2-4 դասի վտանգավորություն:

Հիմնական աղտոտման աղբյուր հանդիսանում է ավտոտրանսպորտը:

Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետումները ներկա իրավիճակում կազմում են տարեկան ~ 190,5 տ, որը կազմում է քաղաքի ամբողջ արտանետումների 88,2%:

Ավտոտրանսպորտի մթնոլորտ վնասակար արտանետումներից տնտեսությանը հասցված վնասը ներկա իրավիճակում գնահատվում է տարեկան 819,2 հազ. դրամ, արդյունաբերական ձեռնարկություններից արտանետումներից՝ 756,9 հազ. դրամ:

Ընդհանուր տնտեսական վնասը մթնոլորտի աղտոտումից կազմում է տարեկան 1,7 մլն. դրամ:

5.4 Տարածքի համալիր գնահատականը

Տարածքի համալիր գնահատականը տրված է (2)-ի հիման վրա: Տարածքի համալիր գնահատականը տրված է տեղանքի կլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ:

Օդային ավազանի գնահատականը բերված է աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

Օդային ավազանի գնահատականն անտրոպոգեն ազդեցությամբ, հիգիենիկ իրավիճակով և տարածքի համալիր գնահատականը

| Անվանումը | գնահատականը | | | Աղտոտման մակերեսը բնակելի գոտում, հա |
|-----------|-------------------------|---------------------|-----------------------------|--------------------------------------|
| | անտրոպոգեն ազդեցությամբ | հիգիենիկ իրավիճակով | տարածքի համալիր գնահատականը | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 Գոտի | թույլ ազդեցության գոտի | վտանգ չի հարուցում | բարենպաստ | 523 |

Անտրոպոգեն թույլ ազդեցության գոտին կազմում է 523հա: Տարածքի համալիր գնահատականը՝ բարենպաստ:

6. Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանություն

Բաժինն ընդգրկում է գումարային տվյալների արդյունքների և քաղաքի ջրային միջավայրի վիճակի պահպանման վերաբերյալ առաջարկությունների շարադրում:

Բաժնի հիմնական փուլերն ընդգրկում են՝

- մեթոդակարգային հիմնավորում.
- ներկա վիճակի վերլուծություն.
- կանխատեսելի էկոլոգիական արդյունքներ և միջոցառումների տնտեսական էֆեկտիվություն.
- շրջակա ջրային ավազանի պահպանման միջոցառումների վերաբերյալ հիմնական դրույթներ:

6.1 Մեթոդակարգային հիմնավորում

Ինչպես հիմնական էկոլոգիական հայտանիշներ ընդունված են՝

- աղտոտվածության ծավալի գնահատման համար վնասակարության ինդեքս (LՑ);
- աղտոտվածության ինտենսիվության բնութագրման համար-տարածված բազմապատիկությունը մինչև սահմանային-թույլատրելի նորմաները:

6.2 Քաղաքի ջրամատակարարման և կոյուղու ներկա իրավիճակը

Ապարան քաղաքի տարածքի համար խիստ կարևոր նշանակություն ունի ջրային ավազանի պահպանությունը:

Տարածքը տեղակայված է Քասախ գետի միջին հոսանքում, որտեղ գետի հունի երկարությամբ 350-500 մետրի լայնությամբ գոմատային ջրերը գտնվում են 1,5-3մ խորության վրա: Գոմատային ջրերը ենթակա են կեղտոտման, քաղաքի արդյունաբերական և կենցաղային օբյեկտներից հեռացվող կեղտաջրերից, անծրևաջրերից, ոռոգման ցանցի ջրերից:

Ջրամատակարարումը

Ապարան քաղաքն ունի կենտրոնացված ջրամատակարարում: Բնակչության, ինչպես նաև արտադրական ձեռնարկությունների խմելու և տնտեսական կարիքների պահանջարկն իրականացվում է քաղաքի հյուսիսային և հարավային մասում գործող օրվա կարգավորիչ ջրամբարներից (ՕԿՁ):

Քաղաքի հյուսիսային մասի 2000մ². ՕԿՁ-ի սնուցումն իրականացվում է «40 աղբյուրներից»(Ժամի աղբյուր), որի ջրերը հավաքվում և ուղարկվում են երևան (702/վրկ), իսկ հարավային ՕԿՁ-ի սնուցումը՝ «Եզնակի աղբյուրից» (50-60/վրկ):

Այստեղ կա 2x600մ² ջրամբար և մեկ հատ 2000մ² ջրամբար կիսակառուց վիճակում: Այդ 2000 մ² տարողությամբ ՕԿՁ-ն գտնվում է «ՆԻԳ» գործարանի արևմտյան մասում, որն այժմ չի օգտագործվում, քանի որ «Եզնակի աղբյուրից» 300մ² ջրագիծը մինչև ՕԿՁ չի գործում:

Կերքին տարիներին Ապարան քաղաքի ջրապահանջը բավարարելու նպատակով նախատեսվել է Ջաղիձորի աղբյուրների տարածքից 150-200մ տրամագծի խողովակով 4,5կմ երկարությամբ ջրագծի կառուցում, մինչև հյուսիսային ՕԿՁ: Սակայն խողովակները քայքայվել են, իսկ ջրագիծը միացված չէ:

Քաղաքի ջրամատակարարման ներքին ցանցի երկարությունը մոտ 47կմ է, որի 70%-ը վթարային է, քանի որ կառուցված է դեռևս 60-70-ական թթ.-ի սկզբին: Քաղաքի հյուսիսարևելյան նոր թաղամասերը ջուր չունեն:

Քաղաքի Կենտրոն թաղամասի ջրամատակարարումն իրականացվում է 1997թ. կառուցված 250մ ջրագծով «Եզնակի աղբյուրից»:

Ջրահեռացում (կոյուղի)

Ապարան քաղաքը կոյուղացված է մասնակի: Կոյուղու ցանցի ընդհանուր երկարությունը ընդամենը 9 կմ է: Քաղաքի հյուսիսային և հարավային թաղամասերը, «Բեռնոտական թաղամասը» կոյուղացված չեն:

Քաղաքի հիմնական կոյուղագիծն անցնում է Բաղրամյան և Գ. Նժդեհի փողոցներով, միանալով իրար քաղաքի կենտրոնի տարածքում թափվում է Քասախ գետը:

Բացի դրանից արտադրական ձեռնարկությունների հոսքաջրերը կոյուղու ցանց են թափվում առանց նախնական մաքրման վրա:

Կենտրոնական մասում գետի ամբողջ հունը ցցված է աղբով, ինչը հանգեցնում է քաղաքի սանիտարահիգիենիկ վիճակի վատթարացմանը:

Կոյուղու մաքրման կայանը գտնվում է Մուլքի գյուղից հյուսիս-արևելք ընկած հատվածում: Այն կառուցվել է 1980-ական թվականներին և նախատեսված է եղել նաև մտակա գյուղերի՝ Մուլքի, Լուսապուղի և Սարալանջի տնտեսակենցաղային հոսքաջրերի մաքրման համար: Սակայն ներկա վիճակում Ապարան քաղաքից դեպի մաքրման կայան կառուցված մոտ 1.5 կմ երկարությամբ, 500 մ տրամագծով գլխավոր կոյուղագիծը որոշ տեղերում խցանված է, որոշ տեղերում ջարդված, իսկ որոշ հատվածներ խառա վերացված:

Մաքրման կայանը գտնվում է ավերակ և թափանցիկ վիճակում:

Ներկա իրավիճակում ծախսն Ապարան քաղաքի կոյուղու ցանցում կազմում է 2.059 հազ. մ³/օր, այդ թվում՝

- տնտեսակենցաղային հոսքաջրեր -1.716 հազ մ³/օր
- արտադրական հոսքաջրեր-0.343 հազ. մ³/օր

Մակերեսային ջրերի հեռացումը

Մակերեսային ջրերի հեռացումը կատարված է ջրահեռացման բաց և փակ եղանակով: Ցածրահարկ բնակելի թաղամասերում ջրահեռացումը կատարվում է բաց եղանակով, ոռոգման նպատակով նախատեսվող փողոցների եզրով անցնող առվակների միջոցով: Փակ եղանակով ջրահեռացումը կատարվում է բարձրահարկ կառուցապատված թաղամասերում: Մակերեսային ջրերի հեռացումն իրականացվում է դեպի Քասախ գետը:

Մղտոտման հիմնական աղբյուրները

Քասախ գետի վրա նկատելի աղբեղություն է թողնում Ապարան քաղաքը:

Մղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում

- Քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները, որոնցում լուրջ մաքրման կայանների բացակայության հետևանքով գետն են թափվում աղտոտված հոսքերը:

- Քաղաքի տնտեսակենցաղային հոսքաջրերը , որոնք առանց կենսաբանական մաքրման թափվում են գետ:

- Քաղաքի անձրևային հոսքաջրերը:

Ներկայումս Ապարան քաղաքի հոսքաջրերից տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է տարեկան 17,25 մլն դրամ, այդ թվում

■ տնտեսակենցաղային հոսքաջրերի արտահոսքից-12,96 մլն. դրամ

■ արտադրական հոսքաջրերի արտահոսքից-1,89 մլն. դրամ

■ անձրևային հոսքաջրերի արտահոսքից-2,4 մլն. դրամ:

6.3 Ջրային միջավայրը աղտոտող ձեռնարկությունների բնութագիրը

Ձեռնարկությունների բնութագիրը տրված է ըստ վնասակարության ինդեքսի (կմ/տարի):


LԹ=V.n; որտեղ

V- հոսքաջրերի փաստացի ծավալը, մ³/տարի;


n-նոսրացման բազմապատիկ՝ անգամ

Ձեռնարկությունների դասակարգումը բերված է գրաֆիկով: Ձեռնարկությունների վերաբերյալ տվյալները տրամադրվել է ՀՀ Բնապահպանության նախարարությունը (2ՁԿ -ջուր, ԹՍԱ-ի նորմաներ):

Ձեռնարկությունների բնութագիրը ըստ վնասակարության ինդեքսի պատկերված է գրաֆիկորեն



Ձեռնարկությունների բնութագիրը ըստ ջրային ավազանի աղտոտման հետևանքով տնտեսությանը հասցված վնասի բերված է գրաֆիկորեն



Ինչպես երևում է գրաֆիկներից , մակերևութային ջրերի աղտոտման հիմնական աղբյուրը ներկայումս Ջրմուղ-Կոյուղի տնտեսությունն է, կաշվի մշակման, պանրի և սարքաշինական գործարանները, ուղևորաավտոտրանսպորտային ձեռնարկությունը:

6.4 Տարածքի բնութագիրը մակերևութային և ստորգետնյա ջրերի իրավիճակով

Ապարան քաղաքի վարչական տարածքով է անցնում Քասախ գետը: Քասախ գետը սկիզբ առնելով Արագածի լանջերից թափվում է Սևջուր գետը Էջմիածնից դեպի հարավ-արևմուտք:

Սևջուր գետը սկիզբ է առնում Ակնալճից և հոսում է դեպի Արաքս:

Ոռոգման նպատակով քաղաքի փողոցների ջրման, ձեռնարկություններում տեխնիկական ջրամատակարարման նպատակով օգտագործվում են արտեզյան ջրհորներ:

1. Օգտագործվել են Քասախ գետի հիդրոէներգաբանական տվյալները

2. Քասախ գետի ֆոնային աղտոտվածությունների (ՍԹԿ-ի մասով) մակարդակները, որոնք տրամադրվել է ՀՀ Բնապահպանության նախարարության բնական միջավայրի մոնիտորինգի կենտրոնը: (Հավելված)

3. Քասախ գետի ափերի անտառապատվածությունը, լանջի ցուցադրանքը: Տարածքի գնահատականը տրված է "Рекомендации по охране окружающей среды в районной планировке" հիման վրա:

Հաշվարկների արդյունքները բերված են աղյուսակ 6.1-ում:

Տարածքն ինչպես մակերևութային , այնպես էլ ստորգետնյա ջրերի իրավիճակով բնութագրվում է բարենպաստ:

Աղյուսակ 6.1

Տարածքի գնահատականը մակերևութային և ստորգետնյա ջրերի իրավիճակով

| դր ը/ի | ՖԱԿՏՈՐ | Չափման միավոր | Փաստացի մակարդակը | Էքսպերտային գնահատականը | Բարենպաստության աստիճանը |
|---------------------------|---------------------------------|----------------------------------|----------------------|----------------------------|-----------------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 5 |
| Մակերևութային ջրեր | | | | | |
| 1. | Ջրառատություն | մ ³ /կրկ | 0,83 | 1 | ոչ բարենպաստ |
| 2. | Հոսանքի արագությունը | մ/կրկ | 0.5 | 3 | սահմանափակ բարենպաստ |
| 3. | Ջրի ջերմաստիճանը (ամառային) | °C | 16 | 3 | սահմանափակ բարենպաստ |
| 4. | Լանջի ցուցադրանքը | կողմնորոշումը | հարավ | 5 | բարենպաստ |
| 5. | Ափերի անտառապատվածությունը | % | <10 | 1 | ոչ բարենպաստ |
| 6. | Բնակչության խտությունը | մարդ/կմ ² | >200 | 1 | ոչ բարենպաստ |
| 7. | Արդյունաբերական պոտենցիալը | վտանգավորության դասը | IV-V | 5 | բարենպաստ |
| 8. | Տրանսպորտի առկայությունը | - | - | 1 | ոչ բարենպաստ |
| 9. | Ֆոնային կոնցենտրացիան | ՍԹԿ միավոր | >1 | 1 | ոչ բարենպաստ |
| 10. | ԹԿՊ | մգ Օ/լ | 2,2 | 5 | բարենպաստ |
| 11. | Ջրածնային իոնների կոնցենտրացիան | pH | 7,92 | 5 | բարենպաստ |
| 12. | Տարածքի համալիր գնահատականը | - | - | - | բարենպաստ |
| Ստորգետնյա ջրեր | | | | | |
| 1. | Պահպանման շերտի առկայությունը | հաստությունը, մ | >1 | 5 | բարենպաստ |
| 2. | Բուսականության առկայությունը | անտառապատ-վածությունը % | <5 | 1 | ոչ բարենպաստ |
| 3. | Բնակչության խտությունը | մարդ/կմ ² | >200 | 1 | ոչ բարենպաստ |
| 4. | Արդյունաբերական պոտենցիալը | աղտոտվածության հիմնական աստիճանը | IV-V | 5 | բարենպաստ |
| 5. | Տարածքի համալիր գնահատականը | - | - | - | բարենպաստ |

6.5 Քաղաքի ջրապահպան միջոցառումների հիգիենիկ էֆեկտիվության գնահատականը

Եթե քաղաքի հոսքաջրերը թափվում են բաց ջրավազան, ապա քաղաքի ջրապահական միջոցառումների մասին կարելի է դատել ելնելով քաղաքի հոսքաջրերն ընդունող գետի աղտոտվածության մակարդակից՝ քաղաքից վերև և ներքև ընկած հատվածում:
Տրապակախան միջոցառումների հիգիենիկ էֆեկտիվության գնահատականը տրված է համաձայն՝ /14, 15/
1. Методические рекомендации обработки данных, характеризующие санитарное состояние водных объектов. Минздрав РСФСР Москва 1983г
2. Методические рекомендации оценки гигиенической эффективности водоохранных мероприятий. Минздрав РСФСР Москва 1989г

Ինչպես հետազոտման ենթակա հատված վերցված է Քասախ գետն Ապարան քաղաքից վերև և ներքև ընկած հատվածում: Քասախ գետի աղտոտվածության ցուցանիշները տրամադրել է Հայելոմոնիտորինգը:

- Կատարվել է ստացված տվյալների խմբավորում ըստ՝
 - օրգանոլեպտիկ ցուցանիշների;
 - սանիտարատոկսիկ ցուցանիշների:
- Բոլոր փաստացի տվյալները բերվել են պայմանական անչափ միավորներով:

$$d_i = \frac{C_i}{N_i}, \text{ որտեղ}$$

d_i - փաստացի ցուցանիշի բազային գնահատական է;
 C_i - փաստացի աղտոտվածության ցուցանիշն է, գ/մ³;
 N_i - նորմատիվային ցուցանիշն է, գ/մ³;
 Այն դեպքում, երբ $C_i \leq N_i$, բազային գնահատականը վերցվում է 1:
 Յուրաքանչյուր խմբի առանձին ցուցանիշների համար հաշվարկվում է համալիր ցուցանիշ:
 Համալիր ցուցանիշը հաշվարկված է՝
 $W = \sum(d_i - 1) + 1$ բանաձևով, որտեղ
 W -համալիր ցուցանիշն է (համապատասխանաբար օրգանոլեպտիկ, սանիտարատոկսիկ);
 d_i - փաստացի ցուցանիշի բազային գնահատական է:
 Մշակված տվյալներից արվել է եզրակացություն
 Քասախ գետի աղտոտվածության մակարդակը մինչև Ապարան քաղաքի հոսքաջրերի արտահոսքն ըստ օրգանոլեպտիկ ցուցանիշների գնահատվում է 1,255 բալ, ըստ սանիտարատոկսիկ ցուցանիշների գնահատվում է 2 բալ:
 Ստացվածից հետևում է, որ Քասախ գետի աղտոտվածության մակարդակն Ապարան քաղաքից վերև հատվածում գնահատվում է չափավոր :
 Նմանատիպ հաշվարկների միջոցով գնահատվել է նաև Քասախ գետի աղտոտվածության մակարդակը քաղաքից ներքևի հատվածում: Ըստ օրգանոլեպտիկ ցուցանիշների գնահատականը 1,695 է: Ըստ սանիտարատոկսիկ ցուցանիշների գնահատականը կազմում է 2.3 բալ:
 Գետի աղտոտվածության մակարդակը քաղաքից ներքև հատվածում գնահատվում է՝
 - ըստ օրգանոլեպտիկ ցուցանիշների-բարձր
 - ըստ սանիտարատոկսիկ ցուցանիշների-բարձր:
 Քասախ գետի ռանգավորման հիման վրա հիգիենիկ դասակարգման օգտագործմամբ բնութագրվում է քաղաքում ներդրված ջրապահական միջոցառումների արդյունավետությունը:
 Քաղաքից վերև և ներքև փաստացի ցուցանիշների բազային գնահատականների տարբերությունը՝
 $\Delta W = W_{\text{ներքև}} - W_{\text{վերև}} = 0.44 > 0$ (ըստ օրգանոլեպտիկ ցուցանիշների)
 $\Delta W = W_{\text{ներքև}} - W_{\text{վերև}} = 0,3 > 0$ (ըստ սանիտարատոկսիկ ցուցանիշների)
 Այսպիսով ինչպես օրգանոլեպտիկ ցուցանիշներով, այնպես էլ սանիտարատոկսիկ ցուցանիշներով տեղի է ունեցել գետի ջրի աղտոտվածության ավելացում:
 Քաղաքի ջրապահական միջոցառումները գնահատվում են անբավարար:
 Նշվածից կարելի է անել եզրակացություն՝
 1. Արդյունաբերական ձեռնարկություններում բացակայում են մաքրման կայանները
 2. Քաղաքի սանիտարական մաքրումը կատարվում է ոչ բավարար, ինչի հետևանքով անծրևաջրերի հետ միասին գետ է թափվում օրգանական և անօրգանական ծագում ունեցող վնասակար նյութեր:
 3. Քաղաքի տնտկենցաղային հոսքաջրերի մաքրում չի իրականացվում:

7. Թափոնների կառավարում

7.1 Աղբավայրեր

Ապարան քաղաքում աղբահեռացումը կատարվում է կենտրոնացված ճանապարհով, հատուկ մասնագիտացված ձեռնարկության կողմից: Այդ նպատակով բնակելի շենքերի շրջակայքում տեղադրված են աղբարկղեր: Կենցաղային աղբը հեռացվում է աղբաթափման վայր, որը զբաղեցնում է 6 հա տարածք, և գտնվում է Նիգավան տանող ճանապարհի կողքին: Սակայն աղբահեռացումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է քաղաքի սանիտարական վիճակի վատացմանը: Աղբավայրը չունի անհրաժեշտ սանիտարապաշտպանիչ գոտի: Աղբավայրի հարևանությամբ գտնվում է քաղաքի գերեզմանատունը, որը զբաղեցնում է 5հա տարածք: Նոր գերեզմանատունը՝ 5,5հա:
 Ապարան քաղաքում առաջացած կենցաղային կոշտ թափոնների (44Թ) կազմը բերված է աղյուսակ 7.1-ում:
 Թափոնների ընդհանուր քանակը այժմ կազմում է 1200տ/տարի:

ԿԿԹ-ի կազմը և տարեկան քանակը

Աղյուսակ 7.1

| ԿԿԹ | Ընդհանուր քանակից բաժնեմասը, %-ով | Թափոնների ընդհանուր քանակը, տ/տարի |
|------------------|-----------------------------------|------------------------------------|
| Ապակի | 3.5 | 42 |
| Մետաղ | 3.9 | 46,8 |
| Պլաստիկ շէեր | 2.65 | 31,8 |
| Այլ պլաստիկ իրեր | 4.35 | 52,2 |
| Թուղթ | 3.1 | 37,2 |
| Այլ թափոններ | 82.5 | 990 |
| Ընդամենը՝ | 100 | 1200 |

7.2 Արդյունաբերական թափոններ

Թափոններն առաջանում են արդյունաբերական ձեռնարկություններում:
 Արդյունաբերական թափոնների ընդհանուր քանակը կազմում է 21,7տ/տարի:
 Թափոնները բաժանվում են 2 խմբի՝
 - օգտագործման ենթակա;
 - ոչ օգտագործելի:
 Օգտագործման ենթակա թափոնների շարքին են դասվում՝ օգտագործված յուղերը, թեփերը:
 Օգտագործված յուղերը տեղում ենթարկվում են մեխանիկական մաքրման (регенерация) զտմամբ և նստեցմամբ: Մաքրված յուղերին ավելացվում են մաքուրը և օգտագործվում:
 Օգտագործման ենթակա թափոնների ընդհանուր քանակը կազմում է 2տ/տարի:
 Ոչ օգտագործելի թափոնները գործող ձեռնարկությունների բնույթից կախված, թունավոր չեն և պատկանում են սանեպիդկայանի կողմից համաձայնեցված վայր տեղափոխվող թափոնների խմբին:
 Այս թափոնները շինարարական, ավտոտրանսպորտային ձեռնարկություններում առաջացած թափոններն են՝ շինարարական աղբ, ավտոմեքենաների մասեր, օգտագործված տարաներ:
 Ոչ օգտագործված թափոնների քանակը կազմում է 19,7տ/տարի:
 Արդյունաբերական թափոնների կազմը բերված է աղյուսակ 7.2-ում
 Արդյունաբերական թափոնների մասին տեղեկությունները տրամադրել են ՀՀ Քննարկականության նախարարությունը (Ձև N1-թափոն, վարչական վիճակագրական վարչություն):

Աղյուսակ 7.2

Արդյունաբերական թափոնների կազմը և տարեկան քանակները

| Արդյունաբերական թափոնների բաղադրիչները | Ընդհանուր քանակը տ/տարի | Ընդհանուր քանակից բաժնեմասը, % |
|---|-------------------------|--------------------------------|
| 1 | 2 | 3 |
| 1. Օգտագործման ենթակա թափոններ՝ յուղեր, թեփեր | 2 | 9,22 |
| 2. Ոչ օգտագործելի թափոններ՝ շինարարական, մետաղական, օգտագործված տարաներ | 19,7 | 90,78 |
| Ընդամենը | 21,7 | 100 |

Քանի որ, քաղաքը չունի արդյունաբերական թափոնների համար առանձին աղբավայր, ուստի ոչ օգտագործելի նշված թափոնները թափվում են կենցաղային աղբավայրում:

7.3 Օրգանական ծագման թափոններ (1)

Թափոններ առաջանում են նաև առողջապահության բնագավառի հաստատություններում:
 Թափոնները դասակարգվում են (19) հետևյալ կերպ՝
 Ա) Ոչ վարակիչ թափոններ: Այս թափոնները կազմում են ընդհանուր թափոնների ~90%-ը: Սրանք իրենց բաղադրությամբ նման են կենցաղային թափոններին, քանի որ վարակի տարածման մանրէներ չեն պարունակում: Այս թափոնների շարքին են պատկանում գրասենյակային աղբը՝ թուղթ, կարտոն, փաթեթավորման նյութեր, թերթեր և այլն: Տարեկան քանակը կազմում է 0,5տ: Այս թափոնները հեռացվում են ՀՀ-ի կողմից հատկացված աղբավայր:
 Բ) Վարակիչ թափոններ: Վարակիչ թափոնները դրանք օրգանական ծագման թափոններն են: Ընդհանուր քանակը կազմում է 15կգ/օր:
 Սրանք դասակարգվում են հետևյալ կերպ.
 Ո 1 կարգ - մարդու անատոմիական թափոններ (հյուսվածքներ, օրգաններ, մարմնի մասեր):
 Ո 4 կարգ - Առարկաներ և պլաստմասայից թափոններ (ներարկիչներ, ճկափողեր և այլն):
 Ո 6 կարգ - Օրգանական նյութերով աղտոտված թափոններ (արյունով և այլ նյութերով աղտոտված բամբակը և այլն):
 Այս թափոնների հնարավոր վարակազերծումը համարվում է քիմիական վնասազերծումը սպիրտի և ֆորմալինի լուծույթով և խորը թաղումը գերեզմանատանը հատկացված տարածքում:

7.4 Գերեզմանատներ

Քաղաքն ունի երկու գերեզմանատուն, որոնցից մեկը կոնսերվացված է:
 Ըստ գլխավոր հատակագծի, նախատեսվում է Նոր գերեզմանատուն, 5,5հա մակերեսով, Երևան-Սպիտակ մայրուղու ձախ կողմում: Քաղաքում գործող գերեզմանատանը թաղման համար Նոր տարածքներ չեն տրամադրվում:

8. Հողերի պահպանություն

Ապարան քաղաքը տեղակայված է Անդրկովկասյան կիսանապատային շրջանի, Արաքսի ենթաշրջանում (16):
 Հողերը-տեղային սևահողեր են, չափավոր խոնավության, կարթունատային:
 Հողի հիմնական աղտոտումը կատարվում է արդյունաբերական ձեռնարկությունների և ավտոտրանսպորտի արտանետումներից, կենցաղային և արդյունաբերական թափոնների աղբավայրերից և թափոնակույտներից:
 Հողի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում՝
 - արդյունաբերական ձեռնարկությունների փոշեգազային մթնոլորտային արտանետումները.
 - արդյունաբերական և կենցաղային թափոնների կազմակերպված և չկազմակերպված աղբյուրները:
 Քաղաքի հողային տարածքի աղտոտվածության ամփոփիչ ցուցանիշները բերված են 8.1 աղյուսակում

Աղյուսակ 8.1

Քաղաքի հողային տարածքի

| Ինգրեդիենտների անվանումը | Ներկա իրավիճակ | |
|--------------------------|----------------|-------|
| | տ/հա | գ/մ² |
| Ընդամենը փոշի | 0,014 | 1,4 |
| Մանգանի օքսիդներ | 0,00021 | 0,021 |
| Երկաթի օքսիդներ | 0,00024 | 0,024 |

Մթնոլորտային օդի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտվածությունից պահպանման միջոցառումները, քաղաքի կանաչապատումը, թափոնների կառավարումը դասվում են հողի աղտոտման կանխարգելման միջոցառումների շարքին:

9. Աղմուկի մակարդակի գնահատում

Գտնվելով մայրաքաղաք Երևանից 57կմ հեռավորության վրա, Ապարան քաղաքն ապահովված է տրանսպորտային բավարար կապերով:
 Ապարան քաղաքի տրանսպորտի անցուղարձի հաշվառումը ցույց է տալիս , որ քաղաքի փողոցներն աշխատում են ազատ ռեժիմով:
 Տեղական նշանակության ճանապարհներով և փողոցներով երթևեկության ինտենսիվությունը բարձր չէ (ամենամեծը՝ 200 միավոր ժամվա ընթացքում):
 Ապարան քաղաքում աղմուկի առաջացման աղբյուրներ են հանդիսանում՝
 - միջպետական նշանակության Երևան-Սպիտակ մայրուղին, որն անցնում է քաղաքի միջով
 - տեղական նշանակության բնակելի փողոցները
 Տեղական նշանակության ճանապարհներում և փողոցներում պիկ ժամերին աղմուկի մակարդակը համաձայն սանիտարական նորմերի և կանոնների կազմում է 73դԲԱ(17):
 Աղմուկի մակարդակի իջեցումը հեռավորության և կանաչ տնկարկների հաշվին կազմում է 6դԲԱ:

$L_{\text{աղմուկ}} = L_{\text{էլկվ}} - \Delta L_{\text{հեռ}} - \Delta L_{\text{կան.տնկ}} - \Delta L_{\text{էկոբ}}$
 $L_{\text{էլկվ}} = 73\text{դԲԱ}; \Delta L_{\text{հեռ}} = 2\text{դԲԱ}; \Delta L_{\text{կան.տնկ}} = 4\text{դԲԱ};$
 $L_{\text{աղմուկ}} = 73 - 2 - 4 = 67\text{դԲԱ} (70\text{դԲԱ նորմայի դեպքում):$

Երևան-Սպիտակ մայրուղու վրա աղմուկի մակարդակը , համաձայն (2, հավելված 32) կազմում է 85ԴԲԱ:

$\Delta L_{\text{կան.տնկ}} = 4\text{դԲԱ}; \Delta L_{\text{հեռ}} = 7\text{դԲԱ};$ (մայրուղու մեջտեղից մինչև մոտակա տները 25մ է): $L_{\text{էլկվ}} = 85 - 4 - 7 = 74\text{դԲԱ}:$
 Երևան-Սպիտակ մայրուղուց աղմուկի մակարդակը գերազանցում է թույլատրելի նորմերը 4ԴԲԱ-ով:

10. Էլեկտրամագնիսական ճառագայթում

Ապարան քաղաքի էլեկտրամագնիսական ճառագայթումը իրականացվում է Սպիտակից եկող 110/35/6-10կՎ լարման 2 գծերով («Արագած» 1, 2) և 35/6-10կՎ «Հալավար» գծով, որոնք անցնելով Ապարանի Արևմտյան կողմով մտնում են քաղաքի ԱՕ/04-19 էլեկտրատեղակայան: Անցնելով քաղաքից հարավ՝ դեպի Աշտարակի կողմը 110 գծերը կոչվում են «Ապարան» 1, 2, իսկ 35-ը՝ «Հարթավան» 1, 2:
 Քաղաքի տարածքում գոյություն ունեն 28 հատ ցանցային ենթակայան, որոնք միջոցով էլ ապահովվում է քաղաքի տարբեր հատվածների էլեկտրամագնիսական ճառագայթումը:
 Քաղաքն ունի երկու հեռուստատեսություն 50 և 100կՎտ հզորությամբ:
 Գործում է «Արմենտել» և «Viva Cell» բջջային հեռախոսակապը:
 Այստեղ հարկ է նշել, որ բարձր լարման 110կՎ և 35կՎ գծերը անցնում են քաղաքի արևմտյան թաղամասերի վրայով:
 Համաձայն մեթոդակարգի (1, 2) էլեկտրամագնիսական ճառագայթման վերը նշված աղբյուրները համարվում են սակավազոր և չեն դիտարկվում ինչպես մթնոլորտի աղտոտման աղբյուրներ:

11. ԿԱՆԱԶԱԴԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՄՐԸ

Քաղաքի կանաչապատումը սկսվել է 20-րդ դարի 40-ական թվականներից: Քաղաքի փողոցները կանաչապատված են, կան ֆունկցիոնալ նշանակության կանաչ զանգվածներ:
 Ներկա դրությամբ ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների ընդհանուր մակերեսը (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) կազմում է 13,4հա, ընդհանուր մակերեսի 2.5%-ը:
 Քաղաքի մեկ բնակչի ապահովվածությունը կազմում է 20,3մ²/մարդ:
 Չնայած 90-ական թվականներից սկսված հերթափոխի ճնշմամբ, կանաչ զանգվածների աղտոտված կրճատումը քաղաքում չի նկատվում և բնակչության ապահովվածությունն ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկներով գտնվում է ընդունված քաղաքայինական նորմատիվների սահմանում (10մ²/մարդ):
 Սահմանափակ օգտագործման կանաչապատ մակերեսները ներկա դրությամբ կազմում են (անհատական հողամասերի կանաչապատում, ձեռնարկությունների, հասարակական օբյեկտների տարածքների կանաչապատում), կազմում է 272,4հա:
 Ապարան քաղաքի կանաչ զանգվածների ցուցանիշները բերված են աղյուսակում:

Աղյուսակ 12.1

Կանաչ զանգվածների ցուցանիշները

| Կանաչ զանգվածների ֆունկցիոնալ նշանակությունը | Ընդհանուր կանաչ զանգված | |
|--|-------------------------|---------|
| | հա | մ²/մարդ |
| 1. Ընդհանուր օգտագործման | 13,4 | 20,3 |
| 2. Հատուկ նշանակության (պատմական անտառ) | 5,64 | 8,54 |
| 3. Սահմանափակ օգտագործման | 272,4 | 412,7 |

13. Բնակչության կենսակերպի բժշկաաշխարհագրական վերլուծությունը

Վերլուծությունը կատարված է եղանակի ֆիզիոլոգաիգիենիկ գնահատականի արդյունքների, ինչպես նաև ռեյինֆի, հողի, բուսական և կենդանական աշխարհի, ջրային պաշարների և մթնոլորտի համալիր գնահատականների հիման վրա:
 Ըստ մարդու ջերմակարգավորիչ ապարատում տարբեր աստիճանի լարվածություն առաջացնող եղանակի կրկնության, Ապարան քաղաքը դասվում է այն տարածքների շարքը, որտեղ գերակշռում է միջին լարվածություն առաջացնող եղանակը, ինչը որոշակի ազդեցություն է թողնում մրսածության

հիվանդությունների աճի վրա:

Ձաղաքում կան կենսաերկրաքիմիական էնդեմիկ հիվանդությունների առաջացման նախադրյալներ, կապված ջրում, հողում, բուսական և կենդանական սննդում միկրոէլեմենտների դիսբալանսի հետ:

Ներկայումս նկատվում է էնդեմիկ գործիք հիվանդությունը: Քանի որ, քաղաքը գտնվում է բնական աղբյուրներում յուրի պակասության գոտում, այդ իսկ պատճառով համարվում է զորի էնդեմիկ շրջան: Չորից բացի, հաճախ հանդիպում են վահանալյի գեղձի բորբոքային հիվանդություններ: Ապարան քաղաքը անապահով է նաև մալարիա հիվանդության տեսակետից:

Բազիլիկը սկզբում ունեցել է պարզ կառուցվածք՝ բաղկացած ուղղանկյուն երկայնական աղոթասրահից, բաժանված լինելով մեկ մեծ և երկու փոքր թաղակապ ծածկերով նավերի: Լմանատիպ «բազիլիկա կառուցվածքների արևելյան տիպ» հորինվածքով տաճարներն ունեին ուղղանկյուն ձևի սեղան (խորան), որոնք գոյություն են ունեցել ոչ միայն Հայաստանի տարբեր շրջաններում (Արցախ, Տեկոր, Փարսի, Եղվարդ և այլն), այլև Հայաստանից հարևան ու հեռու շատ երկրներում (Հյուսիսային Միջագետք, Սիրիա, Աֆրիկա, Սկանդինավիա և այլն):



Հետագայում 5-րդ դարում, ուղղանկյուն խորանը փոխարինվում է այժմյան ներսից պայտածև, արտաքինից բազմանիստ աբսիդի խոշոր ծավալով: Քասախի բազիլիկից ներկայումս պահպանված մասը հնարավորություն է տալիս լիովին վերարտադրելու հուշարձանի նախնական կառուցվածքի ճշգրիտ պատկերը: Պաշտամունքի այս ուշագրավ հուշարձանը, կառուցված լինելով Արագած լեռան հավերժապետ աղբյուրներից մեկից սկիզբ առնող Քասախ գետի ակունքի մոտ, իր ճարտարապետական զուսպ ու խիստ ձևերով ներդաշնակում է այդ լեռնային հիասքանչ տեղանքի բնութայնը:

1-11. Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումներ

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

1. Ներածություն
2. Ընդհանուր բնութագիրը
3. Տարերային վտանգավոր երևույթները
4. Տեխնածին վտանգավոր երևույթները
5. Նախագծի հիմնական դրույթները
Քաղաքի հակաճառագայթային թաքստոցները
Ապարան քաղաքի ապաստարանները
6. Քաղաքի բնակչության պատասխարումը
7. Բնակչությանը ապաստարաններով ապահովման հաշվարկ
8. Ապաստարանների մակերեսների հաշվարկ
9. Բնակչության իրազեկումը և տեղեկացումը
10. Բնակչության տարահանումը
11. Արտակարգ իրավիճակների դեպքում քաղաքի կառավարման կազմակերպումը
12. Բնակչության պաշտպանության միջոցառումները
13. Քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների մշակման համար օգտագործված նորմատիվային փաստաթղթերի ցանկ

1. Ներածություն

Քաղաքի տարածքի Ինժեներակառուցական նախապատրաստումը, տարերային և տեխնածին վտանգավոր երևույթներից պաշտպանությունը, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների իրականացումը նպատակաուղղված են բնակավայրի տարածքում անվտանգ, բարենպաստ, կայուն կենսամիջավայրի ձևավորման ապահովմանը:

Քաղաքացիական պաշտպանության կարևորագույն միջոցառումներից է բնակչության պատասխարումն ապաստարաններում: Գլխավոր հատակագծում ներկայացված ապաստարանների անհարժեշտ ծավալները հաշվի առնելով պետք է ստեղծվեն ապաստարաններ, դրանք պահվեն պատրաստ վիճակում և օգտագործվեն առաջին իսկ անհրաժեշտության դեպքում:

Քաղաքի գլխավոր հատակագծում քաղաքացիական պաշտպանության հարցերին լուծումներ տալու համար հիմք են հանդիսացել «Քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների նախագծման «Гражданской» -ի BCH ГО-38-82, և BCH ГО-38-83 հրահանգները» և այլ նորմատիվային փաստաթղթեր:

2. Ընդհանուր բնութագիրը

Ապարան քաղաքն Արագածոտնի մարզի մեծությամբ և նշանակությամբ երկրորդ քաղաքն է: Գտնվում է Քասախ գետի ափին, ծովի մակերևույթից 1880-2000 մետր բարձրության վրա: Հեռավորությունը Երևան քաղաքից կազմում է 57կմ: Ապարան քաղաքի ներկայիս տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն ու անասնապահությունն է:

Քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններից են՝ Երևանի «Հայգորգ» միավորման մասնաճյուղը, սննդի արդյունաբերությունը՝ մասնավորապես պանրի, հացի գործարանները ներկայումս աշխատում են մասնակի հզորությամբ:

Ապարանում գործում են հանրակրթական դպրոցներ, մշակույթի տուն, կինոթատրոն, կապի հանգույց, ռադիոհանգույց, հիվանդանոց, պոլիկլինիկա:

3. Տարերային վտանգավոր երևույթները

Ապարան քաղաքի տարածքը ըստ ՀՀԵՆ II-2.03.2006թ. գտնվում է երկրորդ սեյսմիկ գոտում, որտեղ գրունտների հորիզոնական արագացումների հնարավոր առավելագույն մեծությունը ընդունված է 0,3 g, համապատասխանաբար հնարավոր է 8-9 բալ ուժգնության սեյսմիկ ցնցումներ:

Տարերային վտանգավոր երևույթներից Ապարանի տարածքին բնորոշ են զարնասային ձևահայքերից, տեղումներից առաջացող հեղեղումները և սելավային երևույթները, որոնք պայմանավորված են քաղաքի աշխարհագրական դիրքով՝ Արագած լեռան հյուսիսարևելյան և Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի տեղաբաշխվածությամբ:

Վտանգավոր տարերային երևույթներից է նաև քաղաքի առանձին թաղամասերում ստորերկրյա ջրերի առկայությունը, որոնք մակարդակը զարնանը բարձրանում է և ողողում անահատական բնակելի տների նկղռները:

4. Տեխնածին վտանգավոր երևույթները

Ավարան քաղաքում քիմիական վտանգավոր օբյեկտներ չկան:
 Քաղաքում տեխնոստիկ արտակարգ իրավիճակների օջախներ են համարվում՝
 - կոմունալ և կենցաղային զագատարները,
 - քաղաքի խմելու ջրագծերը, էներգամատակարարման և կոյուղագծերը,
 - կամուրջները,
 - Հալավարի ջրամբարը:
 Տեխնոստիկ արտակարգ իրավիճակներից խուսափելու համար անհարժեշտ է՝
 - քաղաքի համար կառուցել կենցաղային, կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայան և ապահովել դրա արդյունավետ աշխատանքը.
 - ապահովել քաղաքի կոմունալ, կենցաղային զագատարների, խմելու ջրագծերի կոյուղագծերի, էներգամատակարարման գծերի, ճանապարհների անխափան աշխատանքը՝ ժամանակին կատարելով դրանց պլանային նախագծային վերանորոգման պրոֆիլակտիկ աշխատանքները.
 - բենզազագալիցքավորման կայանները տեղակայել գոյություն ունեցող նորմաների համաձայն.
 - արտակարգ իրավիճակներում քաղաքի բնակչության նվազագույն կարիքները բավարարելու նպատակով ստեղծել խմելու ջրի պահուստային պաշարներ.
 - կատարելագործել բնակչության պաշտպանության ապաստարանները, նախատեսել նորերը.
 - բարձրացնել էլեկտրամատակարարման համակարգերի հուսալիությունը՝ բացառելով բնակչության էլեկտրամատակարարման երկարատև անջատումները.
 - բնակարանների գազով տաքացման համար օգտագործել վառարաններ, որոնք ունեն գազի այրման արգասիքների երաշխավորված հեռացման հնարավորություն:

5. Նախագծի հիմնական դրույթները

- Քաղաքի բնակչության թվաքանակը՝ 6,6 հազար մարդ:
 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքը գտնվում է բարձր սեյսմիկ ռիսկի գոտում, նախատեսվում են վտանգավոր օբյեկտների, բնակելի շենքերի և բնակչության կենսապահովման օբյեկտների պաշտպանության ուղղված միջոցառումներ:
 - Արտակարգ իրավիճակներում քաղաքի տարածքի ռացիոնալ օգտագործման և կենսագործունեության կայունության բարձրացման համար նախագծում նախատեսված է տարբեր ֆունկցիոնալ գոտիների և համայնքի տրանսպորտային ցանցի մասնամասն լուծումներ:
 - Մայրուղիների և փողոցների նախագծային լայնությունը, կարմիր գծերում, ընդունված է նվազագույնը 12.0մ, որպեսզի շենքերի և կառույցների փլուզման ռեպրով ապահովվի փրկարարական ստորաբաժանումների մուտեցումը:
 - Իժմեներական հաղորդակցության ուղիների նախագծման հիմքում դրված է քաղաքի կենսագործունեության հուսալի ապահովումը, ինչպես նաև քաղաքի, այնպես էլ արտակարգ իրավիճակներում:
 - Ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է, համատեղված է խմելու և հակահրդեհային ծախսերը մեկ ջրատարով:

Ավարան քաղաքի հակաճառագայթային թաքստոցները

Այդուհանդերձ

| Հ/Հ | Տեղակայման վայրը | Կարգը | Մարդկանց թիվը | Տեխնիկական վիճակը | Ծանոթություն |
|-----|-----------------------------|-------|---------------|-------------------|--------------|
| 1 | Կապի հանգույց | I | 300 | անբավարար | |
| 2 | Եղիպատրուշի միջնակարգ դպրոց | I | 220 | բավարար | |

Ավարան քաղաքի ապաստարանները

այդուհանդերձ

| Հ/Հ | Տեղակայման վայրը | Կարգը | Մարդկանց թիվը | Տեխնիկական վիճակը | Ծանոթություն |
|-----|---------------------------------------|-------|---------------|-------------------|--------------|
| 1 | Կազմակերպությունների շենքերի նկուղներ | I | 2500 | անբավարար | |
| 2 | Բնակելի շենքերի նկուղներ | I | 2800 | անբավարար | |
| 3 | Սեփական բնակելի ֆոնդի նկուղներ | I | 1600 | բավարար | |

6. Քաղաքի բնակչության պատսպարումը

Արտակարգ իրավիճակներում բնակչության պատսպարումը պետք է իրականացվի հետևյալ պաշտպանական կառույցներում՝
 - ստորգետնյա հատուկ շինություններում՝ ապաստարաններում, նկուղներում, կիսանկուղներում, խորացված տարածքներում.
 - բնակելի ֆոնդի տարածքներում՝ առաջին հարկի տարածքներ՝ հարմարեցված որպես ապաստարաններ:
 Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ընդգրկում են՝
 - պաշտպանական կառույցների վառարան կառուցումը.
 - պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստի վիճակում.
 - պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպումը.
 - արագ կառուցվող ապաստարանների շինարարության կազմակերպումն ու ապահովումը պատերազմի սպառնալիքի ժամանակ:
 Արտակարգ իրավիճակներում քաղաքի կենսագործունեությունն ապահովող ձեռնարկությունների ապաստարաններում պատսպարվում են նշված ձեռնարկությունների աշխատակիցները:
 Նկուղային և այլ խորացված տարածքներում, պատսպարման նպատակով նախատեսված շենքերի և շինությունների առաջին հարկերում, պարզագույն թաքստոցներում պատսպարվում է մնացած բնակչությունը:

7. Բնակչության ապաստարաններով ապահովման հաշվարկ

Այդուհանդերձ

| N | Բնակչության խմբեր | Ներկա ժամանակահատվածում | | Հաշվարկային ժամկետում | |
|----------|---|-------------------------|----------------------------------|-----------------------|----------------------------------|
| | | Թվաքանակը (հազ. մարդ) | Ենթակա են պատսպարման (հազ. մարդ) | Թվաքանակը (հազ. մարդ) | Ենթակա են պատսպարման (հազ. մարդ) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | Աշխատավայրում գտնվող բնակիչներ | 2,0 | 1,65 | 4,7 | 3,9 |
| | Տանը գտնվող չաշխատող բնակիչներ | 1,0 | 0,92 | 2,8 | 2,6 |
| | Ուսման վայրում գտնվող ուսանողներ, դպրոցականներ, նախադպրոցական երեխաներ | 1,2 | 1,12 | 3,2 | 3,0 |
| | Տնային պայմաններում գտնվող ուսանողներ, դպրոցականներ, նախադպրոցական երեխաներ | 2,4 | 2,36 | 5,8 | 5,7 |
| Ընդամենը | | 6,6 | 6,05 | 16,5 | 15,2 |

8. Ապաստարանների մակերեսների հաշվարկ՝ ըստ խմբերի

Այդուհանդերձ

| N | Բնակչության խմբեր | Ներկա ժամանակահատվածում | | Հաշվարկային ժամկետում | |
|----------|---|-------------------------|--------------------------------------|-----------------------|--------------------------------------|
| | | Բնակչության թվաքանակը | Ապաստարանների անհրաժեշտ մակերեսը, մ² | Բնակչության թվաքանակը | Ապաստարանների անհրաժեշտ մակերեսը, մ² |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | Նախադպրոցական տարիքի երեխաներ՝ իրենց խնամակալների հետ | 1700 | 2040 | 4200 | 5040 |
| | Քաղաքի մնացած բնակչությունը | 4900 | 3675 | 12300 | 9225 |
| Ընդամենը | | 6600 | 5715 | 16500 | 14265 |

Ծանոթագրություն՝
 անհրաժեշտ ծավալով ապաստարանների ընդհանուր մակերեսը հաշվարկվել է գործող նորմաների համաձայն: Նախատեսվող մակերեսների չափերում, հաշվի են առնվել նաև սանիտարական, պահեստային և այլնի համար նախատեսվող անհրաժեշտ օժանդակ մակերեսները:

9. Բնակչության իրազեկումը և տեղեկացումը

Պաշտպանական կառույցներում բնակչության պատսպարումը տեղի է ունենում քաղաքացիական պաշտպանության ազդանշաններով՝
 - շչակի անընդհատ հնչեցման դեպքում («Օդային տագնապ» ազդանշան) բնակչությունն անմիջապես պատսպարվում է պաշտպանական կառույցներում.
 - շչակի անընդհատ հնչեցման դեպքում («Ուշադրության բոլորին» ազդանշան) բնակչությունը պարտավոր է միացնել հեռուստացույցները և ռադիոընդունիչները, որոնցով փոխարարական պետական մարմինների կողմից տրվում են հաղորդագրություններ տեղանքի քիմիական կամ ճառագայթային վարակի սպառնալիքի կամ դրանց առաջացման և բնակչության գործողությունների մասին ու գործում՝ համաձայն այդ հաղորդագրությունների:
 Ստանալով համապատասխան ազդանշան՝ պաշտպանական կառույցները սպասարկող խմբերի և օդակների անձնակազմերը բերվում են պատրաստակալության և ժամանելով իենց աշխատատեղերը, պաշտպանական կառույցները պատրաստում են պատսպարվողների ընդունման համար:
 Պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմիններն արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մարմինների հետ համատեղ կազմակերպում են բնակչության պատսպարման համալիր միջոցառումներ:
 Պաշտպանական կառույցներում բնակչության պատսպարումն իրականացվում է նախապես մշակված և հաստատված պլանների համաձայն:
 Աշխատանքային հերթափոխի աշխատողներն ու ծառայողներն օբյեկտների համապատասխան պաշտոնատար անձանց ղեկավարությամբ զբաղեցնում են պաշտպանական կառույցները՝ համաձայն օբյեկտի արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության պետի կողմից նախապես մշակված պլանների, իսկ անհատական բնակարաններում ապրողները՝ իրենց հարմարեցված նկուղները և այլ շինությունները:

10. Բնակչության տարահանումը

Քաղաքի վրա հակառակորդի անմիջական հարձակման դեպքում բնակչության լրիվ տարահանում չի պլանավորվում: Բնակչության հրատապ վերաբնակեցումը քաղաքի առանձին տարածքներից հնարավոր է հակառակորդի կողմից հարձակման ժամանակակից միջոցների օգտագործման դեպքում, որի ընթացքում կարող են առաջանալ ցինիական, ճառագայթային, մանրէաբանական կարակի օջախներ:

Տարերային աղետներից բնակչության համար առավել մեծ վտանգ են ներկայացնում երկրաշարժերը, որոնք դեպքում որպես պաշտպանության հիմնական ծև հանդիսանում է բնակչության տարահանումը անվտանգ վայրեր:

Աղետից հետո իրականացվում է այն շենքերի բնակիչների տարահանումը, որոնցում բնակվել են հնարավոր չէ:

Տեխնածին աղետների դեպքում պաշտպանական հիմնական ծևը բոլոր միջոցներով բնակչության դուրս բերումն է, տարահանումը վարակման օջախից ջանալ հակառակ ուղղությամբ:

Ներկայումս Ապարան քաղաքի բնակչության տարահանման պլանը մշակված ընթացքի մեջ է և վերջնական որոշված չեն տարահանման ուղիներն ու բնակավայրերը, որոնք քաղաքից պետք է ունենան առնվազն 20 կմ հեռավորություն: Հարցի լուծման համար պետք է հաշվի առնվեն տարահանման հետևյալ ծևերն ու միջոցները՝

- քաղաքի բնակչությունը կարող է տարահանվել հետիոտն շարայումներով կամ տրանսպորտային միջոցներով՝ ավտոշարայումներով:
- առանձին դեպքերում տարահանման համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող են տրամադրվել նաև օդային տրանսպորտային միջոցներ:

11. Արտակարգ իրավիճակների դեպքում քաղաքի կառավարման կազմակերպումը

Աղետի սպառնալիցի կամ առաջացման վտանգի դեպքում կառավարումն իրականացվում է քաղաքի կառավարման կետից (քաղաքապետի աշխատասենյակ) և Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունից:

Օպերատիվ խումբը ժ+45 րոպեի ընթացքում գեղաբնակ է հիմնական կառավարման կետը և ժ +60 րոպեի ընթացքում կազմակերպում է շուրջօրյա հերթապահություն:

Մարզային փրկարարական վարչության անձնակազմը ժ+45 րոպեի ընթացքում ժամանում է և ժ+60 րոպեի ընթացքում կազմակերպում է շուրջօրյա հերթապահություն և անհրաժեշտ փրկարարական աշխատանքներ:

Աղետի սպառնալիցի կամ առաջացման դեպքում կառավարումը կազմակերպվում է Արագածոտնի մարզպետի կողմից և իրականացվում է կառավարման հիմնական կետից: Անհրաժեշտության դեպքում կառավարումն իրականացվում է պահեստային կամ շարժական կառավարման կետերից:

Անհատական պաշտպանության միջոցների (ԱՊՄ) պահանջվող քանակի հաշվարկ՝ ըստ տարիքային խմբերի

Աղյուսակ 5

| Հ/Հ | Բնակչության թվաքանակը՝ ըստ տարիքային խմբերի | Ընդամենը (մարդ) | Պահանջվող ԱՊՄ-ի քանակը (հատ) և մակնիշը | |
|-----|---|-----------------|--|----------------------|
| | | | Քանակը գումարած 10% պահուստ | Մակնիշը |
| 1. | 0-2 տարեկան | 260 | 286 | Մ.Հ |
| 2. | 3-14 տարեկան | 1340 | 1474 | ԴՈ-5 ԴՈ-7 (մանկական) |
| 3. | 15-18 տարեկան և ավելի | 5000 | 5500 | ԴՈ-5, ԴՈ-7 |
| | Ընդամենը | 6600 | 7260 | |

Շանդաղություն՝ բնակչությանը ԱՊՄ բաշխումը, համաձայն ՀՀ կառավարության 25.10.2000թ. թիվ 679 որոշման՝ իրականացվում է երկրորդ հերթին: Բաշխումն իրականացվում է ՀՀ կառավարության որոշմամբ, իսկ կազմակերպություններում՝ տվյալ կազմակերպության ղեկավարի որոշմամբ:

12. Բնակչության պաշտպանության միջոցառումները

Բնակչության պաշտպանության միջոցառումների մեջ մտնում են՝ 1. ինժեներական ապահովումը, որի նպատակն է պայմաններ ստեղծել քաղաք մուտք գործելու, փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների, դրանց հաջող իրականացման, ինչպես նաև աղետի գոտուց բնակչության տարահանման կազմակերպումը:

2. բժշկական ապահովումը, որի նպատակն է պայմաններ ստեղծել բժշկական օգնություն ցուցաբերել տուժածներին՝ գործին ընդգրկելով ինչպես տեղական, այնպես էլ այդ աշխատանքների մեջ ներգրավվող այլ մարզերից ժամանող ուժերը:

3. հասարակական անվտանգության և հակահրդեհային ապահովումը, որի նպատակն է ապահովել մարզի բնակչության անվտանգությունը, ունեցվածքի պահպանությունը և հակահրդեհային անվտանգությունը:

4. կյուբատեխնիկական միջոցների և սննդամթերքի ապահովումը, որի նպատակն է քաղաքի տուժած բնակչության և փրկարարական ուժերի կենսաապահովման համար կազմակերպել սննդի և առաջին անհրաժեշտության միջոցների ժամանակին տեղափոխումը և բաշխումը:

5. տրանսպորտային ապահովումը, որի նպատակն է աղետի գոտի տեղափոխել փրկարարական կազմավորումներ, ինչպես նաև փոքրածավալ սեփականության միջոցներ և տարահանել բնակչությանը:

6. տեղեկատվության ապահովումը, որի նպատակն է հստակ մեկնաբանել արտակարգ իրավիճակների հետևանքները, ապահովել լրատվության օբյեկտիվությունը և պրոֆեսիոնալ պատշաճ մակարդակը:

13. Քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների մշակման համար օգտագործված նորմատիվային փաստաթղթերի ցանկ

- Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենք, 02.12.1998թ.
- Քաղաքացիական պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենք, 05.03.2002թ.
- ՀՀ կառավարության 13.12.1999թ. «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 746 որոշում.
- ՀՀ կառավարության 28.09.2000թ. «Բնակչության պատասխարման կարգը հաստատելու մասին» թիվ 592 որոշում.
- ՀՀ կառավարության 25.10.2000թ. «Բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» թիվ 679 որոշում.
- ՀՀ կառավարության 16.10.2003թ. «ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին տեղեկատվության ստացման և ազդարարման կարգը հաստատելու մասին» թիվ 1304-Ն որոշում.
- СНП II-II-77 Нормы проектирования Защитные сооружения гражданской обороны.
- Руководство по составлению раздела инженернотехнических мероприятий гражданской обороны в проектах генеральных планов городов, проектах планировки и застройки городов и населенных пунктов, 1985г.
- ВСН ГО 38-82, ВСН ГО 38-83 Гражданстрой.

I-12. Նախորդ գլխավոր հատակագծի իրացման վերլուծություն

Ապարան քաղաքը ծովի մակարդակից գտնվում է 1850-1900 մ բարձրության վրա, սեյսմիկ գոտին-9 բալ:

Տարվա օդի միջին նվազագույն ջերմաստիճանը -41°C

Օդի միջին առավելագույն ջերմաստիճանը 10.4°C

Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 31-32°C

Ապարանի համար գլխավոր հատակագծեր և մանրամասն գլխավոր հատակագծեր մշակվել են 1950, 1966թ. «Հայկետնախագիծ» ինստիտուտի կողմից, իսկ վերջին նախագիծը կատարվել է «Հայկետնախագիծ» ինստիտուտի կողմից 1985-1986 թվականներին:

Նախկին գլխավոր հատակագծերի հիմնական դրույթները չեն իրականացել:

Գլխավոր հատակագծի նախագծման ժամանակ անհրաժեշտություն է առաջացել գործառական զոնավորման ճշտում կատարել՝ արտադրական պահեստային և կոմունալ տնտեսության տեղափոխում այլ տարածքներ:

Դրա շնորհիվ հնարավորություն է ստեղծվել ավելի ակտիվ լանդշաֆտային դոմինանտների ներմուծում բնակավայրի ճարտարապետական կոմպոզիցիայի մեջ:

Գլխավոր հատակագծի հաշվարկային ժամանակաշրջանը ընդունված է 2010թ. իսկ I հերթի շինարարությունը 1995թ.:

Ապարանի տարածքը ամբողջությամբ վերցրած հիմնականում զարգացել է Երևան-Վշտարակ-Մայիսակ Մ-3 միջպետական ճանապարհի շուրջը:

Ճանապարհը անցնում է քաղաքի կենտրոնական մասով հասնելով հարավից և դուրս գալով հյուսիս արևմուտքից, իսկ Քասախ գետը քաղաքը հատում է արևմուտքից և դուրս է գալիս հարավ արևելքից: Քասախը սկիզբ է առնում վտակներից, որոնք հոսում են Արագածի Հյուսիսարևելյան զանգվածից և Փամբակի լեռների արևելյան լանջերից: Տարվա 8 ամիսներից Քասախ գետը իր վտակներով միջև ք. Ապարան չորանում է, իսկ քաղաքից ետևը ընկած հատվածում գետը ունի անընդհատ հոսք՝ ի հաշվի քաղաքի տարածքում բխող աղբյուրների և հոսում է ետև և խորը կիրճով:

1985թ. Ապարանում ուներ 7200 բնակչություն, իսկ հաշվարկային ժամանակաշրջանում (2011թ-ին) բնակչությունը պետք է կազմեր 13400 մարդ:

Մինչև 60-ականները Ապարանը եղել է թույլ զարգացած ագրարային շրջանի շրջկենտրոն, որի բնակչությունը հիմնականում զբաղված էր գյուղատնտեսական արտադրության մեջ և անասնապահությամբ, մասամբ նաև արդյունաբերության մեջ: 1985թ. արտադրության գերիշխող ճյուղը եղել է մեքենաշինությունը: 1986թ. աշխատել են 7 արդյունաբերական ձեռնարկություններ:

Հաշվի առնելով հաշվարկային ժամանակաշրջանի բնակչության աճը, գլխավոր հատակագծում մեծ տեղ է հատկացվել արդյունաբերական ձեռնարկությունների և հատկապես Էկոլոգիայից մաքուր արտադրությունների ձևավորմանը:

Նախագծով անջատված է ամբողջ արտադրական արդյունաբերական տարածքը բնակելի տարածքից, իսկ քաղաքի միջով անցնող միջպետական մայրուղին պետք է շրջանցեր քաղաքը ձախ կողմից:

Նախագծով նախատեսված են կոլտուր կենցաղային և հասարակական սպասարկման օբյեկտներ:

Մեծ կարևորություն է տրված սպորտային համալիրի զարգացմանը, ինչպես նաև հասարակական կենտրոնի ձևավորմանը: Քասախի բազիլիկայի տարածքն ազատվել է խարխուլ կառուցապատումից և եկեղեցուց դեպի սպորտ համալիր բացվել է հետիոտն առանցք:

Ապարան քաղաքը սոցիալ-քաղաքշինական առումով բնակավայր է, որն իր վրա է վերցնում ամբողջ համայնքի կոլտուր-կենցաղային սպասարկման և արդյունաբերական կենտրոնի ֆունկցիան:

Նախատեսվում է պահպանել և ավելի զարգացնել կապն Ապարանի և հարևան բնակավայրերի միջև: Այսինքն ստեղծել աշխատանքի, ապրելու և հանգստի նպատակահարմար կայա:

Քաղաքի զարգացման սխեմայում Մուլքին Նույնպես մտել է Ապարանի կազմի մեջ՝ հանդիսանալով նրա V միկրոշրջանը: Ընդհանրապես քաղաքը բաժանվել է 5 միկրոշրջանների՝ չհաշված հզոր արդյունաբերական կոմպլեքսը: Հիմնական բազմաբնակարան շինարարությունը նախատեսված է հյուսիսարևելյան և հարավ արևմտյան միկրոշրջաններում:

1988թ. երկրաշարժից հետո արևելյան թաղամասը, որը փոշկած է Գայի փողոցի վերջնամասում, կառուցապատվում էր տաշիկ բարեկամների կողմից փայտյա տնակներով: Հետագա տարիների գործընթացները թույլ չեն տվել իրականացնել Ապարանի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման լուծումները:

Հյուսիսարևելյան թաղամասի մի մասը մնացել է Լուսազյուղի համայնքի տարածքում, հարավարևելյան տարածքը, որտեղ արդյունաբերական համալիրի աջ հատվածն է՝ պանրի գործարանով և հեռանկարային կառուցումներով, ինչպես նաև Մուլքի գյուղը, առանձնացվել է որպես Մուլքի համայնք:

Ամբողջ հյուսիսային թաղամասի հողերի 70 տոկոսը բաժանված է, բայց կառուցապատված չէ: Արևելյան և հարավարևելյան թաղամասերը կառուցապատված են 60%-ով: Քաղաքի ամենամեծ կառուցիչ՝ ակունքի շինարարությունը, մնացել է անավարտ վիճակում: Սպորտային համալիրի տարածքում նախատեսված մարզադաշտի փոխարեն մարզադաշտը կառուցվել է ակունքի դիմաց և սխալ օրինադրությամբ՝ հյուսիս-հարավի փոխարեն արևելք-արևմուտք:

Չի իրականացել Քասախի բազիլիկայի շրջակայքի կարգավորումը, ինչպես նաև բազիլիկայից դեպի սպորտ համալիր բացվող առանցքը: Չի իրականացել ընդհանրապես Ապարանը ծախից շրջանցող մայրուղին:

I-13. Նոր գլխավոր հատակագծի անհրաժեշտության քաղաքաշինական դրույթները

Ապարան քաղաքի բնակչության աճի, արդյունաբերության և քաղաքաշինական տեղեկանքների զարգացման մասին վերը նշված ենթակետերը, ինչ խոսք, ներկայումս ավելի սահմանափակ և սեղմ ընթացակարգի մեջ են գտնվում: Ելնելով երկրի վերջին տարիների սոցիալտնտեսական ծայրահեղ վիճակից, ինչպես մյուս համայնքներում, այնպես էլ Ապարանում քաղաքաշինական փոփոխություն չի նկատվել, անշուշտ նման քառասյան և տարրերային զարգացող վիճակը չի բերի ճարտարապետական միջավայրի զարգացմանը: Հետևապես, սույն նախագիծը ընթացիկ մեջ է՝ հաշվի առնելով նման բոլոր քաղաքաշինական և հատակագծային խնդիրները:

Ապարան քաղաքի գլխավոր հատակագծի կազմումը կարևորագույն խնդիր է քաղաքաշինական, տնտեսական, շրջակա միջավայրի պահպանության տեսանկյուններից:

Վերջին տարիներին քաղաքաշինական իրավիճակի արագ փոփոխությունն ամբողջ հանրապետության տարածքում, այդ թվում Ապարանում, առավել կարևորում է նոր գլխավոր հատակագծի անհրաժեշտությունը: Հողերի սեփականացումը, նոր շուկայական հարաբերությունները, գինեգործության և տուրիզմի առկա զարգացումը գլխավոր հատակագծերի հեղինակների անաջադրեցին նոր քաղաքաշինական խնդիրներ, որոնցում կարևոր նշանակություն են ստանում առաջիկա 20 տարիների քաղաքաշինական հնարավոր զարգացումների ճիշտ կանխատեսումները:

Հասկանալով, որ քաղաքային միջավայրը ձևավորվում է վերջի վերջու անընդհատ փոփոխվող իրավիճակում և կառուցապատումների գործունեության արդյունք է, ուստի ներկայացնում ենք մի շարք հիմնահարցեր, որոնք որ կընդունվեն որպես գլխավոր հատակագծի առանցքային խնդիրներ և չեն ենթարկվի չիմաստավորված փոփոխությունների: Հեղինակներն ընդարձակ աշխատանքային միջավայր և մտածելու ազատություն են ընձեռնում նախագծողների կառուցապատման ժամանակ, սակայն սահմանափակել են շինությունների հարկանությունը, իրենց տեսակետներն են ներկայացրել փողոցների ձևավորման հարցում:

Ժամանակակից քաղաքի կառուցապատողների առաջ կա երկու խնդիր, որոնց մեջ անհրաժեշտ է ընտրություն կատարել.

1. Քաղաքի կենտրոնում, որտեղ հողի և կառուցապատվող տարածքների արժեքը էապես բարձրանում է, հնարավոր է կարճաժամկետ և խիտ կառուցապատում իրականացնել՝ արդյունքում ակնկալելով մեծ նվաճումներ, թողնելով հաջորդ սերունդներին այդ միջավայրը ձևավորելու բարդ խնդիրները:

2. Ձևավորել քաղաքային հետաքրքիր բարձրարժեք տարածքներ, որի տնտեսական արդյունավետությունը կստեղծվի ժամանակի ընթացքում՝ տուրիզմի զարգացմանը զուգահեռ, համագործ և մտածված քայլերով:

Ներկայացվող գլխավոր հատակագծում ընդգրկված է երկրորդ տարբերակը:

Գլխավոր հատակագծի նախագծման սկզբունքները՝

1. Նախագծել քաղաքի զարգացումները, հեռանկարը և ցուցադրել այն՝ տալով յուրաքանչյուր քաղաքացուն հնարավորություն ընտրելու իր դերն ու տեղն այդ հատակագծում:

2. Ապահովել շրջակա միջավայրի պահպանման բոլոր մեխանիզմները, որպես քաղաքի զարգացման կարևորագույն օղակ:

3. Պահպանել արդի ճարտարապետական արժեքները:

4. Քաղաքն ապահովել ժամանակի և տարածության մեջ նոր քաղաքաշինական արժեքների ներմուծման հնարավորություններով (տրանսպորտի նոր տեսակներ և այլն):

5. Ապարանը նախագծել, որպես քաղաքային համայնք, որտեղ Արագածոտնի մարզի պատմական և ներկա քաղաքաշինական հաջողությունները կներկայացվեն առավել համախմբված՝ կոնյուկ նախորդների քաղաքաշինական կուլտուրան և կառուցելով նորը:

Գ Լ ՈՒ Խ Ե Ի Ի

ԱՊՐԱՆ ԿԱՍԱԽԻ ՀԵՌԱԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

II-1 Հեռանկարային զարգացման հայեցակարգ

Ապարան քաղաքի, ինչպես և Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքների, տարածքային և տնտեսական զարգացման ուղղությունները քաղաքաշինական գործունեության ներկա փուլի առավել սուր և բարդ հիմնախնդիրներից են:

Այս կապակցությամբ հատուկ ուշադրություն է դարձվել քաղաքի գրաված դիրքին և դերին ՀՀ տարաբնակեցման համակարգում, բնակչության աճի դինամիկային, տարածքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությանը, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման կապերին, տրանսպորտային մատչելիության գոտում գտնվող ռեսուրսային պոտենցիալի օգտագործմանը, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների զարգացման հնարավորություններին:

Բնակչության հեռանկարային աճի անցած փուլի կանխատեսումային մեթոդների («աշխատանքային հաշվելիչի», «նպատակային» և այլն) կիրառման անհնարինությունն արդեն սպառնացնում է: Այդ պատճառով բնակչության հեռանկարային աճը որոշված է ըստ ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» հիմնադրույթների՝ ելնելով հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից (քաղաքապատկան տարածքի ժողովրդագրական տարողունակության որոշման մեթոդով): Ըստ այդ հաշվարկների, քաղաքում կարող է բնակվել առավելագույն 25.0հազ. մարդ, որը անթույլատրելի է Ապարան քաղաքի համար: Ըստ բնապահպանական և ռեսուրսային հաշվարկի՝ 16.5 հազ.՝ չխախտելով տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը, ընդ որում աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր զարգացման տեմպերից, քաղաքական իրավիճակից, բնակչության աշխատատեղերով ապահովելու մակարդակից: Աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել բնական ռեսուրսների (հումքային, ռեկրեացիոն, գյուղատնտեսական) տարածքային պոտենցիալ հնարավորությունների ռացիոնալ օգտագործումով և ներդրումային ճյուղն արագ, համայնքի հեռանկարային տնտեսական զարգացման հիմնական ուղղություններն են.

• Արդյունաբերական և ագրոարդյունաբերական համալիրի ձևավորում

• Ռեկրեացիոն ոլորտի զարգացում

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների և գործարարության համատեղ գործունեությունը:

II-1.1. Արդյունաբերության «բազային» կոմպլեքսատեղծ ճյուղերի ներուժը

Նախկին սոցիալտնտեսական փուլի պլանային օրենքներով գործող արդյունաբերական համալիրը (սննդի, թեթև, տեղական արդյունաբերություն) փլուզվել է:

Արդյունաբերական բոլոր օբյեկտները սեփականաշնորհվել են և ներկայումս մեծ մասը չեն աշխատում:

Սույն նախագծով տնտեսական զարգացման հեռանկարները դիտարկվում են բնական (հումքային, ռեկրեացիոն, գյուղատնտեսական) հարուստ պաշարների, հանրապետության արդի տնտեսական-քաղաքական փուլի վերափոխումների ընձեռած լայն հնարավորությունների, տնտեսական գործունեության նոր մոտեցումների տեսանկյունից, որոնցից կարևորագույններն են.

• Տարածաշրջանի և մարզի հումքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման արդյունաբերության «բազային» ճյուղերի զարգացման համար:

• Տարածաշրջանային և միջմարզային ինտեգրման ճանապարհով տնտեսական կապերի ստեղծումը:

• Արդյունաբերական օբյեկտներում նախատեսվում է առաջավոր, շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնող տեխնոլոգիաների կիրառումը

(թափոնների կրկնակի վերաշահում, թափոնների վնասագեղծում, փակ ցիկլեր և այլն):

• Համայնքի, տարածաշրջանի գյուղատնտեսական արտադրության զարգացումը:

• Փոքր և միջին բիզնեսի (գործարարության) խթանումը և աջակցումը՝ ներդրումների համար տրամադրվող միջավայրի ձևավորմամբ: Փոքր և միջին բիզնեսի օբյեկտները շատ հարմար կառույցներ են հանդիսանում հատկապես բարձր տեխնոլոգիական արտադրությունների ներդրման և սպասարկման համար, քանի որ համեմատաբար արագ և փոքր ծախսերով կարող են յուրացնել նոր տեխնոլոգիաները և նորարարական մշակումները: Այդ օբյեկտներն ավելի ճկուն են, արագ են հարմարվում շուկայի պահանջներին և սպասարկման արդիական ձևերին:

• Արդյունաբերական օբյեկտների տեղադրումը՝ նոր արտադրություններով (հիմնականում գիտատեխնիկական ճյուղի օբյեկտներ):

• Աշխատունակ բնակչության ներուժի օգտագործումը:

• Իրավական և գործարարական տեղեկատվական կենտրոնի ստեղծում՝ բնակչությանը, հիմնականում ներդրողներին, իրազեկելու նպատակով:

Ապարանի տարածաշրջանի հանքահումքային ներուժը փոքր է: Չկան մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր, վառելիքային և պարարտացման հումքեր:

Տեղաբնակների կողմից շահագործվում են շինյութերի հանքավայրեր (պեմզա, գրանիտ, բազալտ, տուֆ, մարմար, ավազ, կրմիրդրապայտային կավ):

Ըստ ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի», որոշված են բոլոր մարզերի հանքահումքային պոտենցիալները: Հանքահումքային ռեսուրսների սկզբնաղբյուրն նորովի վերազնահատումը պահանջում է լեռնահանքային արտադրությունների տեղաբաշխման նորացված ուղվագիծ, որի հիմնադրույթները կնպաստեն ՀՀ տարաբնակեցման կատարելագործման ռազմավարության իրականացմանը:

Արագածոտնի մարզի և հարակից տարածքների համար առաջնահերթ խնդիրներ են հանդիսանում.

- Քարածախմբային արտադրության, բազալտային մանրաթելերի ու բարձրորակ բազալտային, պեմզային, խարամային դիատոմիտային քամիչների ու ջերմա և ձայնամեկուսիչ կոլեկտի ստացման ու արտադրության ծրագրերի մշակումը:

- Տուֆերից, տուֆալավաններից, պեմզաներից, խարամներից, կավերից և դիատոմիտներից ջերմակայուն և հրակայուն (ղծվարահալ և դյուրահալ) նյութերի

ստացումը՝ վառարանների և շոգեկաթսաների, նավարդյունաբերության ջերմային ագրեգատների, ինչպես նաև հատուկ մետաղահալ մեծ ու միջին հիդրոէլեկտրակայանների ջերմամեկուսացման համար:
- Պենզաներից և խարամներից հատուկ բարձրորակ կոլոբերի ստացումը փայտե ու քարե իրերի և միներալային հավելումների համար, ինչպես նաև կատալիզատորների արտոբերների ստացումը՝ կաշվի, ապակու և ճեմապակու, օճառի, քիմիկալների և ռետինի արդյունաբերության համար:
- Ջրի տակ և ջրատար շրջաններում շենքերի և գիդրավիկ կառույցների շինարարության համար կրի և ցեմենտի հետ հատուկ միներալային հիդրավիկ հավելումների կապակցման արտադրությունը պենզաների և տրանսբերի, ինչպես նաև դիատոմիտների օգտագործմամբ, որոնք ապահովում են հանգած կրի հետ խառնուրդի ամրացումը ջրի տակ:
- Սկզբունքային նշանակություն կարող են ունենալ մարզի սոցիալտնտեսական զարգացման համար Արագածի գանգվածի ավազաբեկորային հրաբխային նստվածքների վերագնահատումը՝ որպես սև և թանկարժեք մետաղների հանքային հույժ, հանդիսանալով երկաթի, տիտանի, ոսկու, արծաթի և այլ օգտակար հանածոների կրթման աղբյուր: Թթու հրաբխային առաջացումների՝ հանձինս պեոլիտների, օքսիդիանների և ցիոլիտների կարող են հանդիսանալ հազվագյուտ հողերի հույժ, որոնք կունենան արագացում արդյունաբերական նշանակություն:
Այսպիսով հիմնավորվում են ինչպես նոր քաղաքային համայնքների ձևավորման տարածքները, այնպես էլ ռազմավարական նշանակություն ունեցող լեռնահանքային արդյունաբերության նոր կենտրոնների ձևավորման անհրաժեշտությունը քաղաքացիական, արդյունաբերական և այլ նշանակության կառույցների տեղաբաշխումով:

II-1.2. Ռեկրեացիայի քաղաքաշինական հեռանկարային կազմակերպումը

Ապարան քաղաքային համայնքի տնտեսական զարգացման ճյուղերից մեկը կարող է դառնալ ռեկրեացիոն ոլորտը: Ռեկրեացիոն ենթագոտիների քաղաքաշինական զարգացման գերադասելի ռեժիմը նախատեսում է ռեկրեացիայի տարբեր ձևերի առաջնահերթ զարգացումը՝ թույլ յուրացված գոտում նոր հենակետային բնակավայրերի ստեղծումով, փոքր բնակավայրերի խոշորացումով:
Հաշվի առնելով ռեկրեացիոն ենթագոտիների տարածքային բաշխվածությունը, Ապարան քաղաքի (Նախկին Ապարան շրջանի վարչական կենտրոն) դիրքն ու դերը տարաբնակեցման համակարգում, Ապարան քաղաքի դերի մեծացման հնարավորությունները, այն կարող է վերաճել տվյալ տարածաշրջանի ռեկրեացիոն բազմաֆունկցիոնալ կենտրոնի:
Ռեկրեացիայի կազմակերպումը կնպաստի՝

- ՀՀ տուրիստական քաղաքակառուցության ռազմավարական ուղղությունների իրականացմանը հետևյալ ուղղություններով:

- Երեան-Աշտարակ- Ապարան -Ապիտակ-Վանաձոր
- Գյումրի-Թային-Աշտարակ-Ապարան:

- Նոր տիպի առողջարանների ստեղծումը:
- Տրասպորտային և սոցիալական ենթակառուցվածքների (հիմնականում սպասարկման) օբյեկտների կազմակերպումը:
- Նոր աշխատատեղերի ստեղծումը:
- Կրթական մակարդակի բարձրացմանը:
- Բժշկական սպասարկման կատարելագործմանը:
- Տեղեկատվության տարածման նոր ձևերի ներկայացմանը:
- Տարածաշրջանում տարաբնակեցման նոր ձևերի (եսպեդիցիոն բնակավայրերի) ձևավորմանը, փոքր գյուղական բնակավայրերի խոշորացմանը:

II-2. Բնակչություն և բնակելի ֆոնդ

Ապարան քաղաքի բնակչությունը ըստ ՀՀ Ազգային վիճակագրական վարչության ծառայության 2001թ-ի մարդահամարի տվյալների, կազմում է 6614 մարդ (մշտական բնակչություն) և 5711 մարդ (առկա բնակչություն): Ըստ տեխնիկական առաջադրանքի այն կազմում է 6600 մարդ և ըստ տեղական ինքնակառավարման մարմինների՝ 7435 մարդ:
Հեռանկարային բնակչությունը հաշվարկված է 16.5 հազ. մարդ (տարածքի դեմոգրաֆիկական տարրողականության հաշվարկի մեթոդով): Բնակչության աճի համար ժամկետներ չեն նախատեսվում, այն կախված է հիմնականում քաղաքի սոցիալտնտեսական զարգացման տեմպերից:

Քաղաքի բնակելի ֆոնդի առ 01.01.2005թ. ցուցանիշները

| համայնք | գրադեց. տարածք (հա) | 1-2 հարկանի հողամասերով տներ | | | | 2-5 հարկանի բազմաբն. շենքեր | | | | ընդամենը | | |
|---------|---------------------|------------------------------|---------------------|---------------|------------------|-----------------------------|---------------------|---------------|------------------|---------------------|---------------|------------------|
| | | տների քանակը | գրադեց. տարածք (հա) | բնակչ. (մարդ) | բնակչ. ֆոնդ (մ²) | շենքերի քանակը | գրադեց. տարածք (հա) | բնակչ. (մարդ) | բնակչ. ֆոնդ (մ²) | գրադեց. տարածք (հա) | բնակչ. (մարդ) | բնակչ. ֆոնդ (մ²) |
| Ապարան | 434.6 | 1180 | 93 | 5100 | 930000 | 26 | 7..55 | 2897 | 52467 | 100.55 | 6600 | 145467 |

* Բնակչությունն ըստ շենքերի տարրողականության
Սև բնակչի ապահովվածությունը բնակելի ֆոնդով կազմում է 22.0մ²: Այս բավականին բարձր ցուցանիշը հետևանք է արտազանցության հետևանքով բնակարանների ձեռք բերման էժան գների:
Քաղաքի սահմանում առկա են ռեզերվային տարածքներ (տնամերձ հողամասերով բաժանված), որոնք ընդգրկված են բնակելի գոտում և պահանջարկի դեպքում կարող են կառուցապատվել:

II-3. Հասարակական սպասարկման ոլորտ

Նոր սոցիալտնտեսական փուլում հասարակական սպասարկման ոլորտի օբյեկտների նպատակաուղղված զարգացումը տարվել է հիմնականում բուժական և կրթական շենքերի ցանցի վերականգնման ուղղությամբ, մեծ մասամբ արտասահմանյան ներդրողների միջոցներով: Կուլտուր-կենցաղային օբյեկտների ցանցը ընդլայնվում է, չլքին բացառությամբ, շրջանային տնտեսության պայմանների համապատասխան:
Հասարակական սպասարկման օբյեկտների հեռանկարային տեղադրման գոտիները տրված են գոտիավորման նախագծում:

II-4. Քաղաքի տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպումը և գործառական կառուցվածքը

II-4.1. Քաղաքի տարածքային զարգացման հիմնական սկզբունքները

Քաղաքի հատակագծային կառուցվածքի ձևավորման մեթոդական հիմք են հանդիսանում.
- «Հ տարաբնակեցման գիսավոր նախագծի» հիմնադրույթներով ամրագրված քաղաքի տարածքային աճի սահմանափակման սկզբունքները:
- Սեյսմիկ վտանգի պայմաններում քաղաքի բոլոր կառուցվածքային-հատակագծային տարրերի հուսալիությունն ու կայունությունն ապահովող սկզբունքները (բնակելի գոտու ռեզիլիենտային և սեյսմիկ վտանգի համապատասխանեցված խտություններ, ներքին ռեզերվային տարածքների ընդգրկում, կանաչ գոտու ընդլայնում, սանիտարական պահպանման գոտիների սահմանում, շրջանային ճանապարհների նախատեսում):
- Հին և նոր թաղամասերի օրգանական հատակագծային կապերի ապահովումը՝ ընդգրկելով քաղաքի գործառական տարածքում ռեկրեացիայի զարգացման համար բարենպաստ տեղադրված և պատմամշակութային հուշարձանները:
- Քաղաքի սահմանների հստակեցում հարևան համայնքների հողային շահերի առավելագույն պահպանում:

II-4.2. Հատակագծային կառուցվածք

Ապարան քաղաքի պատմականորեն ձևավորված հատակագծային կառուցվածքը պայմանավորված է տարածքի բացարձակ լիզերի սահմանափակումներով (ծովի մակարդակից գտնվում է 1850-1950մ) և հարավ արևմտյան բլրաշարքերի սահմանափակումներով (25% թեք բլուրներ): Փողոցային ցանցը կազմավորված է երևան-Աշտարակ-Ապիտակ միջպետական նշանակության մայրուղու աջ և ձախ կողմերում:
Քաղաքի գեոմ. անցումը և քաղաքի կենտրոնական մասով՝ քիչ թեքությամբ իյուսիս-արևմուտքից դեպի հարավ արևելք:
Քաղաքն հարուստ է բլրակներով: Հիմնականում կարգավորված են 4-5 փողոց (Բաղրամյան, 2. Դարյան, Մ. Մաշտոցի, Գ. Լճեհի և Գայի), իսկ մնացած փողոցները, հատկապես հին թաղամասերի, կառուցապատվել են անկանոն և ոլորաններով:
Քաղաքի հասարակական կենտրոնը տեղադրված է Քասախ գետի ձախավայրի տարածքում:
Ոչ կանոնավոր ներքին փողոցային ցանցի ձևավորման պատճառ է հանդիսացել նաև սոցիալտնտեսական տարբեր փուլերով տնամերձ հողամասերի տարբեր չափաբաժիններով և առանձնատներով կառուցապատումը:
Գոյություն ունեցող բազմբնակարան շենքերը հիմնականում ձգված են Բաղրամյան փողոցի երկայնքով: Նախագծով առաջարկվում է հեռանկարում աստիճանաբար նրանց վերափոխումը սեյսմակայուն բազմաբնակարանների:
Արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրական օբյեկտները տեղաբաշխված են քաղաքի տարբեր մասերում:
Կենտրոնում սնկղի և թեթև արդյունաբերություն, արևմուտքում անասնապահական համալիր, որը կիսաքանդ վիճակում է, հարավում «Նիգ» գործարանն է և «Ճանշին»-ի ասֆալտի գործարանը:
Քաղաքի իյուսիսարևմտյան կողմում գտնվող գյուղ մթերումների պահեստները և Նախկին «Նիգ» գործարանը չեն աշխատում՝ կիսաքանդ վիճակում են: Չեն գործում նաև Նախկին գարեջրի, ռեզինի գործարանները, կաշվի գործարանը և «Արև» գործարանը, Նախկին Յուրայրը, որոնք գտնվում են քաղաքի կենտրոնում: Նախագծով նախատեսվում է Լշված գործարանների և արտադրամասերի աստիճանական դուրս բերում դեպի հիմնական արտադրական գոտի «Նիգ» գործարանի հարևանությամբ, իսկ նրանց տարածքները օգտագործել հասարակական և բազմաբնակարան կառուցապատման համար:
Ապարան քաղաքի տարածքի սահմանափակող գործոններն են.

- իյուսիսից՝ անտառաշերտ,
- իյուսիս - արևելքից և արևելքից՝ Լուսազյուղ գյուղի համայնքի հողերը
- հարավից և հարավ - արևելքից-Մուլլի համայնքի հողերը:
- հարավ-արևմուտքից արդյունաբերությունն է իր զարգացման հեռանկարով
- արևմուտքում կիսաքանդ անասնապահական համալիրն է իր մեծորդիկ այգիով:
- Ուստի քաղաքի միակ զարգացման տարածքը մնում է հիմնականում իյուսիսարևմտյան չկառուցապատված տնամերձ և տարածքը, որը կազմում է 16 հա և Նախկին կիսաքանդ անասնապահական համալիրի տարածքը, նրա շրջակայքը, որը կազմում է 42 հա: Այս տարածքներում էլ հենց նախատեսվում է կառուցապատում բազմաբնակարան սեյսմակայուն շենքերով: Քաղաքի տարածքային զարգացման արդյունքում գերեզանցող գերթե կազմում է կառուցապատված տարածքի շարունակություն և իյուսիս-հարավ առանցքով անընդհատ աճում է դեպի իյուսիս: Այն չի բավարարում սանիտարահիգիենիկ պահանջներին:
Նախագծով նախատեսվում է նոր գերեզանցող տարածք՝ քաղաքի իյուսիսարևմտյան մասում՝ հուշահամալիրի տնամասում, որը կազմում է մոտ 5 հա: Նախկին գիսավոր հատակագծով նախատեսված շատ լուծումները չեն իրականացել՝ չնայած այն բանին, որ դրանք եղել են ճիշտ և խոր մտածված:
Սույն նախագծով առավելագույն կանոնավորվել է քաղաքի հատակագծային կառուցվածքը՝ Բաղրամյան պողոտային և նրանից խառաջայթածն ուղղությամբ երկու փողոցների ու հրապարակների ձևավորմամբ, բոլոր թաղամասերի ապահովմամբ հասարակական օբյեկտներով, հասարակական կանաչի ապահովմամբ,

ներքին պահուստային տարածքների համապատասխան գործառնական նշանակության սահմանմամբ:
Քաղաքի համար առաջարկվում է հետևյալ հատակագծային կառուցվածքը՝

- կանոնակարգված և լրացված փողոցային ցանց, դրանց հանգույցներում (հրապարակներ) հասարակական գործառնական կենտրոնացմամբ, հանգույցները սկսվող առանցքների երկարությամբ հասարակական սպասարկման օբյեկտների ձևավորմամբ՝ սպասարկման մատչելիության գոտիներում ընդգրկելով բնակելի թաղամասերը, պուրակային գոտու ձևավորում՝ ռեկրեացիոն տեղամասի կազմակերպումով:
- բարելավման ենթակա են գրեթե բոլոր փողոցները:

Քաղաքի կենտրոնում՝ Նախկին հրապարակը, ավելի ընդարձակվել է և հեռանկարում նախատեսվել է նոր հասարակական վարչական կենտրոն, որն ուղիղ առանցքով կապվում է հաջորդ փոքր հրապարակին, որը գտնվում է քաղաքային այգու և սպորտային համալիրի հարևանությամբ: Այս հրապարակով է անցնում նաև Քասախի բազիլիկայից դեպի սպորտ համալիրի հետիոտն կապը: Եկեղեցու տարածքն ազատվում է անշուք, կիսահարկով շինություններից և նրա շուրջ ձևավորվում է մի հրապարակ՝ ժողովրդի հավաքատեղի, իսկ Բաղրամյան փողոցի երկու բազմաբնակարան շենքերի միջև տարածքն ազատվում է մուտքը կազմակերպելու համար: Գլխավոր հատակագծում մեծ ուշադրություն է դարձվում պատմության և մշակույթի հուշարձաններին, քաղաքի մենորիալ տարածքների, նրանց պահպանական գոտիների և ինչպես նաև օգտագործման հեռանկարներին:

Քաղաքի սպորտային համալիրը, որը ձևավորվում է գոտային և կիսակառուց պլանմի հարևանությամբ, իրենից ներկայացնում է ֆուտբոլի, վալեյբոլի, բասկետբոլի, մեծ թենիսի դաշտեր, ունիվերսալ մարզադահլիճ, բաց և փակ լողավազաններ, կանաչ տարածություններ, որոնք գետին ձգվելով իրենց մեջ ներ են առնում ջրային մակերեսներ, բացօթյա սրճարաններ, ճեմուղիներ և հանգիստ կազմակերպելու ամենամատչելի միջոցներ:

Նոր թաղամասերը ձևավորվող փողոցային ցանցը հնարավորինս համապատասխանեցվել է տարածքի ռեյտինգին: Արևմտյան թաղամասում կառուցապատման իրականացումը և՛ է՝ բազմաբնակարան շենքերով, և՛՝ անհատական տներով: Թաղամասում նախատեսվել է հասարակական և կենցաղ սպասարկման ենթակառուցվածքներ, ինչպես նաև մանկապարտեզ:

Բաղրամյան փողոցը տրանզիտ երթևեկությունից ազատելու համար Ապարանի հարավային հանգույցում աջ և ձախ շրջանցող ճանապարհներ է նախատեսվում: Ձախ շրջանցողը, որն անցնում է Ապարանի արդյունաբերական համալիրի կողքով՝ Մ-3 մայրուղու շարունակություն է, որն անցնելով Ապարանի եզրով, այլուհետև, Քասախ գետին զուգահեռ գնում է մինչև Նիգամյան տանող ճանապարհի հատվածը, ապա միանում Մ-3 մայրուղուն:

Աջակողմյան ճանապարհին անցնում է Ապարանի հարավարևելյան եզրով՝ Պանրի գործարանի մոտով, հատվում է Ապարանից Մուլքի տանող ճանապարհի հետ և թեքվելով դեպի աջ 50մ ուղիղ գնում է դեպի հյուսիս և միանում Լուսապուղ գնացող ճանապարհին, հանրակրթական, բուհական, առևտրական, շրջանցում է Ապարանի և Լուսապուղը կարճ ճանապարհով կապված Նիգամյան և Սպիտակի հետ:

Կարևորագույն խնդիր է նաև 110 և 35կմ հաղորդագծերի տեղափոխումը բնակավայրի տարածքի դուրս՝ հաշվի առնելով ճառագայթումը:

Արդյունաբերական օբյեկտների վերագործարկման կամ նորերի կառուցման պարտադիր պայման է հանդիսանում նոր առաջավոր տեխնոլոգիաներով արտադրության տեղադրումը՝ բացառելով շրջակա միաջակայրի աղտոտումը:

II-4.3. Քաղաքի տարածքի գործառնական գոտիավորում և կառուցապատման ռեժիմներ

Հաշվի առնելով գերակշռող գործառնական օգտագործումները՝ կառուցապատման կանոնակարգման անհրաժեշտությունը, քաղաքային տարածքը բաժանված է հետևյալ «բազային» տիպերի.

- բնակելի
- արտադրական
- լանդշաֆտային-ռեկրեացիոն
- բուֆերային
- պահուստային
- Բնակելի տարածքները նախատեսված են հիմնականում բնակելի կառուցապատման, դրանց ենթակառուցվածքների, հասարակական նշանակության օբյեկտների առաջնային տեղակայման համար: Բնակելի տարածքը բաժանվում է փոքր խտության, միջին խտության բնակելի գոտիների, համաքաղաքային նշանակության հասարակական ֆունկցիոնների զարգացման խառը գոտիների, հանրակրթական, բուհական, առևտրական, գործարարական-վարչակառավարման, տրանսպորտային ենթակառուցվածքների, սպորտային, մենորիալ, հատուկ նշանակության:

Փոքր խտության բնակելի գոտիները նախատեսված են 1000-1200մ² տնամերձ հողմասեր ունեցող 1-2 հարկանի առանձնատներով կառուցապատման համար: Այս գոտիներն առանձնացված են հիմնականում արդեն կազմավորված առանձնատներային կառուցապատման ունեցող (քաղաքի հիմնական մասը) և տնամերձերով կառուցապատելու համար նախատեսված նոր տարածքների հետագա զարգացման և կանոնակարգման համար: Այս գոտիներում բնակչության խտությունը չպետք է գերազանցի 100 մարդ/հա:

- Միջին խտության բնակելի գոտիները նախատեսված են բարձրահարկ և առանձնատներով խառը կառուցապատված տարածքների համար, որոնք հիմնականում ընդգրկում են հասարակական կենտրոնի շրջակայքը: Բնակչության խտությունը չպետք է գերազանցի 200 մարդ/հա:

- Բարձր խտության բնակելի գոտիները նախատեսված են, որպես կանոն, 3-5 հարկանի տներով կառուցապատման համար՝ կանոնակարգվելով դեպի եկեղեցական համալիր տանող զվաճար պողոտան և նրանով կազմված եռանկյունաձև թաղամասը, ինչպես նաև Երևան-Գյումրի մայրուղու ձախ կողմում 2 մուտքային հանգույցներով և փողոցներով կազմված տարածքը, որը նախկին արտադրական կիսակառուց տարածքի տեղում վերածվել է նոր բնակելի էլիտար թաղամասի:

- Համաքաղաքային նշանակության հասարակական ֆունկցիոնների զարգացման խառը գոտիները նախատեսված են, ինչպես համաքաղաքային նշանակության գործառնականների, այնպես էլ նոր բնակելի կառուցապատման առաջնային տեղակայման համար՝ քաղաքի զարգացմանը զուգընթաց: Ընդ որում բնակելի շենքերի առաջին հարկերը կարող են տրամադրվել հասարակական սպասարկման ոլորտին:

- Վարչակառավարման-գործարարական գոտիները նախատեսված են հիմնականում վարչական և տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի կենտրոնացման, գործարարական, ֆինանսական գործունեությունը քաղաքում (թափոնների կրկնակի վերամշակում, թափոնների կենտրոնացում) համար:

- Տրանսպորտային ենթակառուցվածքների գոտիներն ընդգրկում են բեռնատար և ուղևորատար ավտոտրանսպորտի ենթակառուցվածքները: Գոտու ռեժիմը նախատեսում է սանիտարական պահպանման գոտիների կանաչապատում՝ աղմուկի ազդեցությունը և օդի աղտոտվածությունը փոքրացնելու նպատակով:

- Սպորտային գոտիներն ընդգրկում են խոշոր սպորտային համալիրները և դրանց ենթակառուցվածքները:

- Մենորիալ գոտիները նախատեսված են քաղաքի տարածքում պահպանված, կոնսերվացված կամ կոնսերվացման ենթակա գերեզմանոցների և դրանց պահպանման գոտիների քաղաքաշինական կարգավորման համար:

o Բնակելի գոտու ռեժիմը նախատեսում է համապատասխան խտությունների պահպանում, ասնիտարական պահպանման գոտիների սահմանում, ինժեներական ենթակառուցվածքների կատարելագործում:

o Արտադրական տարածքները նախատեսված են արտադրական և պահեստային օբյեկտների, դրանց ենթակառուցվածքների առաջնային տեղակայման համար: Գոյություն ունեցող արտադրական օբյեկտների մեծ մասը պահպանվում է և համապատասխանեցվում ժամանակակից պահանջներին: Մի մասն էլ հանվում է բնակելի գոտու տարածքից և կենտրոնացվում է 1 արտադրական տարածքում: Գոտու ռեժիմը նախատեսում է առաջավոր շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնող, տեխնոլոգիաների կիրառում (թափոնների կրկնակի վերամշակում, թափոնների վնասագործում, փակ ցիկլեր և այլն):

o Բուֆերային գոտիները քաղաքը շրջապատող գյուղատնտեսական հողերն են, որոնք կարող են ծայրահեղ իրավիճակների դեպքում, օգտագործվել հրատապ միջոցառումների իրականացման համար:

o Պահուստային գոտին տեղակայված է քաղաքի արևմտյան և արևելյան տարածքներում: Այն նախատեսվում է, որպես պահուստ, քաղաքի զարգացման տեմպերին համապատասխան կամ տարբեր փուլերում նոր առաջացող խոշորամասշտաբ ծրագրերի իրականացման համար:

II-5. Տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացումը

Գոյություն ունեցող իրավիճակ

Ապարան քաղաքի բնակչությունը 6.6 հազ. մարդ է և գտնվում է ուժեղ կորստված տարածքում:

Քաղաքի կառուցապատման մակերեսը կազմում է 4.8քառ.կմ:

Քաղաքի միջով արևմուտքից արևելք անցնում է Քասախ գետը:

Փողոցաճանապարհային ցանցը.

Հիմնական հաղորդակցության ճանապարհները, որոնք սպասարկում են քաղաքը, մայրուղային փողոցներն են՝ համաքաղաքային նշանակություն ունեցող Բաղրամյան, Գ. Նժդեհ, շրջանային Գայի և Դարյան փողոցները: Իրենց ընդհանուր երկարությունը կազմում է 7.8կմ, խտությունը 1.6կմ/քառ.կմ, որը չի համապատասխանում նորմատիվային պահանջներին:

Բաղրամյան փողոցն անցնում է կենտրոնական մասով հարավից հյուսիս և դրա միջոցով է իրականանում տրանսպորտային կապը Երևան և Սպիտակ քաղաքների հետ, ինչպես նաև Հայաստանի հյուսիսային շրջանի այլ քաղաքների հետ: Այսպիսով՝ ամբողջ տարանցիկ տրանսպորտային կապն անցնում է քաղաքի միջով:

Բաղրամյան փողոցի արևմտյան կողմից են մոտենում Գ. Նժդեհ և Դարյան փողոցները, որոնք միջոցով է իրականանում կապը Լուսապուղ և Մուլքի գյուղերի հետ:

Գ. Նժդեհ և Գայի փողոցների միջոցով իրականանում է տրանսպորտային կապը Սարավանջ գյուղի հետ: Նշված մայրուղային փողոցների ցանցն ունի եռանկյունի հատակագծային կառուցվածք:

Միջմայրուղային բնակելի տարածքների սպասարկման իրականանում է տեղական նշանակություն ունեցող փողոցների միջոցով, որոնք հիմնականում ունեն ուղղանկյուն հատակագծային կառուցվածք:

Ավտոմոբիլիզացման մակարդակը.

Քաղաքի վարչակազմի կողմից տրված տվյալներով՝ մարդատար ավտոմոբիլների քանակը քաղաքում կազմում է 610 միավոր, իսկ ավտոմոբիլիզացիան-92 միավոր / 1000 մարդ:

Քաղաքային հասարակական տրանսպորտը.

Քաղաքում չի գործում:

Քրտաքին տրանսպորտը.

Քաղաքում գործում է ավտոկայան, որը գտնվում է քաղաքի կենտրոնական մասում: Ժամանակ և մեկնող ավտոբուսների համար կառավարող մարմինն ունի 6 տեղ: Սույն ավտոկայանից է իրականանում մարդատար միջքաղաքային և արվարձանային կապը «ՌԱՖ» և «Գագե» տիպի փոքր տարողությամբ ավտոբուսներով:

Նախագծային լուծում

Փողոցաճանապարհային ցանց.

Փողոցաճանապարհային ցանցի զարգացումը նախատեսված է նոր կառուցապատվող տարածքներում-քաղաքի հարավային, հյուսիսային և արևմտյան մասերում: Դրանց համար է նախատեսված տեղական նշանակություն ունեցող փողոցների ցանցը:

Մայրուղային փողոցների նորմատիվային խտությանը հասնելու համար նախագծով նախատեսված են շրջանային նշանակություն ունեցող մայրուղիներ

քաղաքի հարավային և հյուսիսային մասերում:

- Հարավային մասում

- Բարդամյան փողոցից հարավարևմտյան ուղղությամբ կառուցել նոր փողոց, որը պետք է սպասարկի արդյունաբերական շրջանը:

- Բարդամյան փողոցից արևելյան ուղղությամբ, Բարդամյան փողոցի և արևելյան շրջանցող ճանապարհի միջև պետք է սպասարկի բնակելի շրջանը:

- Հյուսիսային մասում

- Ն. Ստեփանյանի փողոցը վերափոխվում է շրջանային նշանակություն ունեցող մայրուղու: Նշված մայրուղային փողոցների ընդհանուր երկարությունը կազմում է 2.6կմ, իսկ դրանց ընդհանուր երկարությունն ըստ ամբողջ քաղաքի-10.4կմ, ընդ որում մայրուղային փողոցների խտությունը կկազմի մոտավորապես 2.1կմ/քառ.կմ, որը համապատասխանում է նորմատիվային պահանջներին:

Ավտոմոբիլիզացման մակարդակը.

Նախագծի հաշվարկային տարում ավտոմոբիլիզացման մակարդակը մարդատար ավտոմոբիլներով ընդունվում է 100 մարդ. ավտոմոբ. 1000 մարդու համար, ընդ որում քաղաքի մարդատար ավտոմոբիլների քանակը նախագծի հաշվարկային տարվա վերջում կկազմի 1650 միավոր:

Քաղաքային հասարակական տրանսպորտ.

Քաղաքի բնակիչների սպասարկումը հասարակական մարդատար տրանսպորտով նախագծով նախատեսված է ապահովել ավտոբուսներով:

Հասարակական մարդատար տրանսպորտի ուղղությունների ցանցը նախատեսված է մայրուղային փողոցներում, իսկ քաղաքի արևմտյան մասում բնակելի փողոցում: Հասարակական մարդատար տրանսպորտի ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է մոտավորապես 12.0կմ, իսկ խտությունը 2.3կմ/քառ.կմ, որը համապատասխանում է նորմատիվային պահանջներին: Կանգառների կետերը տեղակայված են ուղևորների ամենաշատ կուտակումներով տեղերում, ընդ որում հետիոտնի մոտակա կանգառի մոտեցման հեռավորությունը միջինում 350մ է:

Արտաքին տրանսպորտ.

Նկատի առնելով, որ տարանցիկ տրանսպորտային հոսքն անցնում է քաղաքի տարածքով, նախագծով նախատեսված են շրջանցող ճանապարհներ, որոնք կթեթևացնեն միջքաղաքային փողոցների ծանրաբեռնվածությունը տարանցիկ տրանսպորտային հոսքից:

Գնացող և հետ եկող տարանցիկ տրանսպորտային հոսքի համար դեպի Սպիտակ քաղաք և հանրապետության հյուսիսային այլ շրջաններ նախատեսված է շրջանցող ճանապարհ, որի երկարությունը կազմում է մոտավորապես 7.6կմ և որն անցնում է քաղաքի արևմտյան մասով:

Գնացող և ետ եկող տարանցիկ տրանսպորտային հոսքի համար դեպի գյուղեր Լուսազյուր, Մուլքի և Սարալանջ նախատեսված է շրջանցող ճանապարհ, որի երկարությունը կազմում է մոտավորապես 5.2կմ, որն անցնում է արևելյան մասով: Նախագծով նույնպես նախատեսված է քաղաքի հյուսիսից շրջանցող ճանապարհ, որի երկարությունը 2կմ է և որը կապում է Սպիտակ քաղաքը Լուսազյուրի հետ:

Նշված ճանապարհները վերաբերվում են 3-րդ կարգի և ունեն երթևեկության երկկողմանի երկու ուղղություններով գոտի, որի ընդհանուր լայնությունը կազմում է 11մ, որից երթևեկելի մասը 7մ է, իսկ ճամփեզերը ամեն կողմից 2-ական մետր:

Արտաքին մարդատար տրանսպորտ.

Գոյություն ունեցող ավտոկայանի տեղում նախատեսված է դրա տարածքի ընդարձակում և նոր ավտոկայանի շենքի շինարարություն, նախատեսվել կառուցվածքների ամբողջությունը ժամանող և մեկնող ավտոբուսների, ուղևորների նորմալ սպասարկման համար:

II-6. Ինժեներական ենթակառուցվածքների հեռանկարային զարգացումը

II-6.1. Ջրամատակարարում

Ջրամատակարարման և կենցաղային կոյուղի բաժինը մշակելիս, որպես ելակետային տվյալներ հանդիսացել են՝

1. Ապարան քաղաքի գլխավոր հատակագծի հատակագծային առաջադրանքը:
2. Ապարան քաղաքի գլխավոր հատակագծով հիմնավորված քաղաքի տեխնիկատնտեսական ցուցանիշները և զարգացման ուղղվածությունը:
3. Ապարանի ջրուղի և կոյուղու համակարգերը շահագործող կազմակերպության կողմից տրամադրված նյութերը գործող համակարգի վերաբերյալ:

II-6.1.1. Երկա վիճակը

Ապարան քաղաքի ներկայիս խմելու ջրամատակարարման համակարգը սնվում է « 40 Աղբյուր» («Ժամի աղբյուր») և «Եգնակի աղբյուր» -ներից: Քաղաքի տարածքի առանձնահատկությունից ելնելով, աղբյուրներից ջուրը մղվում է ՕԿՁ-ները պոմպակայանների միջոցով: Գոյություն ունեցող ՕԿՁ-ները 5 հատ են:

- 1x2000մ³ ծավալով ՕԿՁ, որը կառուցված է քաղաքի հյուսիսային կողմում, ռելիեֆի բարձրադիր մասում: ՕԿՁ-ն սնվում է « 40 Աղբյուր» («Ժամի աղբյուր») -ից: Ջուրը մղվում է պոմպակայանի միջոցով: ՕԿՁ-ն գործող է,բայց կան բետոնի քանդված հատվածներ հատակի և պատերի վրա՝ խոռչների տեսքով:

Սանիտարական գոտին պահպանող ցանկապատը և քլորակայանը գտնվում են նորմալ վիճակում:

-2x600 մ³ ծավալով ՕԿՁ-ներ կառուցված են քաղաքի հարավարևմտյան կողմում: Ջուրը ստանում են «Եգնակի աղբյուր»-ից պոմպակայանների միջոցով:

Մեկ հատը գտնվում է նորմալ վիճակում: Մյուս ՕԿՁ-ի ծածկի վրա բացակայում են անհրաժեշտ մոնոցները: Անցքերը բաց են, որը վտանգ է սպառնում ջրի որակին: Չկա սանիտարական գոտին ապահովող ցանկապատ: Չկա նաև քլորակայան:

-1x2000մ³ ծավալով ՕԿՁ է տեղադրված Նիզ գործարանի արևմտյան հատվածում:

Ջրավազանը գործող չէ: Գտնվում է կիսաբթարային վիճակում: Չկա սանիտարական գոտին ապահովող ցանկապատ, չկա քլորակայան:

Չնայած որ, Ապարան քաղաքի տարածքը և շրջակայքը հարուստ են բնական մաքուր ջրի պաշարներով, քաղաքի բնակչությունը ապահովված չէ խմելու ջրով: Կան թաղամասեր, որտեղ ջուր լինում է օրական ընդամենը 1-2 ժամ: Ջուրը սպառողներին տրվում է ընդհատումներով: Քաղաքի որոշ թաղամասեր և փողոցներ ընդհանրապես խմելու ջուր չունեն:

Պատճառը՝ ջրամբարների անհրաժեշտ քանակի բացակայությունը և, ջրամատակարարման համակարգի անսարքություններն ու տեխնիկական վատ վիճակը:Առկա ջրամատակարարման բաշխիչ ցանցն ունի 30-35 տարվա վաղեմություն: Լեռքին ցանցի ընդհանուր երկարությունը 47կմ է: Խողովակների 40 - 50%-ը վթարային են: Հնոցակորուստները կազմում են մոտավորապես 70%: Ոչ բոլոր ջրաչափական կետերում են տեղադրված հոսքաչափեր:

II-6.1.2. Ջրամատակարարման նորմերը և հաշվարկային ջրապահանջը

Ջրամատակարարումը նախատեսվում է բնակչության, խմելու-տնտեսական, կենցաղային, արտադրական օբյեկտների, ինչպես նաև բնակավայրի հակահրդեհային ջրապահանջը բավարարելու համար:

Ջրապահանջը հաշվարկելիս, որպես հիմք ընդունվել է գործող ՇՆ և Կ. 2.04.02-84:

Բնակչության մեկ մարդու օրական ջրապահանջը հաշվարկային տարում ընդունվում է 200լ/օր: Համաձայն տարաբնակեցման Գլխավոր նախագծի, որն ընդունվել է կառավարության կողմից 2004թ-ին, տրված է Ապարան քաղաքի բնակչության հեռանկարային քանակը 2021թվին կլինի 16500մարդ:

Հաշվարկային ելքերի որոշումը:

Բնակավայրում մարդկանց համար նախատեսվող միջին օրական ջրապահանջը կլինի՝

$$Q_{միջ.օր} = \sum q N/1000$$

$$q=200լ/օր \quad N=16500 \text{ մարդ}$$

$$Q_{միջ.օր} = 200 \times 16500 : 1000 = 3300 \text{ մ}^3/օր$$

Քաղաքը ջրով պետք է ապահովվի ոչ միայն այն օրերին, երբ ջրապահանջը հավասար է միջին օրականին, կամ նրանից փոքր է, այլև այն ժամանակ, երբ ջրապահանջը միջին օրականից մեծ է: Ջրամատակարարման համակարգի համար, որպես հաշվային ընդունվում է առավելագույն ջրապահանջի օրվա ջրածախսը, որը որոշվում է.

$$Q_{մաքս.օր} = K_{օր.մաքս} Q_{միջ.օր}$$

$$K_{օր.մաքս} = 1.1 \div 1.3$$

$$Q_{մաքս.օր} = 1.3 \bullet 3300 = 4290 \text{ մ}^3/օր$$

$$Q_{մին.օր} = K_{օր.մին} Q_{միջ.օր}$$

$$K_{օր.մին} = 0.7 \div 0.9$$

$$Q_{մին.օր} = 0.7 \bullet 3300 = 2310 \text{ մ}^3/օր$$

Ցրոգտագործման ռեժիմը տարբեր սպառողների համար օրվա ընթացքում տարբեր է, հետևաբար մի ողջ բնակավայրի համար՝ տեսականորեն անորոշ: Ժամային ջրագտագործման տատանման չափը որոշենք ժամային անհավասարաչափության գործակցով: Որոշենք մաքսիմալ ջրապահանջի օրվա, մաքսիմալ ժամային կամ հաշվարկային ելքը՝

$$Q_{մաքս.ժ} = K_{ժ.մաքս} Q_{օր.մաքս} / 24$$

որտեղ $K_{ժ.մաքս} = a_{մաքս} \bullet b_{մաքս}$

$$a_{մաքս} = 1.2 \div 1.4$$

Բնակավայրում 16500 բնակչության դեպքում՝

$$b_{մաքս} = 1.75$$

$$Q_{մաքս.ժ} = 1.2 \bullet 1.75 \bullet \frac{4290}{24} = 375.4 \text{ մ}^3/ժամ$$

Մինիմալ ջրապահանջի օրվա հաշվարկային ժամային ելքը կլինի՝

$$Q_{մին.ժ} = K_{ժ.մին} Q_{օր.մին} / 24$$

որտեղ $K_{ժ.մին} = a_{մին} \bullet b_{մին}$

$$a_{մին} = 0.4 \div 0.6$$

Բնակավայրում 16500 բնակչության դեպքում՝

$$b_{մին} = 0.1$$

$$Q_{մին.ժ} = 0.4 \bullet 0.1 \bullet \frac{2310}{24} = 3.85 \text{ մ}^3/ժամ$$

Ջրմուղի ցանցի ջրատարների մաքսիմալ ժամային ելքը հաշվարկային է:

Չունենալով արտադրական կառույցների արտադրանքի տեսականու և քանակի վերաբերյալ ճիշտ տվյալներ՝ արդյունաբերության համար պահանջվող խմելու որակի ջրի քանակն ընդունված է բնակչության հաշվարկային ջրապահանջի 20 %-ի չափով: Այս ջրապահանջը հետագայում անհրաժեշտ կլինի ճշտել:

Հակահրդեհային կարիքների համար պահանջվող ջրաքանակը հաշվարկված է համաձայն գործող նորմաների պահանջների: 10-25 հազար բնակչությանը բնակավայրերի համար միաժամանակյա արտաքին հրդեհների քանակը՝ 2 է, մեկը՝ 1x10/վրկ, մյուսը՝ 1x15/վրկ: Ներքին հրդեհ 2x2.5/վրկ: Ընդհանուր ջրապահանջը հակահրդեհային նպատակների համար կազմում է՝

$$Q_{h,h} = 1 \times 10 + 1 \times 15 + 2 \times 2.5 = 30 / \text{վրկ}$$

Հրդեհի տևողությունը ընդունվում է 3 ժամ:
Որոշենք հակահրդեհային կարիքների համար պահանջվող ջրաքանակը

$$W_{h,h} = \frac{3 \cdot 30 \cdot 3600}{1000} \cdot 2 = 648 \text{ մ}^3$$

Հակահրդեհային կարիքների համար պահանջվող ջրաքանակը պետք է վերականգնվի ՕԿՁ-ներում 24 ժամվա ընթացքում: Այդ նպատակով ընդհանուր ջրամատակարարման համակարգում հաշվարկված է լրացուցիչ ջրի քանակ՝

$$Q = \frac{648 \cdot 1000}{24 \cdot 3600} = 7.5 / \text{վրկ}$$

Ստորև բերված աղյուսակ 1-ում տրված է խմելու-տնտեսական և արդյունաբերական կարիքների համար պահանջվող ջրի քանակը:

| N | Ձրատպառողներ | Քանակ հազ. մարդ | Ձրապահանջի նորման+30% /օր | Ձրապահանջը 2006թ. | | Քանակ հազ. մարդ | Ձրապահանջի նորման+30% /օր | Ձրապահանջը 2021թ. | |
|---|--|-----------------|---------------------------|--------------------|---------------|-----------------|---------------------------|--------------------|----------|
| | | | | մ ³ /օր | լ/վրկ | | | մ ³ /օր | լ/վրկ |
| | | | | 1 | Բնակչությունը | | | 6.6 | (200+60) |
| 2 | Արդյունաբերություն և այլ առևտրական կազմակերպություններ | - | 20 % | 343.2 | 3.97 | - | 20 % | 858 | 9.9 |
| 3 | Հոսքակորուստներ Ընդամենը | - | 70% | 1201.2 | 13.9 | - | 30% | 1287 | 14.9 |
| | | - | - | 3260.4 | 37.73 | - | - | 6435 | 74.4 |

Ըստ կատարված հաշվարկի, Ապարան քաղաքի հեռանկարային զարգացման ժամանակաշրջանի համար խմելու որակի միջին ջրապահանջը կազմում է 74.4/վրկ:

Ինչպես վերևում նշվեց քաղաքի ջրամատակարարման համակարգը սնող ջրաղբյուրներն երկուսն են՝ «40 Աղբյուր» («ժամի աղբյուր») և «Եզևակի աղբյուր»-ները, որոնցից ջուրը պոմպերի միջոցով մղվում է ՕԿՁ-ները և ջրատար խողովակներով տեղափոխում քաղաքի տարածք, իրացվում ջրամատակարարման խողովակներին: Քանի որ պոմպակայանների աշխատանքը բերում է էլեկտրաէներգիայի ծախսի, ուղիներ են փնտրվել ջուրը սպառողներին հասցնել ավելի էժան՝ ինքնահոս եղանակով: Նախատեսվել է Ձախիծորի աղբյուրների տարածքից $d=150-200$ մ տրամագծի խողովակներով ≈ 4.5 կմ երկարությամբ ջուր բերել և լցնել քաղաքի հյուսիսային մասում գտնվող 2000մ³ ծավալ ունեցող ՕԿՁ-ն: Ասկայն շինարարությունը լրիվ չի ավարտվել և հնարավոր չի եղել ջրատարի շահագործումը: Խողովակները մնալով հողի մեջ ենթարկվել են կոռոզիայի, քայքայվել և փոթել: Այժմ նրանց ≈ 30 %-ը պիտանի չեն օգտագործման համար: Ինքնահոս եղանակով Եզևակի աղբյուրներից խմելու ջուր է ստանում քաղաքի կենտրոնական թաղամասը, որը, սակայն լրիվ չի բավարարում այս թաղամասի սպառողների պահանջները:

II-6.1.3. Ջրամատակարարման համակարգը և գոտիները

Ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է: Բնակչության խմելու-կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջներն իրականացվում են մեկ ջրատարով:

Հաշվի առնելով Ապարան քաղաքի կառուցապատված տարածքի Նիշերը՝ ռելիեֆը և ջրաղբյուրների տեղաբաշխումը, ջրմուղի ցանցում անհրաժեշտ թույլատրելի ճնշումը, պահանջվող ջրաքանակն ապահովելու համար, զարգացի ջրամատակարարման բաշխիչ ցանցն ըստ սնման աղբյուրների նախատեսվում է բաժանել 2 գոտու՝ I (հյուսիսային, որը սնվում է «40 Աղբյուր» («ժամի աղբյուր») -ից) և II (հարավային՝ սնվում է «Եզևակի աղբյուր»-ից), իրենց օրվա կարգավորիչ ջրամբարներով: Նման բաժանումը պարզեցնում է բաշխիչ ցանցի շահագործումը և հուսալիությունը: Տեղադրվում են ջրաչափեր: Ջրաչափական համակարգի օգնությամբ հեշտանում է հոսքակորուստների հայտնաբերումը:

Բնակչությանը 24 ժամ ջրամատակարարումով, ինչպես նաև անհրաժեշտ հակահրդեհային ելքն ապահովելու համար: Հաշվենք օրվա կարգավորման ջրամբարների ծավալը հաշվարկային ժամանակաշրջանի համար:

Ջրմուղի ցանցի աշխատանքը ներդաշնակ դարձնելու համար ՕԿՁ-ում անհրաժեշտ է ունենալ կարգավորման ծավալ:

$$W_{II} = 0.3 \cdot 6435 = 1930.5 \text{ մ}^3$$

Վերևում հաշված հակահրդեհային կարիքների համար պահանջվող ջրաքանակը հավասար է.

$$W_{h,h} = 648 \text{ մ}^3$$

ՕԿՁ-ներում նախատեսվում է ջրի վթարային պաշար: Վթարի վերացման ժամանակամիջոցը նախատեսվում է 12 ժամ:

$$W_{\text{վթ}} = \frac{6435 \cdot 12}{24} = 3217.5 \text{ մ}^3$$

Մաքուր ջրի օրվա կարգավորման ջրամբարներում ջրի ծավալը կլինի՝

$$W = W_{II} + W_{h,h} + W_{\text{վթ}} = 1930.5 + 648 + 3217.5 = 5796.0 \text{ մ}^3$$

Ինչպես վերևում նշվեց առկա օրվա կարգավորիչ ջրամբարները քաղաքում 4 հատ են հետևյալը ծավալներով՝ :

$$W_I = 1 \times 2000 \text{ մ}^3 \quad W_{II} = 2 \times 600 \text{ մ}^3$$

$$W_{III} = 1 \times 2000 \text{ մ}^3$$

Գործողները՝ 2 հատ:

$$W_I = 1 \times 2000 \text{ մ}^3 \text{ (վթարային է, չի գործում)}$$

$$W_{II} = 1 \times 600 \text{ մ}^3 \text{ (վթարային է, չի գործում)}$$

Գործող ՕԿՁ-ների ընդհանուր ծավալը կլինի

$$W_{\text{ՕԿՁ}} = 2000 + 600 = 2600 \text{ մ}^3$$

Որպեսզի ապահովվի հաշվարկային ջրի ծավալը անհրաժեշտ է՝

I. Տարբերակ: - Գոյություն ունեցող վթարային վիճակում գտնվող 1x2000մ³, 1x600մ³ ՕԿՁ-ների հիմնովին վերակառուցում, քլորակայանի և սանիտարական գոտու ցանկապատի կառուցում: Ջրամբարը սնող ջրատարների կառուցում:

Գոյություն ունեցող առկա ՕԿՁ-ների ընդհանուր ծավալը կլինի՝

$$W_{\text{ՕԿՁ}} = 1 \times 2000 + 2 \times 600 + 1 \times 2000 = 5200 \text{ մ}^3$$

Հաշվարկային ժամանակաշրջանում անհրաժեշտ ջրի պաշարը, որը 5796.0մ³ է, ապահովելու համար կարելի է նախատեսել ևս մեկ նոր $W = 600 \text{ մ}^3$ ծավալի ՕԿՁ-ի կառուցում քաղաքի հարավ- արևմտյան հատվածում գոյություն ունեցող 2 x 600 ՕԿՁ-ների տարածքում:

Ասկայն այս լուծումը հանգեցնում է նրան, որ անհրաժեշտություն է առաջանում նոր պոմպակայանի կառուցման կամ հին պոմպակայանի հզորացման: Սա բերում է լրացուցիչ էլեկտրաէներգիայի ծախսի, որը տնտեսապես նպատակահարմար չէ:

Նախագծով նախատեսվում է օգտագործել «Եզևակի աղբյուր»-ի աղբյուրակայանի (կապտած) պողպատե $d=300$ մ խողովակով արտահոսող 60-70/վրկ խմելու ջուրը, որը լցվում է բեռոնե ջրանցքը և հեռացվում: Այս ջրից 15/վրկ վերցնել, պողպատե խողովակներով տեղափոխել և միացնել ռելիեֆի ավելի ցածր կետում գտնվող Քասախ գետի աջ ափի երկարությամբ ձգվող բնակելի թաղամասերի և աղբյուրի հարող ծախսի նյա ցածրադիր մասում գտնվող ջրամատակարարման ցանցին՝ ապահովելով անհրաժեշտ ելքը և ճնշումը:

Նախատեսվում է նաև ջուր վերցնել քաղաքի արևմտյան հատվածից, Քասախ գետի մոտ գտնվող, «Միրո աղբյուր»-ի հարևանությամբ անցնող $d=100$ մ տրամագծի խմելու ջրաղբյուր: Այս հատվածում ջուրն աննպատակ թափվում է ռելիեֆի վրա: Նախատեսվում է վերցնել 10/վ ջուր և պողպատե խողովակներով տեղափոխելով միացնել գետի ձախ ափին նոր նախագծվող բնակելի կառույցների ջրամատակարարման ցանցին: Այս տարբերակում նախատեսվում է միացման կետերի մոտ կառուցել քլորակայաններ: Ձուրը քլորացումից հետո է միայն տեղափոխվում և միացվում ջրամատակարարման ցանցին: Այս դեպքում կարևոր դեր է խաղում այն հանգամանքը, որ նախագծվող նոր ջրատարները ջուրը տեղափոխում են ջրամատակարարման համակարգ ինքնահոս եղանակով, առանց էլեկտրաէներգիա ծախսելու: Ինքնահոս եղանակով ջուրը ջրամատակարարման համակարգ տեղափոխելու համար անհրաժեշտ է ≈ 1.0 կմ $d=150 \div 100$ մ խողովակաշար:

Վերակառուցել Ձախիծորի աղբյուրների տարածքից ելող, քաղաքի հյուսիսային կողմի $W=2000$ մ³ ջրավազանը սնող ջրատարը ≈ 4.5 կմ, և է 12 /վրկ ջուր կլցվի ՕԿՁ - են :

Ավելի կոնկրետ հաշվարկներ և գնահատումներ կկատարվեն բանվորական նախագիծ իրականացնելու դեպքում:

II-6.2 Կոյուղացում

Ներկա վիճակում Ապարան քաղաքը չունի կոյուղու միասնական համակարգ: Կոյուղագծեր են անցնում Բաղրամյան և Գ. Տճեղի փողոցներով: Կոյուղին հեռացվում է քաղաքի կենտրոնի ցածրադիր մասը, առանց որևէ մաքրման ենթարկվելու լցվում Քասախ գետը: Դ. Սևակի թաղամասը ունի ընդամենը 360մ կոյուղագիծ, կեղտաջրերը կոյուղու խողովակներով հեռացվում են փողոցի ցածրադիր մասը, ելնում են գետնի մակերևույթ, տարածելով գարշահոտություն և ստեղծելով հակասանիտարական վիճակ, հոսելով լցվում հեղեղատարը: Մնացած թաղամասերում ընդհանրապես կոյուղի չկա: Եղած կոյուղագծերն ու դիտահորերը գտնվում են կիսավթարային վիճակում: Վերակառուցման են ենթակա կոյուղագծերի ≈80 ÷ 90%-ը:

Ապարան քաղաքից 1.5կմ հեռավորության վրա՝ Մոսկովի ցողունից հյուսիս-արևելք ընկած հատվածում, 1980թվականների կառուցված է եղել կոյուղու մաքրման կայան:Քաղաքի կեղտաջրերը հավաքվել է մաքրման կայանին են մոտեցվել d= 500մմ խողովակներով:

II-6.2.1. Կոյուղու հաշվարկային ելքերը

Կեղտաջրերի հաշվարկային ելքերի որոշման համար, որպես հիմք ընդունվել են ՇՆ և Կ. 2.04.02-84-ը: Ապարան քաղաքի գլխավոր հատակագծով որոշված ազգաբնակչությունը հաշվարկային տարում, արդյունաբերության զարգացումը և ուղղվածությունը:

Հավաքող ցանցի և կոլեկտորների թողունակությունը որոշվում է առավելագույն ժամային ելքերով, որոնք հաշվի են առնում չքօգտագործման անհամաչափությունը:

Նախատեսվող կոյուղու մաքրման կայանի արտադրողականությունը որոշելիս, մատակարարված ջրի օրական ծավալից հանվում է հոսքակորուստների ծավալը և սպառված ջրի ծավալի 10%-ը, որը կորչում է անվերադարձ, սպառման ժամանակ:

Աղյուսակ-2

| N | Սպառողները | Քանակ հազ. մարդ | Սպառման տրոսան | Կոյուղու ելքերը 2005թ. | | | Քանակ հազ. մարդ | Սպառման տրոսան | Կոյուղու ելքերը 2020թ. | | |
|---------|--|-----------------|----------------|------------------------|-----------|-----------|-----------------|----------------|------------------------|-----------|-----------|
| | | | | մ³/օր | միջ լ/վրկ | max լ/վրկ | | | մ³/օր | միջ լ/վրկ | max լ/վրկ |
| 1 | Բնակչությունը | 6.6 | (200+60) | 1716 | 19.86 | - | 16..5 | (200+60) | 4290 | 49.7 | - |
| 2 | Արդյունաբերություն և այլ կազմակերպություններ | - | 20 % | 343.2 | 3.97 | - | - | 20 % | 858 | 9.9 | - |
| 3 | Ընդամենը | - | - | 2059.2 | 23.83 | 44.9 | - | - | 5148 | 59.6 | 100.7 |
| 4 | Անվերադարձ կորուստ | - | 10% | 205.9 | 2.38 | - | - | 10% | 514.8 | 6.0 | - |
| Ամբողջը | | | | 1853.3 | 21.45 | - | - | - | 4633.2 | 53.6 | - |

Նշված հաշվարկները բերված են աղյուսակ 2-ում, որպես հիմք ընդունվել են ջրապահանջի հաշվարկները: Նշված հաշվարկները ցույց են տալիս, որ Ապարան քաղաքի կոյուղու մաքրման կայանի հզորությունը պետք է լինի.

$$4633.2 \times 1.2 = 5559.8 \text{ մ}^3/\text{օր}$$

Հաշվի առնելով տարածքի առանձնահատկությունները կեղտաջրերը լրիվ պետք է ենթարկվեն կենսաբանական մաքրման և վարակազերծման: Մաքրված կեղտաջրերը պետք է ունենան հետևյալ ցուցանիշը-ԹԿ₅ = 6մգ/լ:

Որպես կոյուղու մաքրման կայան երաշխավորվում է կիրառել Մոսկովա քաղաքում՝ Առևտրի տան "Инженерное оборудование" ձեռնարկության "Тверь" մաքրման կայանը 5000-6000մ³/օր արտադրողականությամբ:

II-6.2.2. Նախագծային լուծումներ

Նախատեսվում է գործող կոյուղու համակարգում վթարային վիճակում գտնվող կոյուղագծերը և դիտահորերը փոխարինել նորերով: Համեմատաբար լավ վիճակում գտնվողները վերանորոգել և ապահովել նրանց տրամալայն աշխատանքը: Հատակագծով նախատեսված նոր թաղամասերում անցկացվել է կոյուղու ցանց: Ռեյնֆի նիշերի տարբերությունը հնարավորություն է տալիս, որ կեղտաջրերն ինքնահոս կերպով հավաքվեն կոլեկտորների մեջ և տեղափոխվեն քաղաքի հարավարևմտյան հատվածում նախատեսված վերակառուցվող կոյուղու մաքրման կայանը: Այստեղ կեղտաջրերը ենթարկվում են կենսաբանական մաքրման և վարակազերծման: Այս մաքրված կեղտաջրերը հեռացվում են Ռեյնֆ, և հոսելով լցվում Քասախ գետը: Սրանք կարող են օգտագործվել նաև ոռոգման նպատակների համար:Նախատեսվում է կառուցել և վերակառուցել 39.0 կմ ընդհանուր երկարությամբ կոյուղագիծ՝ d=150 ÷ 500մմ:

II-6.2.3. Անձրևաջրերի հեռացման համակարգ

Քաղաքում նախատեսվում է նաև անձրևաջրերի ընդունման և հեռացման համակարգ: Փողոցներում կառուցվում են մակերևույթային ջրերի ընդունիչ հորեր և խողովակային ցանց, Որոնք ջրերն ընդունելով տեղափոխում են Ռեյնֆի ցածր կետերը և լցնում մոտակա ձորի կամ հեղեղատարի մեջ: Այս կոյուղին նախատեսվում է կառուցել պոլիէթիլենային d=200*400մմ տրամագիծ ունեցող խողովակներից:

II-6.2. 4. Ջրամատակարարման և կոյուղու համակարգի վերակառուցման համար անհրաժեշտ աշխատանքներ

Ինչպես նշվել է ջրամատակարարման և կոյուղու համակարգերը գտնվում են վատ տեխնիկական վիճակում: Հոսքակորուստները կազմում են մոտավորապես 70%:

Ցանցերի տարիքը հիմնականում գերազանցում է 30-35 տարի և գտնվում են վթարային վիճակում:

Ջրամատակարարման համակարգի տրոսավ աշխատանքը ապահովելու համար անհրաժեշտ է կառուցել մոտավորապես 53.5 կմ բաշխիչ ցանց, որից տրոսաղորդող՝ 48.5 կմ, վերակառուցվող 5.0 կմ: Ջրամատակարարման ցանցը նախատեսվում է իրականացնել պողպատե էլեկտրատեղակցվող խողովակներից d=250÷200մմ L=1.0 կմ, d=150մմ L=2.8 կմ, d=100÷50մմ L=14.7 կմ: Պետք է կատարել անընդհատ աշխատանք խողովակների հայտնաբերման և վերացման համար:

Կոյուղու ցանցերի տրոսավ աշխատանքը ապահովելու և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը տրոսավ պահելու համար անհրաժեշտ է կատարել անընդհատ աշխատանքներ, կոյուղագծերը խցանումներից մաքրելու և պաշտպանելու համար: Նախատեսվում է կոյուղագծերը իրականացնել պոլիէթիլենային խողովակներից՝ d=100÷150մմ l=25.0 կմ և d=200÷300մմ l=14.0կմ: Կառուցվելու է մոտավորապես 39.0կմ կոյուղագիծ:Որից վերակառուցվող՝ 9.0 կմ կոյուղու վթարային և 30.0 կմ նոր խողովակաշար:

Համակարգի վերակառուցման ժամանակ պետք է հաշվի առնվեն արտակարգ իրավիճակներում կայուն ջրամատակարարման և կոյուղացման ապահովումը:

- Այս առումով նախատեսվում է
- ՕԿԶ-ներում հակահրդեհային և վթարային ջրի պաշարների պահում,
- Արտակարգ իրավիճակներում աղբյուրները իրարով փոխարինելու հնարավորություն,
- Բաշխիչ ցանցերը պետք է լինեն գոտիավորված, օղակային և ապահովված հակահրդեհային հիդրանտներով:

II-6.2. 5. Ոռոգման համակարգ

Առկա վիճակ: Համաձայն ուսումնասիրությունների պարզվել է, որ Ապարան քաղաքի ոռոգման ցանցը կառուցված է խողովակաշարային և բաց առունների սխեմայով: Երկարատև շահագործման հետևանքով ոռոգման սխեմանը գտնվում է վթարային վիճակում: Որոշ տարածքներ ոռոգվում են փողոցների զոնգահեռ տարված բաց առուններով, որոնք նույնպես վթարային վիճակում են:

Որոշ թաղամասեր առհասարակ չեն ոռոգվում կամ ոռոգվում են մասնակիորեն, ոռոգման ցանցերի բացակայության պատճառով:

Տեղանքի մեծ թեղությունների պատճառով տեղի է ունենում բաց առունների քայքայման և ոռոգման ջրի մեծ կորուստներ ֆիտորացիայի վրա:

Որոշ թաղամասեր ոռոգվել են նախկինում գոյություն ունեցող արմավկայանի միջոցով, որը ներկա դրությամբ իր ամբողջ ցանցով չի գործում:

Որոշ թաղամասեր ոռոգվել են Մայր առու կոչվող ջրանցքով, որը ջրը է վերցնում Քասախ գետից և գտնվում է անսխիթաբ վիճակում:

Ներկա դրությամբ ոռոգման ջրի աղբյուր է հանդիսանում հաավարի ջրատարից սկիզբ առնող D=700÷500մմ տրամագծի պողպատե խողովակաշարը:

Խողովակաշարն անցնում է Ապարան քաղաքի Հյուսիսարևելյան մասով և հասնում է մինչև Լուսապոլի սահմանը: Ջրագծի մի ճյուղը քաղաքի Հյուսիսարևելյան եզրով անցնում է դեպի հարավ, և հասնում է մինչև «ՆԻԳ» գործարանի տարածքը, այնուհետև հասնելով Երևան-Սպիտակ մայրուղին, անցնում է քաղաքի հարավարևմտյան թաղամասերը:

II-6.2. 6. Ոռոգման տրոսերը և հաշվարկային ջրապահանքը

Համաձայն Ապարան քաղաքի գլխավոր հատակագծի քաղաքի ընդհանուր մակերեսը կազմում է 573 հեկտար, որից ոռոգելի են 434 հեկտարը:

Ոռոգման ջրի քանակը որոշելու համար օգտագործված է «ՀՀ գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման ռեժիմները վեգետացիայի ընթացքում տեղումների 75% ապահովվածության տակ» ձեռնարկի N12 ռեժիմի:

Հաշվարկային քանակներն են՝

$$q = \frac{m}{86.4 \bullet t} \quad \text{լ/վրկ 1 հա}$$

$$Q_{\Sigma} = q \bullet W_{\text{վրկ}}$$

$$Q_{\text{հաշվ}} = Q_{\Sigma} \bullet h_{\text{փոստմ}} \text{ լ/վրկ}$$

$$h_{\text{փոստ}} = h_{\text{առվ}} \bullet h_{\text{ցանց}}$$

$$Q_{\Phi} = Q_{\Sigma} \bullet K_{\Phi} \text{ լ/վրկ}$$

Ոռոգման ջրի քանակը հաշվելու համար նախատեսվում է, որ ոռոգելի տարածքներում մշակվում են պողպատե ալյուրե և բանջարաբուստանային կուլտուրաներ:

Հաշվարկային միավոր ընդունվում է բանջարաբուստանային կուլտուրաները:

Ոռոգման համար անհրաժեշտ ջրի քանակը կլինի՝

$$q = \frac{434}{86.4 \bullet 14} = 0,359 \text{ լ/վրկ}$$

$$h_{\text{փոստ}} = 0.98 \bullet 0.8 = 0,784$$

$$Q_{\Sigma} = 434 \bullet 0.359 = 155.8 = 160 \text{ լ/վրկ}$$

$$Q_{\text{հաշվ}} = Q_1 \cdot n_{\text{գոտ}} = 160 \cdot 0,784 = 204,1 \approx 205 \text{ ր/վրկ}$$

II-6.2.7. Ոռոգման համակարգը

Գոյություն ունեցող ոռոգման ջրանցքի ջուրը տրվում է ոռոգվող հողատարածքներին պողպատե խողովակներով ստորգետնյա տեղադրումով: Խողովակաշարերն անցնում են փողոցների զուգահեռ: Յուրաքանչյուր մեկ հողակտորին նախատեսվում է մեկ ջրօղղ կառուցվածք: Հասարակական կանաչ տարածքները ջրելու համար խողովակաշարի վրա տեղադրված ջրօղղները նախատեսված են 20մ հեռավորության վրա:

Ոռոգման ցանցի վրա նախատեսված են համապատասխան քանակի բաժանարար, օդահան և դատարկող հորեր: Խողովակային ցանցը ոռոգման ժամանակաշրջանի վերջում դատարկում են ջրից: Դողպատե խողովակներն ընդունված են ըստ ՊՍՏ 10704-91-ի, տրամագծերը D=114x5+530x5մմ: Խողովակաշարերը տեղադրվում են փողոցների բարեկարգումից առաջ: Բարեկարգված փողոցներով անցնելու համար նախատեսվում է փողոցների ծածկի վերականգնում:

II.6.2.8. Հեղեղատար

Ապարան քաղաքային համայնքի տարածքը գտնվում է Քասախ գետի ջրիավազ գոտու սահմաններում: Ապարանի ջրամբարի նախագծման ժամանակ կատարվել է մանրամասն հիդրոլոգիական հաշվարկներ և որոշվել է ջրամբարի պատվարի հատվածում հնարավոր հեղեղային ջրերի էլքերի քանակները:

Ըստ վերոհիշյալ հաշվարկների 1% էլքերը կազմել են 173մ³/վրկ, իսկ ջրիավազ մակերեսը 591կմ²: Ապարանի ջրամբարը գտնվում է քաղաքից շուրջ 15կմ գետի հոսանքով ցած, հետևապես Ապարան քաղաքի սահմաններում գետի ջրիավազ մակերեսը կազմում է 366կմ², հետևապես համաձայն համեմատության 1% հավանական էլքերի քանակը կկազմի 173/591*366=107մ³/վրկ: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ապարան քաղաքի սահմաններում Քասախ գետի մեջ են թափվում հիմնականում 6 հեղեղատարներ, 3-ը ձախ փիցի և 3-ը աջ փիցի, որոնց ջրիավազ մակերեսները կազմում են N1 հեղեղատար-F₁ = 3.6կմ², N2-F₂ = 5.0կմ², N3-F₃ = 11.3կմ², N4-F₄ = 12.0կմ², N5-F₅ = 15.0կմ² և N6-F₆ = 18.8կմ²:
 Վերոհիշյալ հեղեղատարների 1% հավանականության հաշվարկային էլքերը հաշվարկված են և ունեն հետևյալ չափերը Q₁=1.0մ³/վրկ, Q₂=1.5մ³/վրկ, Q₃ = 3.4մ³/վրկ, Q₄=4.0մ³/վրկ, Q₅=4.5մ³/վրկ և Q₆=5.6մ³/վրկ:
 Վերոհիշյալ էլքերի և հունի երկայնական թեքություններին համապատասխան հաշվարկված է նրանց անհրաժեշտ չափերը, որոնք բերվում են ստորև աղյուսակում:

| Գետերի և հեղեղատարների անվանումը | Ջրիավազ մակերեսը կմ ² | Երկամակամ թեքությունները | Ջրի հաշվարկային էլքերը Qմ ³ /վրկ | Հունի ամրացման նմանաբան երկարությունները կմ | Ամրացման եղանակի նկարագրերը |
|----------------------------------|----------------------------------|--------------------------|---|---|-----------------------------|
| Քասախ գետ | 366.0 | 0.014 | 107.0 | 2.2 | |
| Հեղեղատար N1 | 3.6 | 0.04 | 1.0 | 1.5 | |
| Հեղեղատար N2 | 5.0 | 0.015 | 1.5 | 2.0 | |
| Հեղեղատար N3 | 11.3 | 0.025 | 3.4 | 1.2 | |
| Հեղեղատար N4 | 12.0 | 0.028 | 4.2 | 1.4 | |
| Հեղեղատար N5 | 15.0 | 0.043 | 4.5 | 1.6 | |
| Հեղեղատար N6 | 18.8 | 0.053 | 5.6 | 1.8 | |

II-6.3. Էներգամատակարարում

II-6.3.1. Էլեկտրամատակարարում

II-6.3.1.1. Ներկա վիճակը

Տես I-8.5 բաժնում:

II-6.3.1.2. Բեռնվածքների հաշվարկը

Առավելագույն հզորությունների քանակի որոշման համար հիմք են հանդիսացել ներկայացվող գլխավոր հատակագծի տվյալները, ըստ որի Ապարան քաղաքի բնակչության հաշվարկային քանակը 16.5 հազար է:

Հաշվարկային առավելագույն հզորությունը հաշվված է որպես հզորությունների գումար՝

ա) կոմունալ-կենցաղային պահանջների, հասարակական կուլտուր-կենցաղային շինությունների, ինչպես նաև արտաքին լուսավորության,

բ) արտադրական օբյեկտների բեռնվածություններ:

Կոմունալ-կենցաղային պահանջների առավելագույն հզորությունների հաշվարկը կատարված է համաձայն գործող նորմերի, ըստ որի մեկ մարդուն հասանելի էլեկտրաէներգիայի ցուցանիշն ընդունված է 1700 կվտ/տարի, տարվա օգտագործվող ժամերի քանակը 5200 ժամ: Չունենալով արտադրական օբյեկտների (որոնք ներկայումս հայտնի պատճառներով չեն գործում) արտադրանքի տեսականու և քանակի վերաբերյալ տվյալներ, նրանց կողմից պահանջվող էլեկտրաէներգիայի քանակը հետագայում կարիք կլինի ճշտել:

Կոմունալ-կենցաղային և արտադրական կարիքների համար պահանջվող էլեկտրաէներգիայի քանակը հաշվարկային ժամանակաշրջանի համար

աղ. Հ - II - 6.3.1.2.

| Սպառողները | քանակը հազ. | մեկ մարդու պահանջվող էլ. էներգիայի քանակը կվտ ժամ/տարի | էլ. էներգիայի գումարային ծախսը հազ.կվտ/ժամ տարի | տարվա օգտագործվող ժամերի քանակը (ժամ) | մաքսիմալ պահանջվող հզորությ. կվտ |
|--|-------------|--|---|---------------------------------------|----------------------------------|
| Բնակչությունը | 16.5 | 1700 | 28050 | 5200 | 5394 |
| կորուստներ և չնախատեսված ծախսեր (20 %) | | | | | 1079 |
| Ընդամենը | | | | | 6473 |
| Արտադրական օբյեկտներ (30 %) | | | | | 1942 |
| Ամբողջը | | | | | 8415 |

Ըստ կատարված հաշվարկների՝ Ապարան քաղաքի հաշվարկային զարգացման ժամանակաշրջանի համար պահանջվող էլեկտրաէներգիայի քանակը կազմում է մոտ 8.42 մլտ:

Վերը նշված պահանջը կբավարարվի գոյություն ունեցող «Ապարան» 110 կվ լարման ենթակայանից:

| Էլեկտրաէներգիայի գումարային օգտագործում, այդ թվում | հազար կվտ/ժամ տարի | Ելակետային տարի հազար կվտ/ժամ | Առաջնահերթ փուլ | Հեռանկարային փուլ հազար կվտ/ժամ |
|--|--------------------|-------------------------------|-----------------|---------------------------------|
| Արտադրական օբյեկտների կարիքների համար | կվտ/ժամ տարի | 1660 | | 1942 |

| | | | |
|---|--------------------|------|------|
| Կոմունալ-կենցաղային կարիքների համար | հազար կվտ/ժամ տարի | 1770 | 5394 |
| 1 մարդու կողմից տարեկան էլեկտրաէներգիայի օգտագործում, այդ թվում կոմունալ-կենցաղային կարիքների համար | հազար կվտ/ժամ տարի | 1700 | 1700 |

Նախագծային առաջարկություններ

! Առաջնահերթ միջոցառումներ՝
 ! Գոյություն ունեցող ցանցի մասնակի (մինչև 30%) վերանորոգում:
 ! 10 և 0.4 կվ լարման ցանցի համապատասխանեցում անվտանգության տեխնիկայի պահանջներին:
 ! Միջոցառումներ ուղղված համակարգային կորուստների նվազեցմանը, այդ թվում էլեկտրաէներգիայի հաշվարկի համակարգի սարքավորումների լրիվ փոխարինում ինդուկցիոնի՝ էլեկտրոնային: Վերջինս նշանակալի կիչեցնի «համակարգից դուրս կորուստների» մակարդակը, որը Ապարան քաղաքում կազմում է 22% (Նորմատիվային առավելագույն կորուստը - 12 %):
 ! Ենթակայանների վերանորոգում, էլեկտրահաղորդման գծերի փայտյա հենասյուների փոխարինում նորերով:
 ! Նախագծվող բնակավայրերի էլեկտրամատակարարման ցանցի 35% - ի վերականգնում, ապա լրիվ կառուցում:
 ! Նոր թաղամասերի (ինչպես նաև ռեկրեացիոն տեղամասի) համար անհրաժեշտ 10 կվ և 0.4 կվ լարման ցանցի նախատեսում:
 էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում ապահովելու համար երկտրանսֆորմատորային ենթակայանների նախատեսում:
 Բնակելի տարածքով անցնող 35կՎ և 110կՎ բարձր լարման գծերի ապամոնտաժում և տեղափոխում ազատ գոտի, ենթակայանից դուրս եկող 10 կվ գծերի փոխարինում մալուխայինով:

II-6.3.2. Գազամատակարարում

Ապարան քաղաքի 70 %-ը գազաֆիկացված է: Ներկայումս շարունակվում են գազաֆիկացման աշխատանքները: Գազամատակարարման աղբյուր է հանդիսանում միջին ճնշման 325մմ տրամագծով գազատարը, որն անցնում է քաղաքի Հյուսիսարևելյան տարածքով: Քաղաքի գազամատակարարումն իրականացվում է 3 գազաբաշխիչ կայաններով և 3 գազաբաշխիչ պահարաններով: Բնակավայրի գազաֆիկացման մակարդակը կազմում է 1419000 խմ տարի: Նախատեսվում է բնակչության թիվը հասցնել 16500 մարդ: Քաղաքի բնակչության աճին զուգընթաց կկառուցվի 27.0 կմ երկարությամբ նոր գազամատակարարման ցանց:

II-6.3.2.1. Գազի ծախսը հաշվարկային ժամանակաշրջանի համար

Գազամատակարարման ընդհանուր պահանջարկի հաշվարկները կատարելիս հաշվի է առնված բնակչության հետևյալ պահանջների բավարարումը՝ առանձնատների բնակիչների համար ջեռուցման բավարարումը բնակարանային փոքր հզորության կաթսաներով կամ գազավառարաններով, տաք ջրի ստացումը գազային ջրատաքացուցիչներով, իսկ կերակրի պատրաստումը գազսալիկների միջոցով: Ըստ կատարված նախնական հաշվարկների, Ապարան քաղաքի գազի հաշվարկային տարեկան ծախսն այժմ կազմում է 2.5 մլն մ3 տարի, իսկ հեռանկարում՝ 5.9 մլն մ3 տարի:

Նախագծային առաջարկություններ

Ներկայացվող գլխավոր հատակագծով՝ քաղաքի բնակչության կենցաղային տնտեսական, ինչպես նաև արտադրական կարիքների բավարարման համար, ջերմային աղբյուր է հանդիսանում բնական գազը: Ներկայացվող ուրվագծով և նախատեսված է նոր թաղամասերի գազամատակարարման ցանցի ընդարձակում և 1 գազավարգավորիչ կայանի կառուցում:

II-6.3.3. Ջերմամատակարարում

Կաթսայատներ կունենան վարչական, հասարակական շենքերը, դպրոցները, մանկապարտեզները, հիվանդանոցները և արդյունաբերական օբյեկտները: Անհատական շենքերի ջեռուցումը նախատեսվում է իրականացնել հիմնականում գազի բնակարանային կաթսաներով կամ վառարաններով: Բազմաբնակարան շենքերում ջերմամատակարարումը նախատեսվում է իրականացնել ոչ մեծ, ժամանակակից կաթսայատներով (2-3 շենքի համար մեկ կաթսայատուն):

II-6.4. Կապի ցանց

1. Նախատեսվում է գործող անալոգային ԱՀԿ-ի վերակառուցում և հեռախոսային գծերի անցկացում ցածր լարման հենասյուների վրայով:
2. Ռադիոֆիկացիայի գծերը նախատեսվում է անցկացնել գոյություն ունեցող հեռախոսահորերով և շենքերի տանիքներով:

ՀԱՍՏԱՅԵԻ ՉԼՆԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԵՐԸ

| Ցուցանիշները | Չափի միավորը | Քանակը | |
|---|--------------|-----------------|----------|
| | | Ելակետային տարի | Հեռանկար |
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. Տարածքը | | | |
| Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ | | | |
| ընդամենը | հա | 2815.8 | 2815.8 |
| այդ թվում՝ | | | |
| բնակավայրի փաստացի սահմաններում ընդգրկված հողեր | հա/% | 434.9 | 496.8 |
| բնակավայրի նախագծային սահմաններում ընդգրկված հողեր | հա/% | - | 62.25 |
| բնակավայրերի հողեր | հա/% | 434.9 | 496.8 |
| որից՝ | | | |
| բնակելի կառուցապատման | հա/% | 245.2 | 376.1 |
| հասարակական կառուցապատման | հա/% | 20.6 | 36.5 |
| խառը կառուցապատման | հա/% | 1.2 | 1.2 |
| ընդհանուր օգտագործման տարածք | հա/% | 55.7 | 63.0 |
| որից՝ | | | |
| ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ | հա/% | 13.4 | 22.0 |
| փողոցներ, հրապարակներ | հա/% | 42.3 | 41.0 |
| այլ տարածքներ | հա/% | 112.2 | 20.0 |
| արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր | հա/% | 31.9 | 43.3 |
| որից՝ | | | |
| արդյունաբերական օբյեկտների | հա/% | 17.4/ | 25.5 |
| գյուղատնտեսական արտադրական օբյեկտների | հա/% | 11.7 | 15.0 |
| պահեստարանների | հա/% | 0.6 | 0.6 |
| ընդերքի օգտագործման | հա/% | 2.2 | 2.2 |
| Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր | հա/% | 22.4 | 23.3 |
| որից՝ | | | |
| Էներգետիկայի | հա/% | 0.8 | 0.8 |
| կապի | հա/% | 0.5 | 0.5 |
| տրանսպորտի | հա/% | 11.7 | 12.0 |
| կոմունալ ենթակառուցվածքների | հա/% | 9.4 | 10.0 |
| հատուկ պահպանվող տարածքների հողեր | հա/% | 24.1 | 56.5 |
| որից՝ | | | |
| բնապահպանական | հա/% | - | - |
| առողջարարական նպատակով նախատեսված | հա/% | - | - |
| հանգստի համար նախատեսված | հա/% | - | - |
| պատմական և մշակութային | հա/% | 24.1 | 56.5 |
| հատուկ նշանակության հողեր | հա/% | 4.2 | 4.2 |
| գյուղատնտեսական նշանակության հողեր | հա/% | 2101.6 | 2095.0 |
| որից՝ | | | |
| վարելահող | հա/% | 771.8 | 720.0 |
| բազմամյա տնկարկներ | հա/% | - | - |
| խոտհարքներ | հա/% | 133.9 | 134.0 |
| արոտավայրեր | հա/% | 1243.1 | 1200.0 |
| այլ հողատեսքեր | հա/% | 52.7 | 41.0 |

| | | | |
|---|----------------------|---------|---------|
| անտառային հողեր | հա/% | 83.0 | 83.0 |
| ջրային հողեր | հա/% | 13.8 | 13.8 |
| պահուստային հողեր | հա/% | - | |
| 2. Տարածքն ըստ սեփականության ձևերի | | | |
| պետական սեփականություն | հա/% | 135.8 | 173.3 |
| համայնքի սեփականություն | հա/% | 1600.0 | 1473.5 |
| ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականություն | հա/% | 1080.0 | 1169.0 |
| 3. Դեմոգրաֆիական տվյալներ | | | |
| բնակչության թիվը | հազ.մարդ | 6.6 | 16.5 |
| բնակչության խտությունը | հազ.մարդ/հա | | |
| բնակչության տարիքային կազմը, այդ թվում՝ | | | |
| մինչև 15 տարեկան երեխաներ | հազ. մ/% | 1589 | 3960.0 |
| աշխատունակ հասակի բնակչություն | հազ. մ/% | 4236 | 10500.0 |
| թոշակառու բնակչություն | հազ. մ/% | 775 | 1980.0 |
| 4. Բնակելի ֆոնդը | | | |
| ընդհանուր բնակելի ֆոնդը | հազ. ք.մ ընդի մակ | 145.467 | 363.00 |
| որից՝ | | | |
| բազմաբնակարան տներ | ք.մ/% | 52.467 | 191.10 |
| մենատներ | ք.մ/% | 93.00 | 171.90 |
| գոյություն ունեցող պահպանվող բնակ. ֆոնդը | ք.մ/% | 106.00 | - |
| Բնակելի ֆոնդն ըստ հարկայնության | | | |
| 1-2 հարկանի | ք.մ/% | 93.00 | 171.90 |
| 3-4 հարկանի | ք.մ/% | 22.467 | 191.10 |
| 5 հարկ և ավելի | ք.մ/% | 30.00 | - |
| Բնակչության միջին ապահովվածությունը բնակելի ընդհանուր մակերեսով | ք.մ/մարդ | 18.0 | 22.0 |
| Առկա բնակելի ֆոնդի նվազումը, այդ թվում՝ | ք.մ/մարդ | | |
| ըստ տեխնիկական վիճակի | ք.մ/մարդ | | |
| ըստ վերակառուցման | ք.մ/մարդ | | |
| ըստ այլ պատճառների | ք.մ/մարդ | | |
| 5. Բնակչության մշակութային և կենցաղային սպասարկման համակարգը | | | |
| մանկական նախադպրոցական կազմակերպություններ | տեղ/հազ. մարդ | 68 | 1680 |
| հանրակրթական դպրոցներ | տեղ/հազ. մարդ | 1260 | 2970 |
| հիվանդանոցներ | մահճ./հազ. մարդ | 110 | 200 |
| պոլիկլինիկաներ | հաճախում/հերթ | 90 | 150 |
| | | 1 | 2 |
| առևտրի օբյեկտներ | ք.մ առ.մակ/հազ. մարդ | 1650 | 4620 |
| կենցաղային սպասարկման օբյեկտներ | աշխ.տեղ/հազ. մարդ | 15 | 148 |
| առողջարանային հանգստի հիմնարկներ | տեղ | | |
| այդ թվում՝ | | | |
| հանգստյան տներ, պանսիոնատներ և այլն | տեղ | | |
| երեխաների համար ճամբարներ | տեղ | | |
| 6. Տրանսպորտային սպասարկում | | | |
| Մայրուղային ճանապարհների և փողոցների երկարությունը | | | |
| ընդամենը | կմ | | |
| այդ թվում՝ | | | |
| արագընթաց շարժման մայրուղային ճանապարհներ | կմ | - | |
| չընդհատվող շարժման համաքաղաքային նշանակության մայրուղի | կմ | - | |
| կրտաքին տրանսպորտ | | | |
| այդ թվում՝ | | | |
| Էլեկտրաֆիկացված երկաթուղի | ուղի/կմ | - | |
| ավտոբուս | ուղի/կմ | 7.8 | 12.0 |
| օդային տրանսպորտ | ուղի/կմ | - | |
| Վանուշներ, ուղեվանուշներ, տրանսպորտային հանգույցներ | ուղի/կմ | 3 | 6 |
| Ճանապարհափողոցային ցանցի խտությունը ընդամենը | կմ/քառ.կմ | 1.6 | 2.3 |
| այդ թվում բնակավայրի կառուցապատման սահմաններում | կմ/քառ.կմ | 1.6 | 2.3 |
| 7. Ինֆրակառուցվածքի և բարեկարգում | | | |
| Ընդհանուր ջրօգտագործում, ընդամենը | հազ.խմ/օր | 3.26 | 6.43 |
| այդ թվում՝ | | | |
| տնտեսական-խմելու նպատակով | հազ.խմ/օր | 1.72 | 4.3 |
| արտադրական կարիքների համար | հազ.խմ/օր | 0.34 | 0.86 |
| Ցրամատակարարման համակարգի գլխամասային կառույցների հզորություն | հազ.խմ/օր | | |
| Ցրամատակարարման օգտագործման աղբյուրներ,որից՝ մաքուր ջրօգտագործում | հազ.խմ/օր | 3.26 | 6.43 |
| Կեղտաջրերի ընդհանուր ելքը, ընդամենը | հազ.խմ/օր | 1.85 | 4.63 |
| այդ թվում՝ | | | |
| կենցաղային կոյուղի | հազ.խմ/օր | 1.72 | 4.29 |
| արտադրական կոյուղի | հազ.խմ/օր | 0.34 | 0.86 |
| Կոյուղու մաքրման կայանների հզորություն | հազ.խմ/օր | - | 6.0 |
| Էլեկտրաէներգիայի գումարային օգտագործում, ընդամենը | մլն կվտ. ժ/տ | 3.43 | 8.415 |
| այդ թվում՝ | | | |
| արտադրական կարիքների համար | կվտ.ժ/տ | 1.66 | 1.942 |
| կոմունալ-կենցաղային կարիքների համար | կվտ.ժ/տ | 1.77 | 6.473 |
| 1 մարդու կողմից տարեկան էլեկտրաէներգիայի օգտագործում | կվտ./ժամ | 1700 | 1700 |
| այդ թվում՝ | | | |
| կոմունալ-կենցաղային կարիքների համար | կվտ./ժամ | 1700 | 1700 |
| Էլեկտրաձանրաբեռնվածության ծածկման աղբյուրներ | մլն կվտ. | | |
| այդ թվում՝ | | | |
| Ցերամատակարարում | հազ.Գկվալ | 0.02 | 0.047 |
| Բնակավայրի վառելիքային հաշվեկշռում գազի տեսակարար կշիռը | % | 80 | 100 |
| Գազի օգտագործումը, ընդամենը | մլն խոր.մ | 2.5 | 5.9 |
| այդ թվում՝ | | | |
| արտադրական կարիքների համար | մլն խոր.մ | 0.4 | 0.72 |
| կոմունալ-կենցաղային կարիքների համար | մլն խոր.մ | 2.1 | 5.18 |
| Մակերևութային ջրերի հեռացման ցանց | կմ | | |
| Փողոցային ցանցի ընդհանուր երկարություն | կմ | | |
| 8. Տարածքի ինֆրակառուցվածքի նախապատրաստում | | | |
| Տարածքի պաշտպանությունը ջրածածկումից | | | |
| մակերեսը | հա | 6.0 | 10.0 |
| պաշտպանիչ կառույցների երկարությունը | կմ | 4.0 | 19.0 |

| | | | |
|---|---------|-----------|----------|
| Օգտագործող անոթագրում | Կմ | 0.5 | 5.3 |
| Տարածքի նահանգներում ստորգետնյա ջրերի մակարդակի իջեցում | հա | 6.0 | 22.0 |
| Տարածքի սանիտարական մաքրում | հա | | |
| Կենցաղային աղբի ծավալը | տ/տարի | 1200 | 3300 |
| Աղբի այրման և աղբավերամշակման ձեռնարկություններ | - | - | - |
| 9. Շրջակա միջավայրի պաշտպանություն | | | |
| Աղտոտվածության աղբյուրներից, աղմուկի ներգործությունից պաշտպանող սանիտարապաշտպանիչ գոտիներ, ընդամենը | հա | 17.0 | 77.5 |
| այդ թվում՝ | | | |
| կանաչապատում | հա | 5.64 | 21 |
| Մթնոլորտի օդի աղտոտվածության մակարդակը | Մթն-ից% | 0.03-0.66 | 0.03-0.9 |
| Տրամբարների աղտոտվածության մակարդակը | Մթն-ից% | | |
| Հողի և ընդերքի աղտոտվածության մակարդակը | Մթն-ից% | | |
| Աղմուկի ազդեցության մակարդակը | ԴՏԲ | 63 | 68 |

Գ Լ ՈՒ Խ III

ԱՂԱՐԱԸ ԶԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԻՎՈՐՄԱՆ ԼԱԽԱԳԻՑ

ԼԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

Այս արևմտյան շրջանի գոտիավորման նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության N ԱՇՁԲ-06/99-2 պատվերով, տեխնիկական առաջադրանքի և գոտիավորման կարգի պահանջների համաձայն:

Գոտիավորման նախագծի հիմնորոշ սկզբունքներն են

- Գոյություն ունեցող ճարտարապետաքաղաքաշինական ավանդույթների պահպանումը,
- պատմաճարտարապետական արժեք չունեցող և միջավայրի գեղագիտական ամբողջական կերպարը խաթարող կառույցների աստիճանաբար վերացումը,
- պատմամշակութային հուշարձանների պահպանման և դրանց առավել շահեկան օգտագործման ապահովումը,
- կազմակերպված միջավայրի անհարկի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների վերաբաշխումը,
- տրանսպորտային-հետիոտն ակտիվություն կանոնակարգումը և կարգավորումը,
- բնական այգեպուրակային լանդշաֆտի վերականգնման, պահպանման և հետագա օգտագործման միջոցառումների իրականացումը,
- թանգարանային գործի, հուշարձանների գիտական ցուցադրման, ավանդական արհեստների ցուցադրման արտադրության, զբոսաշրջիկների սպասարկման ու զվագրի հետ կապված հնարավորությունների խրախուսումը:

III-1. Ընդհանուր դրույթներ

III-1.1. Գոտիավորման նախագծի հրավազորությունը

Սույն գոտիավորման նախագիծը՝ հանդիսանալով քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ, ծառայում է որպես քաղաքաշինական գործունեության և հողօգտագործման ժամանակ առաջացող բոլոր հարցերի և վեճերի լուծման հիմնական իրավական միջոց, սահմանելով բնակավայրի փաստացի ու հեռանկարային օգտագործման և կառուցապատման նկատմամբ պարտադիր՝ բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման նպատակով:

III-1.2. Գոտիավորման նախագծի հիմնական նպատակները

- Հասարակության առողջության, անվտանգության և բարեկեցության ապահովումը քաղաքաշինական գործունեության, հողի անվտանգության և կառուցապատման գործընթացների կարգավորման և համակարգման միջոցով,
- քաղաքի զարգացման ընթացքում առողջ և գրավիչ միջավայրի ձևավորման ապահովումը,
- հողօգտագործման տեսանկյունից դասակարգումը ըստ դրանց նպատակային օգտագործման,
- շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանումը,
- քաղաքի կազմավորված, պատմաճարտարապետական արժեք ներկայացնող հատվածների վերակառուցման և վերանորոգման խրախուսումը՝ միջավայրի առանձնահատուկ ճարտարապետական կերպարի պահպանմամբ,
- կազմավորված քաղաքաշինական միջավայրի համապատասխան գեղագիտական քաղաքականության ապահովումը՝ ժամանակից դինամիկ զարգացման հաշվառումով:

III-1.3. Գոտիավորման նախագծի կիրառման բնագավառը

- Գոտիավորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են՝
- քաղաքի տարածքում կատարել վերակառուցողական, շինարարական, վերականգնման, վերանորոգման, բարեկարգման, կանաչապատման աշխատանքների, ինչպես նաև հողերի, առանձին օբյեկտների նպատակային օգտագործմանը և շահագործմանը վերագրվող պահանջները գործնականում իրականացնելու և պահպանելու համար:
- գոտիավորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը կարգավորում են նաև շենքերի և շինությունների ներսում կատարվող գործունեության այն հետևանքները, որոնք ազդում են շրջակա միջավայրի բնականոն վիճակի վրա, այն է՝ աղմուկին, վնասակար արտանետումներին, տրանսպորտային և հետիոտն մեծ զանգվածներ առաջացնող գործունեության տարբեր տեսակների վերաբերվող հատուկ պահանջների սահմանումը և այլն:
- գոտիավորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են նաև կառուցապատման և հողամասերի օգտագործման ինտենսիվություն, շենքերի և շինությունների հարկայնություն, դրանց արտաքին ճակատների ձևավորման, հարդարանքի, գույնի, ցուցանակների, ճարտարապետական փորձ ձևերի տեղադրման համար:

III-1.4. Գոտիավորման համակարգի կառուցվածքը

Գոտիավորման նախագիծը հիմնվում է «ընդունված գոտի-թույլատրելի ձև» սկզբունքի վրա: Նախագծում, ըստ առանձին գոտիների, սահմանվում են հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման տեսակները, որոնց համապատասխանող քաղաքաշինական գործունեություն իրականացման համար լրացուցիչ պահանջներ, քննարկումներ, համաձայնություններ չեն նախատեսվում: Սահմանվել են թույլատրելի տեսակի հետևյալ ձևերը՝

- թույլատրված օգտագործում
- Պահանջները տարբերվում են մեկից մյուս գոտի անցնելիս, բայց հաստատուն են յուրաքանչյուր գոտու ներսում:

III-1.5. Գոտիավորման նախագծի հրավազման հիմքերն են

- բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը,
- ՀՀ բնակավայրերի հատկագծման և կառուցապատման նորմերը,
- Այս արևմտյան շրջանի գլխավոր հատկագիծը,
- ՀՀ գործող օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը

III-1.6. Գոտիավորման նախագծի կարգ գլխավոր հատկագծի հետ

Գոտիավորման նախագիծը քաղաքի գլխավոր հատկագծի իրագործման հիմնական ծրագրային քաղաքաշինական փաստաթուղթն է: Այն անմիջականորեն կապված և համաձայնեցված է քաղաքի գլխավոր հատկագծում նախանշված գաղափարների, զարգացման ուղղությունների, բոլոր տեսակի հողերի նպատակային օգտագործման, կառուցապատման ինտենսիվության և բնակչության տեղաբաշխման իրականացման գործընթացի հետ:

III-2. Տարածքի փաստացի օգտագործման և նախագծային հիմնական բնութագրեր

III-2.1. Սահմաններ

Նախագծվող տարածքի սահմանները համապատասխանում են գլխավոր հատկագծով տրված սահմաններին: Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 486.85 հա:

Գոտիավորման շրջանների (գոտիների) սահմանները

- Նախագծվող գոտիավորման շրջանների (գոտիների) սահմանները որոշվում են հետևյալ կերպ՝
- եթե գոտիավորման սահմանը համընկնում է հողամասի սահմանի հետ, ապա այդ հողամասի սահմանը, համարվում է գոտիավորման շրջանի սահմանը,
- եթե գոտիավորման շրջանի սահմանն անցնում է փողոցով, ճեմուղիով, երկաթգծի ուղիներով, գետով կամ այլ գծային եզրագիծ ունեցող տարածքային միավորներով, ապա գոտիավորման շրջանի սահման է համարվում դրանց առանցքային գիծը,
- եթե գոտիավորման շրջանի սահմանն անցնում է կիսում է ինչ - որ մի առանձին տիրույթ, ապա գոտիավորման շրջանի սահմանը որոշվում է գծագրում բերված համապատասխան եզրագծով կամ հեռավորության կշռումով,
- եթե գոտիավորման շրջանի սահմանների նկարագրի վերաբերյալ այնուամենայնիվ անորոշություն կա կամ տարակարծություններ են հայտնվել, ապա վերջնական որոշումը կայացնում է քաղաքապետարանի գոտիավորումը վերահասկող քաղաքաշինական համապատասխան մարմինը:

III-2.2. Կլիմայական պայմաններ

Նախագծվող տարածքը շինարարական/ինյանական տեսակետից համեմատաբար խոնավ է՝ ցուրտ ձմեռներով և բարեխառն տաք ամառներով: Հունվարի միջին ջերմաստիճանը-41°C, հուլիսի 13-17°C, քամ ռեժիմը-2.5մ/վրկ:

III-2.3. Հողածածկույթ

Նախագծվող տարածքի հողածածկույթը բարենպաստ է կանաչապատման համար:

III-2.4. Ճարտարագիտական արժեքների պայմաններ

Նախագծվող տարածքում առկա են գրունտային ջրեր: Սահքավտանգ տեղամասերը բացակայում են, իսկ հեղեղավտանգ տեղամասերում նախատեսվում են հակահեղեղային միջոցառումներ:

III-2.5. Սեյսմատեխնիկական պայմանները

Ըստ սեյսմավտանգության աստիճանի տարածքը բաժանված է տարբեր գոտիների, որտեղ հաշվարկված գրունտների արագացումները կազմում են 0.25 - 0.35g, որը համապատասխանում է 9 բալի:

III-2.6. Ճարտարագիտական ենթակառուցվածքներ

Բոլոր ենթակառուցվածքները մանրամասն ներառված են վերը նշված համապատասխան բաժիններում:

III-3. Շրջակա միջավայրի պահպանություն

Ապարան քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի մշակման փուլում նախատեսված են միջոցառումներ՝ հողային, ջրային, օդային ավազանների պահպանության համար:

III-4. Գոտիավորման նախագծի կազմը

Գոտիավորման նախագծի կառուցվածքային հիմնական բաղկացուցիչներն են գոտիավորման գծագրական ու տեքստային մասերը: Նախագիծը ներառում է

- գործառական գոտիավորումը՝ հողատարածքների առանձնացումն ըստ գործառական օգտագործման՝ սահմանելով թույլատրելի օգտագործման տեսակները, ամրագրելով ընդհանուր տարածքի մակերեսի նկատմամբ վերջիններիս սահմանային չափաբաժինները,
- ծավալատարածական գոտիավորումը՝ ամրագրելով կառուցապատման բնույթն արտահայտող ցուցանիշները (կառուցապատման խտություն, շենքերի, շինությունների բարձրություն, կառուցապատված և կանչապատ մակերեսների հարաբերակցություն և այլն), տվյալ տարածքում թույլատրելի չափաբաժինների հաշվառումը:

III-5. Գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների) սահմանափակումների հիմնավորումները

